



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

25. 595

333.3(47.92

U-95

33.347.92

Կ-95

15 JAN 2010

Հ. ՄՈՒՍԱՅԷԼԵԱՆ.

14.5

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՀՈՂԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պատմա-սնտեսական փորձ.



Արսասյած «Արարտ» ամսագրից



ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի
1910

300
00-1241

ԱՆԳՐԿՈՎԿԱՍԻ ՀՈՂԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պատմա — օրհանոցական փորձ

✓ Կովկասն Արևելքի ամենաաչքի ընկնող հետաքրքիր երկրներն է մէկն է: Դեռ մի կողմ թողած նրա տնտեսական քաղաքական այն խոշոր նշանակութիւնը, որ ունի Ռուսաստանի համար կամ այն մեծ դերը, որ պիտի խաղայ մօտիկ Արևելքում, որպէս երոսպական քաղաքակրթութեան տարածող, նա մեծ նշանակութիւն ունի և գիտութեան համար: Կովկասն, իր բնական կազմութեամբ, իր խայտարղէտ տարբեր ցեղերի, ազգութիւնների պատկանող ժողովուրդներով, որոնք զարգացման տարբեր աստիճանների վրայ են գտնուում, և սօցիալական առանձնայատուկ սովորութիւններ, կարգեր ունեն, գիտութեանը մատակարարում է ուսումնասիրութեան առատ նիւթ: Գիտութեան շատ ճիւղերի համար — լեզուագիտութեան, աշխարհագրութեան, ազգագրութեան, պատմութեան, իրաւագիտութեան, տնտեսագիտութեան և այլն — Կովկասն ամբարած ունի շատ կարևոր, թանկագին նիւթեր, որոնց մշակելը, կարգի բերելն ահագին օգուտներ կարող է տալ:

Գիտութեան որոշ ճիւղեր — լեզուագիտութիւն, ազգագրութիւն, աշխարհագրութիւն, պատմութիւն վաղուց սկսել են իրենց հարկաւոր նիւթերը ժողովել և ուսումնասիրել. տնտեսագիտութիւնը և իրաւագիտութիւնը մինչև օրս մի տեսակ զանդաղում են, հարկաւոր ուշադրութիւն չեն դարձնում Կովկասի վերայ: Բայց հէնց այս երկու գիտութեան համար Կովկասում կարելի է շատ կարևոր նիւթեր գտնել, որոնց ուսումնասիրութիւնը որոշ տեսութիւնների հիմնաւորման կարող է մեծապէս նպաստել: Կովկասի իրաւական, տնտեսական կեանքը շատ հետաքրքիր կողմեր ունի և ցանկալի է, որ քանի ուշ չէ, դրանք ուշադրութեան առնուեն: Պէտք է շտապել, քանի որ երոսպական քաղաքակրթութիւնը սկսել է մուտք գործել և հինը հետզհետէ ազաւաղոււմ, մնանում է:

Կովկասի իրաւական, տնտեսական կեանքի ուսումնասիրութիւնը բացի տեսականից, ունի և գործնական նշանակութիւն: Յայտնի է, որ Կովկասը վաղուց կարօտէ մի շարք բարենորոգութիւնների. այսօր դրանք արդէն հրամայական պահանջ են դարձել և սրտաարօփ ու անհանգիստ սպասում է, որ դոնէ դրանցից մի քանիսը մօտ ապագայում պիտի իրագործուեն: Այսպէս, գիտատեւոյ մտցնե-

լու խնդիրն արդէն միանգամայն հասունացած է և մօտ է իրականանալուն: Բայց ինչպէս զեմատույ մտցնելը, նոյնպէս և մնացած բարենորոգութիւնները պահանջում են իրաւական—անտեսական կեանքի ուսումնասիրութիւն, որոշ նախապատրաստութիւն, առանց որի դժուար է բարենորոգութիւնների իրագործումը: Դժբաղդարաբայց մասին Կովկասում շատ քիչ են մտածում:

Աչքի առաջ ունենալով Կովկասի անտեսական—իրաւական կեանքի ուսումնասիրութեան տեսական և գործնական խոշոր նշանակութիւնը, և ձեռնարկելով Անդրկովկասի հողային պայմանների ուսումնասիրութեան: Այս ուսումնասիրութեան կմախքը լոյս է տեսել գերմաներէն լեզուով, որպէս գիտերտացիա¹⁾, իսկ աժմ ամբողջը պատրաստ լոյս ևմ ընծայում հայերէն լեզուով:

✓ Կան խնդիրներ, որոնք թէև հին են, բայց միշտ թարմ. կենսական. նրանք ամեն ժամանակաշրջանում հանդէս են գալիս և լուծումն պահանջում: Այդպիսիների թուին է պատկանում և հողային հարցը: Այս ամենակնճառ, բարդ հարցերից մէկն է. ամենահին ժամանակներից սկսած գոյութիւն ունի և շարունակ թէ պետութեան և թէ ազնիւ հայրենասէրների զբաղման, հոգսի սուարկան է եղել: Ներկայումս այս խնդիրն ամենահրատապներից է. տընտեսագիտութեան և սոցիալական քաղաքականութեան մէջ առաջնակարգ տեղ է զբաւում և զբաւ լուծման վրայ աշխատում են համարեա թէ բոլոր քաղաքական կուսակցութիւնները: Հողային հարցը գոյութիւն ունի ամենուրեք, բայց ամեն տեղ նա նոյն բնոյթը չունի: Ըստ երկրի պատմական անդիակի, անտեսական—քաղաքական զարգայման տարրեր է և նրա բնոյթը:

✓ Մարդկային կեանքը շատ մեծ չափով կապուած է հողի հետ. հողը անտեսութեան հիմնաքարն է: Մերնդի միջոցներն և բոլոր հում նիւթերը նա է մատակարարում: Այս իսկ պատճառով հողից օգտուելու խնդիրը անտեսական—սոցիալական կեանքում առաջնակարգ նշանակութիւն ունի: Հողից օգտուելու խնդրի բարեկազմող լուծումից է կախուած մի որ և է ժողովրդի անտեսական—հասարակական—քաղաքական յառաջադիմութիւնը: Գիւղացիութիւնն ամենուրեք ժողովրդի ամենակենսունակ տարրն է. անտեսութեան և թէ առնասարակ կեանքի բոլոր ասպարէզներին ամենաթարմ ուժերը նա է մատակարարում. նա ժողովրդի գոյութեան խարխիւն է: Ժողովրդի յառաջադիմութիւնը, յարատեւութիւնը շատ սերտ կերպով կապուած է գիւղացիութեան գրութեան հետ: Որչափ բարեկեցիկ է գիւղացիութիւնը, նոյնչափ էլ ասպարէզուած է ժողովրդի կուլտուրական յառաջադիմութիւնը:

1) Dr. phil. Heirapet Musaeljan. Die Agrarverhältnisse Transkaukasiens in ihrer geschichtlichen Entwicklung. Leipzig—Borna 1909

Վերջին ժամանակներս Հնորհիւ ինդուստրիալիզմի տարած յաղթութիւնների, անտեսական արտադրութեան շատ ասպարէզներ գրաւելուն, առաջ է եկել այն կարծիքը, որ ինդուստրիալիզմը պետի անպայման արիւր անտեսական արտադրութեան բոլոր ասպարէզներին, զբանց մէջ և գիւղատնտեսութեան: Գիւղատնտեսութիւնը պիտի հետզհետէ կորցնի իր նշանակութիւնը և պրոլետարների դասըն ընկնի: Մի կողմ թողած այս կարծիքի միակողմանիութիւնն ու սխալ հիմքերը, և թէ մի բողէ ընդունենք, որ իրաւ, անտեսական զարգացումը մեզ դէպի այդ է տանում, պիտի ամեն կերպ զբաղէմ կուուել: Գիւղացիութիւնը ոչ մի տեղ մինչև այժմ իր բնական մահով չի մեռել. և եթէ մահացման դէպքեր կան, զբանք եղել են բունի, անբնական և մեծ մասամբ բացասական հետեանքներ են ունեցել: Գիւղացիութիւնը կենարար աղբիւր է. այն երկիրը, որ կորցրել կամ կորցնում է իր գիւղացիութիւնը, նման է հետզհետէ դամաքող աղբիւրին, նրա գոյութիւնը ճակատագրական է: Այս շատ լաւ հասկանում են անգլիացիք. ներկայումս Անգլիայում Հնորհիւ գիւղացիութեան քայքայման, սանդձուել է մի շատ ծանր գրութիւն, որը մեծ հոգսեր է պատճառում Անգլիայի պետական և հասարակական գործիչներին:

✓ Տնտեսական զարգացումը տանում է ոչ թէ դէպի ինդուստրիալիզմի համատարած թագաւորութիւնն, այլ դէպի նդուստրիալիզմի և գիւղատնտեսութեան միացումը, իրար փոխադարձաբար լրացումը: Այս տեսակէտը որոշ երկրներում արդէն իրականանալու վրայ է (օրինակ Ֆրանսիայում, Շվեյցարիայում, Գերմանիայում, Ռուսաստանում և այլն) և ուրիշ երկրներում էլ սկսել են այդ ուղղութեամբ գործել:

✓ Անդրկովկասն իսկական գիւղացիական երկիր է: Բնակչութեան 80⁰/₁₀ է և գեռ էլ աւելին գիւղացիներ են: Գիւղացիութեան այս մեծ տոկոսն ինչ է ասում մեզ, եթէ ոչ այն, որ երկրի բաղդը կապուած է գիւղացիութեան գրութեան հետ: Եթէ գիւղացիութեան գրութիւնը բարեկեցիկ է, այն ժամանակ ասպարէզուած է և երկրի յառաջագիմութիւնը, իսկ եթէ ընդհակառակը գիւղացիութեան գրութիւնն անբաւարար, նոյն իսկ վատ է, վտանգուած է Անդրկովկասի անտեսական—կուլտուրական զարգացումը:

Գիւղացիութիւնը մեզնում շատ քիչ չափով է ուշադրութեան արժանացել և այժմ էլ կանոնաւոր հասկացողութիւն չունինք մեր գիւղացիութեան գրութեան մասին: Յաճախ լուում են ընդհանուր

*) Sbu P. Krapotkin. Landwirtschaft, Industrie und Handwerk. Übersetzung v. G. Landauer. Berlin 1904; Կայ եւ ուստրէն թարգմանութիւնը:

բառեր, «ախ ու վախեր», թէ մեր գիւղացիութիւնը տգէտ, աղքատ, նրա վիճակն անտանելի է և այլն: Բայց դրանք անցնում են առանց ազդեցութիւն թողնելու, անհետանք, որովհետև այդքանը գեղ բաւական չէ, պէտք է կոնկրէտ կերպով ցոյց տալ այն պայմանները, որոնց մէջ գտնուում է մեր գիւղացիութիւնը:

Մեր մտաւոր իրականութեան համար ընդհանրապէս խիստ բնորոշ է այն հանգամանքը, որ մեր մտաւոր գործիչները մեծ մասամբ խոյս են տալիս ծանր աշխատանքից: Մի կողմ թողնելով մեր իրականութեան պահանջները, մի շարք կուտակուած հարցեր, որոնք լուրջ, բազմակողմանի քննութիւն և շուտափոյժ լուծումն են պահանջում, մեր մտաւորականները զբաղւում են երկրորդական, երրորդական խնդիրներով, կամ խօսում, գրում են այնպիսի բաների մասին, որոնք կամ անմարս են և կամ շոտայութիւն են ներկայացնում մեր հասարակութեան համար: Պատճառը շատ պարզ է. քանի կարելի է շատ հեշտութեամբ, առանց քրտինք թափելու անուն վաստակել, էլ ինչու ծանր աշխատանքների յետևից ընկնել: Եւ դժբաղդարար մինչև որ մեր հասարակութիւնը մեծ պահանջներ չանի, մինչև որ կանոնաւոր քննադատութիւնն անհրաժեշտութիւն չըդառնայ, ծանր աշխատանքից փախչելը, մտաւոր ծուլութիւնը մեզնից անպակաս պիտի լինի: Այս հանգամանքը խիստ ծանրակշիռ է և պէտք է այժմանից աշխատել դրա առաջն առնել:

Կովկասն ընկնում է Սև և Կասպից ծովերի մէջտեղը և կովկասեան լեռնաշղթայի երկու կողմերում: Կովկասեան լեռնաշղթան Կովկասը բաժանում է երկու մասի—հիւսիսային կամ մեծ Կովկաս և հարաւային կամ Անդրկովկաս:

Անդրկովկասը բնում է մօտ 217121,38 քառակուսի վերստ տարածութիւն: Նրա սահմաններ են հիւսիսից՝ կովկասեան լեռնաշղթան, հարաւից՝ Տաճկաստանը և Պարսկաստանը, արեւելքից՝ Կասպից ծովը իսկ արեւմուտքից Սև ծովը: Կլիմայական տեսակէտից Անդրկովկասը բաժանուում է երկու մասի՝ արեւելեան և արեւմտեան: Կլիման, շնորհիւ երկրի լեռնային կազմութեան, շատ բազմաառասակ է: Բուսական աշխարհը բաւական հարուստ է և իւր մէջ պարունակում է եւրոպական բոյսերի բոլոր տեսակները սկսած հիւսիսից մինչև Սպանիա և Իտալիա: Կենդանական աշխարհը նոյնպէս նման է եւրոպականին, բայց տեսակներով աւելի հարուստ: Անդրկովկասն ունի և բնական անշափ հարստութիւններ. շատ հարուստ է հանքերով, մանաւանդ մետաղներով, գլխաւոր, հանքերն են՝ արծաթ, արճիճ, մարգանից, քարէ աղ, քարածուխ նաւթ և այլն:

Աշխարհագրական-տնտեսական տեսակէտից Անդրկովկասը ընդհանուր առմամբ բնութիւնից առատ օժտուած է և ի զուր չի

համարւում Ռուսաց թաղի մարդարիտը: Բայց չնայած իր բնական հարստութեան և Ռուսաստանի համար ունեցած սնտեսական-քաղաքական խոշոր նշանակութեան, նա տնտեսապէս-կուլտուրապէս շատ խեղճ, յետամնաց է: Այս պէտք է վերագրել գլխաւորապէս երկու հանգամանքի՝ բնակչութեան բազմազանութեան և կառավարութեան բռնած սխալ քաղաքականութեան: Շնորհիւ ազգերի շատութեան, համերկրային շահերը երկրորդական տեղ են բռնում, ամեն ազգ իր առանձին շահերի մասին մտածում, որոնց պատճառով յաճախ ընդհարում, թշնամանք է առաջանում: Միւս կողմից էլ կառավարութիւնը հետեւելով Ռուսացման քաղաքականութեան, երկրի կուլտուրական—տնտեսական շահերը դրան է ստորագասում, գոհում: Եւ ահա այս երկու պատճառները մինչև օրս էլ երկրի յառաջագիմութեան արգելք են հանդիսանում:

✓ Անդրկովկասը մինչև Ռուսական տիրապետութիւնը երբէք քաղաքական մի միութիւն չի կազմել, այլ միշտ եղել է բաժան—բաժան: Երկրի բնական կազմութիւնը միշտ արգելք է հանդիսացել քաղաքական միութեան և դրա համար ամեն մի մասն իր ուրոյն կեանքը, պատմութիւնն ունի: Անդրկովկասի հիւսիսային մասը հընումը կոչւում էր Իրերիա, արեւմտեանը՝ Կոլխիդա, արեւելեանը՝ Աղուանք, իսկ հարաւայինը կազմում էր հին Հայաստանի մի մաս: Արեւմտեան և հիւսիսային լեռնահովիտներում շատ վաղուց ապրում էին լեզուով և քաղաքականապէս բաժան—բաժան մի շարք մանրիկ ազգութիւններ, որոնք են՝ Արասդեր (Արխագներ), Սուաններ (Սվանետացիք), Լիզիացիք (Լիզիցիներ), Կերկէաներ (Չէրքեզներ) և այլն:

Անդրկովկասն իր պատմութեան ընթացքում հանգիստ, խաղաղ օրեր շատ քիչ է տեսել:

✓ Գտնուելով Ասիայից եւրոպա տանող ճանապարհի վրայ, անյիշատակ ժամանակներից իվեր նա աւերուել, ոտնակոխ է եղել բազմաթիւ վայրենի, բարբարոս և կոլտուրական ազգերից, որոնք Ասիայից եւրոպայ են անցել և կամ ընդհակառակը: «Ասորեստանցիների և բաբելոնացիների զօրքերը, Կիւրոսի և Քսէնոֆոնտի, Միհրդատի և Պոմպէոսի հրոսակները, պարսիկների, արաբների, սելջուկների, Մուսուկուրի, Չինգիզխանի, Թէմիրլէնկի, Ջալալէդդինի և այլոց հորդաները այս երկրում փառք ու աւար են որոնել, ամեն ինչ ասպատակել և հողն արեամբ պարարտացրել: Կուսպաշտ պարսիկները, քրիստոնէայ առաքեալները և Սուհամէդի քարոզիչները սուրը ձեռքերնին իրար յետևից այս կուսակնձոր երկիրն են մտել՝ տարածելու իրանց կրօնը, սովորութիւնները և լեզուն: Շատ սակաւ է տեսել այս երկիրը հանգստութեան և խաղաղ զարգացման կարճատե շրջաններ, և կուլտուրայի ամեն մի արդիւն-

քը, իւրաքանչիւր կարճատև զարգացում, շնորհիւ օտար հորդաների, կրկին արագ կործանուել, ոչնչացուել է»*

Այս տեսակ պայմանների մէջ էր Անդրկովկասը մինչև ուսական տիրապետութիւնը: Ներկայումս հետեւեալ աղմինիստրական բաժանումն ունի.

1. Նահանգներ.—Թիֆլիզի, Բուսայիսի, Սեծովեան, Բաղուի, Գանձակի և Երևանի:

2. Շրջաններ.—Չաքաթալի և Սուխումի:

3. Օբլասներ.—Կարսի, Բաթումի և Դագեստանի:

Անդրկովկասի ազգաբնակչութիւնը բազկացած է բաւականաչափ մանրիկ ազգութիւններից: Ինչպէս երևում է, կովկասեան լեռները դեռ շատ վաղուց ծառայել են հալածուած, փախտական ժողովուրդներին որպէս ամուր ասպատարան, և ազգերի այս բազմազանութիւնը, որ տեսնում ենք այս տեղ, դրա արգիւնք պէտք է համարել: Ներկայումս Անդրկովկասում ապրում են մօտ 40-ի չափ ազգութիւններ: Դրանցից թուական առաւելութեամբ կամ կուլտուրայով աչքի են ընկնում հետեւեալները. հայեր (190/0), վրացիներ (270/0), թուրք-թաթարներ (270/0), օսեալներ (171.068), քրդեր (109-732), լեզգիներ (599,762), թաթեր—թալիշներ (130,347) և այլն: Ազգաբնակչութեան բնդհանուր թիւն է 5967086:

Անդրկովկասի տնտեսական-իրաւական կեանքը ուսումնասիրելիս անհրաժեշտ է ազգերին առանձին, առանձին վերցնել, քանի որ նրանք իրանց կուլտուրական-տնտեսական զարգացմամբ իրարից շատ խիստ տարբերում են: Կան ազգեր, որոնք մինչև օրս էլ ոչնչով աչքի չեն ընկել, ոչ մի քաղաքական ոյժ չեն ներկայացրել (ինչպէս օրինակ Օսեալները, Ավանեաացիք և ուրիշները). կան այնպիսիները, որոնք մինչև օրս էլ մի տեսակ կիսաթափառական-աւազակային կեանք են վարում (քրդեր, թարաքամա, չէքքեղներ և այլն). և վերջապէս կան ազգեր, որոնք պատմական աչքի ընկնող անցեալ և որոշ կուլտուրա ունին (հայեր և վրացիներ):

Այս աշխատութեան մէջ ես ուսումնասիրել եմ այն ազգերի հողային պայմանները, որոնք իրենց թուական շատութեամբ կամ կուլտուրայով աչքի են ընկնում:

Դրանք են՝ հայեր, վրացիներ և թուրք-թաթարներ: Ինչ վերաբերում է մնացած իրքերի ազգերին, նրանց մասին էլ պատշաճ տեղը խօսուած է:

Այս աշխատութիւնը բաժանուած է երեք մասի, և սրա մէջ շօշափուած են հետեւեալ խնդիրները.

*) G. Merzbacher. Aus den Hochregionen des Kaukasus. Bd. I. Einleitung. XXVII—XXVIII.

I Անդրկովկասի հողային պայմանները մինչև Ռուսական տիրապետութիւնը.

1. Հին Հայաստանի հողային պայմանները.

2. Արատանի հողային պայմանները.

3. Անդրկովկասի հողային պայմանները պարսից և տաճկաց տիրապետութեան ժամանակ.

4. Անդրկովկասի լեռնականները հողային պայմանները.

II Անդրկովկասի հողային պայմանները Ռուսական տիրապետութեան տակ.

1. Անդրկովկասի հողային պայմանները կարգաւորումը Ռուսական տիրապետութիւնից յետոյ.

2. Հողատիրական կարգերն Անդրկովկասում.

3. Համայնական հողատիրութիւնն Անդրկովկասում և նրա քննութիւնը.

✓ 4. Հողաւաճառում. ժառանգութիւն և կապալն Անդրկովկասում.

5. Փոխադարձ օգնութիւնն Անդրկովկասի գիւղացիութեան մէջ.

III Անդրկովկասի գիւղացիութեան անտեսական դրութիւնը.

1. Գիւղացիները գլխաւոր պարապմունքները.

2. Գիւղատնտեսութիւն.

3. Գիւղացիները կողմնակի պարապմունքները.

4. Վերջաբան.

Ինչ վերաբերում է ազգերներին, դրանք դժբաղդաբար շատ պակասուոր են, իսկ եղածներից շատերն էլ կամ դժուար ձեռք բերելի են և կամ ցրուած են դանազան թերթերում, ամօտաբերում: Ընդհանրապէս ազգերները շատ պակասուոր են, և նրանց վրայ, և հարկէ, չեն կարելի ամբողջովին հիմնուել և վերջնական եզրակացութիւններ հանել: Այս իսկ պատճառով իմ աշխատութիւնը շատ հեռու է մի լրել, բազմակողմանի ուսումնասիրութիւն լինելուց և կրում է պատմական տեսանկյան փորձի բնոյթ: Աս յուսով եմ, որ ապագայում ինձ կը յաջողուի այստեղ շօշափած խնդիրներն հետզհետէ աւելի հիմնաւոր կերպով մշակել ու մի լրել գործ տալ:

Ազգերներն իրենց տեղը յիշուած են, իսկ աշխատութեան վերջին կը արուի դրանց լիակատար ցանկը:

I

Անդրկովկասի հողային պայմանները Ռուսական տիրապետութիւնից առաջ.

1. Հին Հայաստանի հողային պայմանները.

Անդրհովիտում կուլտուրայէս և անտեսուպէս առաջնակարգ տեղ են բռնում հայերը: Հայերը ծագմամբ պատկանում են արեւական ցեղին և Անդրհովիտի ամենահին բնակիչներից են: Հայ ազգը շատ հին է. նրա ծագումը մինչև այժմ էլ խորին մթութեան մէջ է: Այս տեսակ մի հին ազգի սոցիալական կարգերի, կեանքի ուսումնասիրութիւնն, անշուշտ, մեծ ծառայութիւն կարող էր մատուցանել կուլտուրական և անտեսական պատմութեան: Գծբաղդաբար հայոց պատմութիւնը դեռ կանոնաւոր չի ուսումնասիրուած, շատ կարևոր խնդիրներ դեռ մութ, անորոշ վիճակի մէջ են:

Մեզ այստեղ զբաղեցնող խնդիրը նոյնպէս չի ուսումնասիրուած և պատած է մթութեան թանձր քողով: Թէ Հայաստանում հողային ինչ պայմաններ են սիրելի պետութիւնն ինչպիսի հողային քաղաքականութեան է հետևել, և էլ ուրիշ նման խնդիրներ մինչև օրս չեն վճռուած: Գրա համար հարկաւոր նիւթերը պահաւում են և եղած հատ ու կտոր յիշատակութիւնների վրայ հիմնուած դժուար է վերջնական եզրակացութիւններ հանել: Աչքի առաջ ունենալով այս, ես այստեղ չպէտք է մանրամասն և լիւ կերպով ամր Հայաստանի հողային-պայմանները և պետութեան հողային քաղաքականութեան ճիշտ պատկերը, այլ, պիտի փորձեմ մօտաւորապէս որոշել հին Հայաստանի հողային պայմանները, կարգերը բնականուր դժերը: Հայ ազգի մասին այն բնութանուր կարծիքն է տարածուած, որ նա շատ դիմոկրատ-նահապետական ազգ է և հին հայկական պետութիւնը հիմնուած էր նահապետական-դիմոկրատական սկզբունքերի վրայ: Այս կարծիքին են հայ և օտար ուսումնականներից շատերը: Թէ որքան այդ ճիշտ է, դրա համար պէտք է մեր առաջ պատկերացնենք հին Հայաստանի քաղաքական յերարիւսան:

Հայաստանը, շնորհիւ իր բնական կողմութեան և աշխարհագրական դիրքի, երբէք քաղաքական մի միութիւն չի կազմել: Հայաստանի լեռները, գետերը երկիրը բաժանում են քաղաքներ հովիտների, որոնցից իւրաքանչիւրն իր ուրոյն կեանքն ունէր և խանգարում էր երկրի քաղաքական միութեան ամբողջութեանը: Միւս կողմից էլ արտաքին հանգամանքներն՝ անընդհատ արշաւանքները, պատերազմները, հարևան զօրեղ ազգերի քաղաքականութիւնը թոյլ չէին տալիս կենտրոնական իշխանութեան ուժեղանալու: Եւ շնորհիւ այս ներքին և արտաքին պատճառների, Հայաստանը բաժանուած էր քաղաք-

թիւ մեծ ու փոքր տոհմերի, իշխանութիւնները մէջ. Հայաստանում թէպէտ դոյութիւն ունէր միապետական իշխանութիւն, բայց և այնպէս երկրի շատ մասերը համարեալ թէ անկախ էին. կենտրոնական իշխանութեան կապը նրանց հետ շատ թոյլ էր: Թագաւորական իշխանութեանը երբէք չյաջողուեց տիրել բովանդակ Հայաստանին. նրա անկումից յետոյ էլ, երկրի որոշ մասերը երկար ժամանակ պահպանեցին իրենց անկախութիւնն, ինքնուրոյնութիւնը:

✓ Ինչպէս ամեն տեղ, նոյնպէս և Հայաստանում սկզբում տիրում էր տոհմային կազմը, տոհմապետութիւն: Հայաստանը բաժանուած էր քաղաքներ տոհմերի մէջ, որոնք իրարից անկախ էին: Տոհմապետութիւնը Հայաստանում առանձնապէս աւելի էր զարգացած և երկար կեանք ունեցաւ, շնորհիւ վերև յիշուած պայմաններէ: Թէ տոհմապետութեան շրջանում սօցիալական-քաղաքական ինչպիսի կարգեր էին տիրում, այդ մասին շատ քիչ բան գիտենք: Քսենոֆոնտից տեղեկանում ենք, որ իր ճանապարհորդութեան ժամանակ (401 թ. Ք. ա.) Հայաստանում ժողովուրդը բնակւում էր դիւղերում. դիւղի գլխաւորը, կառավարիչը կոչւում էր կօմարիս, այսինքն տոհմապետ: Ինչպէս ամեն տեղ, նոյնպէս և հայոց մէջ, տոհմապետութիւնը սկզբում նահապետական բնոյթ ունէր: Տոհմապետը տոհմի հետ արեւնակցական կապ ունէր: Թէև նրա իրաւունքները մեծ մասամբ բացարձակ էին, բայց նա կառավարում էր հայրաբար: Տոհմի մէջ տիրում էր համայնակեցութիւն. ամենքը համարւում էին մի ընտանիքի զաւակներ: Այս դրութիւնը տևել է մօտաւորապէս մինչև III-րդ դարու վերջերքը: (Ք. ա.): Արաշխատի և Զարիադրէտի ժամանակ տոհմապետութիւնն արդէն որոշ չափով փոխել է իր բնոյթը. տոհմին պատկանողները բոլորը այլ ևս անխտիր մի ընտանիքի անդամ չեն համարւում, այլ առաջ է եկել որոշ դասակարգութիւն: Այս աւելի զարգացած դանում ենք Տիգրան Մեծի ժամանակ. Կօմարիսներն այլ ևս տոհմապետներ չեն, այլ իրենց իշխանութիւնը տարածելով հարևան ցեղերի-տոհմերի վրայ, տոհմապետութիւնից անցել են իշխանութեան. նրանք այլ ևս կօմարիսներ չեն կոչւում, այլ «սարատէգներ» և նրանց թիւը Տիգրան Մեծի օրօք հասնում էր մօտ 120-ի 1):

✓ Արշակունեաց հարստութիւնը հաստատուելով Հայաստանում, սարատէգները իրաւունքները ճանաչեց: Նրանք այնուհետև սկսեցին կոչուել նախարարներ: Թէ ինչ է նախարար-

4) Н. Адонцъ, Армения въ эпоху Юстиніана. 1908 г. стр.

բար խօսքի իմաստը մինչև օրս դեռ վերջնականապէս չի պարզուած ¹⁾: Նախարարները, ինչպէս հայ պատմագիրները վկայում և նոր հետազօտութիւններն ²⁾ էլ հաստատում են, իրենց ծագումն առնում են մեծ մասամբ տոհմապետներից (ստրատէգներից): Բայց կային և այնպիսիները, որոնց թագաւորն էր նշանակում: Ըստ Կ. Կոստանեանի ³⁾ տոհմապետներից սերւող նախարարները կոչւում էին աւագ, իսկ թագաւորից նշանակուածները՝ կրտսեր նախարարներ: Այս կարծիքը բաւական վիճելի է. աւագ և կրտսեր որոշումները գուցէ սկզբում այդ նշանակութիւնը ունեցած լինեն, բայց յետագայում աւելի շուտ ցոյց են տալիս նախարարութիւնների ունեցած գերքը, ուժը պետութեան մէջ:

Սրբազանեաց թագաւորութիւնն արեւելեան բացարձակ միապետութիւն էր: Թագաւորը «երկրի բնիկ տէրն» էր, նրա կամքն օրէնք էր, նա իր հպատակներին կենսելի, մահու, ստացուածքի տէրն էր ⁴⁾։ Բայց այս ամենը միայն սկզբունքով էր. իսկ փաստօրէն Սրբազանի թագաւորները շատ թոյլ էին: Գրան մեծ չափով նպաստում էին, ինչպէս քիչ վերև յիշուեց, հարեան զօրաւոր տէրութիւնները և նախարարական հաստատութիւնը: Նախարարութիւնը սկզբից մինչև վերջ թշնամարար էր արամազրուած դէպի թագաւորութիւնը. շարունակ լսանգարում, արդէլք էր հանդիսանում զօրեղ կենդրոնական իշխանութեան առջանադուր: Պետութիւնն Սրբազանեաց ժամանակ թէև համարում էր ամբողջացած, բայց իրօք բաժանուած էր բազմաթիւ մանրիկ իշխանութիւնների, որոնք կենտրոնականից այնքան էլ մեծ կախումն չուէին: Թէ որքան թոյլ էր թագաւորութիւնը և որքան անկախ էին նախարարներն, այդ պարզ երևում է նախարարների բանեցրած և թագաւորութիւնից ճանաչուած մի շարք իրաւունքներից:

Ըստ մեր պատմագիրների հազորդած տեղեկութիւնների

1) Պրոֆ. Կ. Մարրը նախարար խօսքի ծագումը համարում է պարսկական եւ ըստ նրա՝ նշանակում է «գաւառի պիսար»՝ Տես. И. Джаваховъ. Государственный строй древней Грузии и древней Арменіи. 1903 թ. Կր. 129.

2) Н. Адонцъ а. а. О. Կր. 211—497. В. Chalatzanz, Der Ursprung der armenischen Fürstentümer in der Wiener Zeitschrift für die Kunde des Morgenlandes. Bd. 17. Կր. 60—69.

3) Կ. Կոստանեան. Հիւսուածք. Գիրք III Կր. 29.

4) Գարագաշեան. Բնական պատմութիւն Հայոց. մասն Բ. Կր. 2—6. Ղ. Ինճիճեան. Հնախօսութիւն Հայաստանեաց. Հատոր Բ. 07—95.

նախարարները հետևեալ իրաւունքներն ունէին (Սրբազանեաց ժամանակ ¹⁾):

1. Եշխել իրենց ձեռքի տակ գտնուող երկրների վրայ: Նրանք տէր էին «աշխարհի», «նահանգի», «երկրի» և այլն:
2. Իրենց իշխանութեան տակ գտնուող ժողովրդի դատերը տեսնել: Թագաւորները նրանց դատական գործի մէջ չէին խառնուում:

3. Հպատակ ժողովրդից հարկեր. տուրքեր առնել:
 4. Սեփական զօրք պահել:
- Թագաւորի վերաբերմամբ նախարարները հետևեալ պարտականութիւններն ունէին.

1. Թագաւորին զօրք տալ պատերազմի ժամանակ:
2. Թագաւորին հարկ տալ: Այս վերջինը բոլոր նախարարներին համար պարտաւորեցուցիչ էր, և չաալը համարոււմ էր ապաստամբութիւն:

Նախարարների համարեա թէ մեծ մասը կենտրոնական իշխանութեան, թագաւորութեան գործերի մէջ մասնակցութիւն չուէին. բայց կային և այնպիսիները, որոնք որոշ համապետական պաշտօններ էին վարում. օրինակ՝ սպարապետութեան, թագազրութեան և այլն:

Նախարարների թուի մասին կան բաւական հակասական տեղեկութիւններ: Փաստոս Բիւզանդը նախարարներին թիւը համարում է 900, իսկ Ստեփաննոս Սրբելեանը 400: Ըստ Ա. Գոնցի ուսումնասիրութեան, այդ թուերը չափազանցեցրած են. նախարարների թիւը պէտք է եղած լինի ամենաշատը 120:

Նախարարական իշխանութիւնը ժառանգական էր. ժառանգում էր տոհմի աւագը, իսկ թագաւորը պէտք է հաստատէր: Նա, որի ձեռքում գտնուում էր տոհմի նախարարութիւնը, կոչւում էր տանուաէր կամ նահապետ, իսկ տոհմին պատկանող մնացած անդամները կոչւում էին սեպուհներ: Երկրի կառավարութիւնն ամբողջովին գտնուում էր աւանտաէրի ձեռքում. Սեպուհները կառավարութեան (նախարարական) չէին մասնակցում և տոհմի կալուածներն էլ բաժանուած չէին: Միայն Սրբազանեաց անկումից յետոյ, սովորութիւն է դառնում կալուածքները բաժանել սեպուհների մէջ, որով և սեպուհները ժողովրդի վրայ որոշ իշխանութիւն են ձեռք բերում:

Սրբազանեաց թագաւորներից ոմանք (Տիրան Բ. Սրբակ Բ. Պապ) խօրը զգալով նախարարական հաստատութեան վնասա-

1. Գարագաշեան. Բնական պատմութիւն Հայոց. մասն Բ. Կր. 2—6. Ղ. Ինճիճեան. Կնախօսութիւն Հայաստանեաց. հատոր Բ. Կր. 87—95.

կարութիւնը, տեսնելով՝ որ նախարարները շարունակ խանդարել են հանդիտանում համապետական ծրագրերի իրագործմանը, մեծ չափերով նպաստում են թագաւորութեան թուլութեան՝ փորձել են նախարարները իրաւունքները կրճատել և նոյն իսկ շատ նախարարական աներ ոչնչացրել, բնաջինջ են արել: Բայց նրանց ընդհանուր առմամբ չյաջողուեց խորտակել նախարարները ուժը. վերջիններս մնացին ակեր իրանց իրաւունքները:

Նախարարների ունեցած իրաւունքներից և պարտաւորութիւններից երևում է, որ Հայաստանում Արշակունեաց ժամանակ տիրում էր աւատական կարգ (Ֆէօդալիզմ): Նախարարներն, ըստ երևոյթին, նոյն են՝ ինչ որ եւրոպական սենեօրները: Եւրոպական սենեօրները, ինչպէս յայտնի է, իրենց կալուածքները ձեռք էին բերել կամ նուաճմամբ, ժառանգութեամբ, գնելով և կամ թագաւորից որպէս աւատ էին ստացել: Թագաւորից ստացած հողերը կոչւում էին Ֆեօդ, Լեն, (Feod, Lehn) իսկ մնացածներն Ալլօդ (Allod): Հայաստանում էլ նախարարներն իրենց կալուածքները ձեռք էին բերել նուաճմամբ, ժառանգաբար, գնելով և կամ էլ թագաւորից ստացել էին որպէս պարգև միայն ժառանգութեամբ ձեռք բերուածներն աւելի շատ էին: Ժառանգութեամբ ձեռք բերուած կալուածքները կոչւում էին «հայրենիք» փողով գնածը՝ «քսակազին», իսկ թագաւորից ստացածը՝ «պարգևականք»:

Սենեօրների և նախարարների իրաւունքների մէջ թէև որոշ տարբերութիւններ կան, բայց ընդհանուր գծերով նման են: Այստեղ ամենից հետաքրքիրն այն խնդիրն է, թէ արդեօք նախարարները ժողովրդի վրայ նոյն իրաւունքներն ունէին, ինչ որ սենեօրները:

Քանի տիրում էր տոհմապետութիւնը, տոհմապետի և տոհմին պատկանողների յարաբերութիւնը ընտանեկան-ազգակցական էր: Տոհմապետը կառավարում էր որպէս հայր, տոհմի մէջ սօցիալական որոշ անհաւասարութիւն գեռ գոյութիւն չունէր. տոհմը բոլոր անդամներն իրար հաւասար, նման իրաւունքներ ունէին: Մեծանալով տոհմը և նոր երկրներ (հողերի) տիրանալով, տոհմի կազմի մէջ առաջ է գալիս որոշ փոփոխութիւն: Տոհմապետի եշխանութեան տակ գտնուողներն այլևս անխտիր իրար հաւասար չեն. տոհմին պատկանողների և նոր ձեռք բերուած երկրների բնակիչների մէջ որոշ տարբերութիւն է գրւում. առաջինները գերադասուում են, աւելի շատ իրաւունքներ ունին: Մեր պատմիչները հազորգած անդեկութիւններից իմանում ենք, որ հասարակ ժողովուրդը Հայաստանում

սկզբում բաժանուած էր երկու կարգի— շինականների և դեղջուկների: Շինականները նրանք են, որոնք տոհմապետի հետ արևնակցական—ազգակցական կապ ունին. իսկ դեղջուկները տոհմի նուաճած երկրի բնակիչներն են և ստորագրուած են շինականներին, աւելի շուտ տոհմապետին: Շինականներ և դեղջուկներ բաժանումը գոյութիւն ունէր և Արշակունեաց ժամանակ: Շինականներն ազատ էին, ունէին իրենց քաղաքական անկախութիւնը և միաժամանակ չէին ենթարկւում նախարարներին: Արշակունի թագաւորներն իրենց հրովարտականքում նախարարների հետ միասին յիշում են և շէներին (շինացիներին), որպէս քաղաքական անկախ միութիւններ¹: Գեղջուկներն ընդհակառակը ենթարկւում էին թագաւորին կամ նախարարներին: Բայց նրանց գրութիւնն էլ այնքան ծանր չէր, նրանք ունէին շարժական և անշարժ սեփականութեան իրաւունք: Պէտք է նկատել, որ Հայաստանում ստրկութիւնը ընդհանրապէս խոր արմատներ չի ձգել և պատմութիւնից գիտենք, որ շատ դերեր, անազատներ հետզհետէ նոյն իրաւունքներն են ձեռք բերել, ինչ որ շինականներն ունէին²:

Նախարարներին սկզբում պատկանում էին գիւղերը, տիրապետական իրաւունք միայն դրանց վրայ ունէին, իսկ շէներն ազատ, անկախ էին: Բայց հետզհետէ շինակները բախտակից են դառնում գեղջուկներին: Նախարարներն ուժեղանալով, շատ հողեր ձեռք բերելով իրենց տիրապետութիւնը տարածում են և շէների վրայ. իրենց յայտարարում են երկրի տէր: Թէ ինչի մէջ էր կայանում այդ տէրութիւնը, ժողովուրդն գէպի նախարարներն ինչ պարտականութիւններ ունէր, յայտնի չէ:

Արշակունեաց ժամանակ երեք տեսակ գիւղացիութիւն գոյութիւն ունէր.— 1. պետական—թագաւորական, 2. եկեղեցական և 3. նախարարական: Պետական գիւղացիները, ըստ երևոյթին, կոչւում էին ազատ գիւղացիներ: Գիւղերի գլխաւորն էր հաղարապետը, որը մեծ մասամբ հարկեր էր ժողովում: Գիւղերի վրայ հսկում էին գործակալները, իսկ գիւղի կառավարին էր գիւղապետը կամ դատապետը³: Թէ արշակունեաց ժամանակ ինչ տեսակ հարկեր գոյութիւն ունէին, ճշտութեամբ

1) Բահաթրեան—Անճնական եւ յողային իրաւունքը ինչ Հայաստանում. եր. 48—50.
 2) Գարագաշեան ա. ա. Օ. Բ. մաս եր. 10, Բահաթրեան ա. ա. Օ. եր. 42.
 3) Н. Адонцъ—а. а. Օ. եր. 484.

յայտնի չէ: Ըստ Ն. Ազոնցի պէտք է նոյն հարկերը եղած լինեն, ինչ որ Պարսկաստանում: Մեր պատմագիրներից եղել է պարսկից ակրապետութեան ժամանակ յիշում է հեռակեալ հարկերը. մուտ, սակ, բաժ և հաս: Ն. Ազոնցը մուտը համարում է սակի բացատրութիւնը, իսկ հասը՝ բաժի: Սակ և բաժ խօսքերը պարսկական ծագում ունին: Բաժը պէտք է հողային հարկը եղած լինի, իսկ սակը՝ գլխահարկ: Բացի սրանցից, գոյութիւն ունէին և ուրիշ հարկեր. այսպէս օրինակ՝ կառ և բեկառ: Առաջինը պէտք է համարել անձնական ծառայութիւն, իսկ երկրորդ՝ բնական բերքերի տուրը: Պարսկից ակրապետութեան ժամանակ հայերից վերցնում էին և անտառները, արօտատանգիները, լեռները և ուրիշ հարկեր: Պէտք է ընդունենք, որ Արշակունեաց ժամանակ ունի հարկերն էլ գոյութիւն ունէին: Ընդհանուր առմամբ պետական գեղացիների դրութիւնը պէտք է այնքան էլ ծանր եղած չլինի. նրանք հարկ էին վճարում մեծ մասամբ պետութեան և մասամբ էլ եկեղեցուն:

✓ Հողերը դատը Հայաստանում թէ հեթանոսութեան և թէ քրիստոնէութեան ժամանակ մեծամեծ կալուածների, հարստութեան տէր էր: Հեթանոսութեան ժամանակ քրմերը իշխանների նման ունէին կալուածքներ և զօրք (Գեմիտը և Արձան քրմապետների կախն ընդդէմ Ա. Գրիգոր Լուսաւորչի): Քրիստոնէութեան ժամանակ էլ հողերը դատը մեծ հարստութիւններն տէր էր: Եկեղեցուն հողեր էին նուիրել ոչ թէ միայն թագաւորները, իշխաններն, այլ և ուրիշ բարեպաշտ անձինք: Միաժամանակ հոգևորականութեան կալուածքներն այնքան մեծ չափերի էին հասել, որ նոյնիսկ թագաւորները, իշխանները նախանձում էին: Թէ որքան կալուածքների տէր էր հոգևորականութիւնը, դրան փաստ կարող է ծառայել այն, որ միայն Լուսաւորչի տոհմը մօտ 50 դաւառ ունէր 1: Եկեղեցու, հոգևորականութեան կալուածքների վրայ բնակիւող գեղացիների դրութիւնը բաւական թեթեւ էր. նրանք պետական հարկերից ազատ էին և եկեղեցուն վճարում էին տասանորդ. ընդհանրապէս ամենից բարեյաջող պայմանների մէջ էին գտնուում եկեղեցական գեղացիները: Հողերահանները բոլոր գեղացիներից վերցնում էին և եկեղեցական տուրք (պտուղ): Այդ տուրքն տեսակը և չափը դժբախտաբար յայտնի չէ: Մովսէս Կաղանկայտուացու պատմութեան մէջ կոչ մի յիշատակութիւն, որն այդ խնդրի վրայ բաւական լոյս է սփռում: Կաղանկատուացին յայտնում է, որ Աղուանից եկեղեցական ժողովը Վաչագան

1) Փաւստոս Բիզանդ գ. Ժ. Գ.



թագաւորի օրօք 1) հեռակեալ տուրքերն է որոշել համար. «Պտուղը ի ժողովրդին է երեցուն՝ կարգն թուանին չօրս գրել ցորեան, վեց գրել դարի և վեշափան փաս քաղցու. և որ տառապեալն է գհացիդ կէսն տայէ՝ և գինի՝ որչափ կարողն իցէ. իսկ որոյ վար և այգի ոչ է, մի տայցեն: Եւ որոյ ոչխար է ի տան՝ ոչխար մի և երեք դգար բուրդ և մեկ պանիր և ոյր ձիք ի տան իցեն՝ մին յովանակ և ոյր պանրէք իցեն՝ որթ մի 2»:

✓ Նախարարական գեղացիները մասին տեղեկութիւններ համարեա թէ չկան: Շատ հետաքրքիր է իմանալ, թէ գեղացիները նրանց ինչ հարկեր էին վճարում և արդեօք անձնական ծառայութիւն, ճորտութիւն այդ ժամանակ գոյութիւն ունէր, թէ ոչ: Հարկերի և տուրքերի վերաբերմամբ պէտք է ընդունենք, որ նախարարները նոյն հարկերն էին ստանում, ինչ որ եկեղեցին և թագաւորը, միայն աւելի շատ չափով, որովհետեւ նախարարները իրենց կողմից թագաւորին հարկ էին վճարում: Այս պատճառով էլ նախարարական գեղացիները համեմատօրէն աւելի աննպաստ պայմաններն մէջ էին: Գուրնի Գ. ժողովի 11-րդ կէտից երևում է, որ նախարարները ի միջի այլոց և կենդանիների, ուտելիքի և խմելիքի հարկ էլ էին առնում. «Ոմանք ի աղափայ ի վերա տկարանոցաց իշխանութիւն առնեն, և որպէս ի կենդանեաց հարկս պահանջեն, և ի կերակուրս և բմպելիս իւրեանց գործակալս մատուցանեն կուռով և պտուհատիւ նեղեն և զողորմելի եղբարոն չարչարեն անխղճաբար 3»:

✓ Արդեօք բացի հարկերից նախարարական գեղացիներն անձնական ծառայութիւններ էլ էին կատարում. յայտնի չէ: Մեր պատմիչներն այդ մասին ոչինչ առանձին չեն յիշատակում: Պէտք է ընդունենք, որ Հայաստանում համարեա թէ նոյն կարգերն էին տիրում (գեղացեական), ինչ որ հարեան Պարսկաստանում և Բիւզանդիայում: Արեւելքում, ինչպէս յայտնի է, Ֆէօդալիզմն այնպիսի չափերի չհասաւ, ինչպէս Արեւմուտքում: Արեւելքում Ֆէօդալիզմը համեմատօրէն աւելի մեղմ էր. գեղացիութեան գրութիւնն այնքան էլ ծանր չէր, իսկ ճորտութիւն եւրոպական մտքով գոյութիւն չուներ: Հայաստանում էլ Արշակունեաց ժամանակ կալուածատիրութիւնը և դրա հետ

- 1) Մեկիր-Թանգեան. Հայոց եկեղեցական իրաւունքը եր. 402. ա. զիրք.
- 2) Մովսէս Կաղանկայտուացի-պատմութիւն Աղուանից աշխարհի. Մոսկուա 1860. եր. 66.
- 3) Մեկիր-Թանգեան a. a. O. եր. 403 ա. զիրք.

կապուած ճորտատիրութիւնը գոյութիւն չունէին: Նախարարութիւնը, ունենալով ընդարձակ հողեր, բաւականանում էր զբանց եկամտով և չունէր այն ձեռն մասնաւոր—սեփական տնտեսութիւն, որ տեսնում ենք Արեւմուտքում: Նախարարները համարում էին հողի տէրը և փոխարէն գիւղացիներէն ստանում էին որոշ հարկեր և տուրքեր: Գիւղացիները կախումը նախարարներէն տնտեսապէս այնքան մեծ չէր. անձնական ծառայութիւններ մասնակի ընդթ էին կրում, այնքան տարածուած չէին: Կարելի է ասել, որ Հայաստանում այդ ժամանակ նոյն հողատիրական կարգերն էին տիրում, ինչոր օրինակ՝ միջին դարերում հարաւարեմտեան և միջին Գերմանիայում: Գերմանիայի այդ մասերում գիւղացիք որոշ չափով ազատ էին և միմյայն հարկեր և տուրքեր էին վճարում հողատէր իշխաններին:

Բագրատունեաց ժամանակ Հայաստանի քաղաքական—սոցիալական կեանքը խոշոր փոփոխութիւններ չի կրում: Ամեն ինչ հիմնուած էր հնի վրայ, միայն որոշ տարբերութեամբ: Բագրատունեաց թագաւորութիւնը թէ ընդարձակութեան և թէ ուժի կողմից համեմատօրէն յետ է Արշակունեանից: Նախարարութիւնն Արշակունեաց անկումից յետոյ բաւական փոփոխութիւններ է կրում: Նախարարութիւնները նախ՝ սեպհական իրաւունքի հիման վրայ բաժանուել, մանրացել էին և երկրորդ՝ պարսից և արաբացոց տէրութիւնները շատ նախարարութիւններ ոչնչացրել կամ ուժասպառ էին արել: Բայց չնայած սրան նախարարութիւնն իր առաջուայ դիրքից շատ բան էր պահել: Բագրատունեաց ժամանակ էլ նրանք աչքի ընկնող ուժ էին ներկայացնում և զարձեալ խանգարում էին թագաւորութեան ուժեղանալուն: Բագրատունեաց թագաւորներն էլ բռնի միջոցներէն էն զիմում նախարարութեան զսպելու համար, բայց յաջողութիւն չեն գտնում: Բագրատունեաց ժամանակ թագաւորը համարում էր երկրի տէրն ու անօրէնը. նա բացարձակ, միահեծան տէր էր: Թագաւորն իրաւունք ունէր ընդհանուր հարկեր նշանակելու: Նախարարներն թագաւորի վաստակներն էին և որոշ աւատական կախման մէջ էին: Նրանք պէտք է զօրք տային և հարկ: Առաջինն այնքան խստիւ չէր պահանջում, իսկ հարկ չըսալը համարում էր սպտամբութիւն: Թագաւորն իր կողմից պէտք է պաշտպանէ նախարարներին, կռուող կողմերին հաշտեցնի և նրանց չարագործու-

1) Ղ. Ինճիմեան. Հնախօսութիւն հատոր Բ. եր. 87.
2) Ղ. Ինճիմեան a. a. O. հատոր Բ. եր. 87.

թիւնները պատժի: Իրենց իշխանութեան տակ գտնուած երկրները վրայ նախարարները մեծ իրաւունքներ ունէին. հարկ առնել, զօրք առնել, դատերը տեսնել և այլն: Իրենց իշխանութիւնն անցնում էր ժառանգաբար: Ամենազօրեղ և աչքի ընկնող նախարարութիւններն էին Արժրունեաց և Սիւնեաց¹:

Չնայած Բագրատունեաց շրջանը ժամանակով աւելի մօտ է և շատ պատմագիրներ ունի, բայց դարձեալ այն ժամանակուայ սօցիալական կարգերի, ժողովրդի դրութեան մասին շատ քիչ տեղեկութիւններ կան: Մեզ այստեղ ամենաառաջին տեղը հետաքրքրում է այն խնդիրը, թէ գիւղացիութիւնն այդ շրջանում ինչ դրութեան մէջ էր: Ինչպէս մեզ հասած սակաւ և կցկաուր յիշատակութիւններից երևում է, Բագրատունեաց ժամանակ գիւղացիութեան դրութիւնը համեմատօրէն բաւական վատացել էր: Մխիթար Գօշի դատաստանագրքից իմանում ենք, որ Հայոց մէջ նրա (և Բագրատունեաց) ժամանակ հետեւեալ դասակարգութիւնը գոյութիւն ունէր (բացառութեամբ հոգեւորականութեան). իշխաններ (նախարարներ), ազատներ, շինականներ, գեղջուկներ և ագարակի բնակիչներ²: Այս շրջանում շինականները և գեղջուկները մէջ խոշոր տարբերութիւն չըկայ և ըստ երեւոյթին նոյնն են իսկ ագարակի բնակիչներն աւելի ցածր են: Ինչպէս առաջ, նոյնպէս և այս շրջանում երեք տեսակ գիւղացիութիւն կար. թագաւորական, եկեղեցական և նախարարական: Եկեղեցական գիւղացիները հնուց նշանակուած առսանորդն էին վճարում և նրանց դրութիւնը բաւական բարւոք եղած պիտի լինի: Թագաւորը և իշխանները (նախարարները), ըստ Մխիթար Գօշի, ժողովրդից պէտք է հետեւեալ հարկերն առնէին. «Իսկ զհարկս դաւառաց և աղբաց թագաւորը և իշխանը արդարութեամբ աւուցեն. մի ինչ աւելի քան զառաջնոցն սովորութիւնս կալցին, զի ընդ ամենայնի համարս ունին տալ, զի յԱստուծոյ կարգեցին ի պահպանութիւն և ի իրկութիւն աշխարհի և ոչ ի կործանում: Եւ արդ՝ այսպէս լիցի: Զանտաստանայն զհինգերորդ մասն աւուցեն, որպէս Յովսէփ օրինադրեաց յեղիպտոս, զի յորժամ սաացաւ գերկերն Փարաւոնի, յայնժամ զհինգերորդն կարգեաց. յայտ է զի նախ ինքեանցն էր ժառանգութիւն և ոչ էր հինգերորդ, այլ հայրենի կտուր սակաւ: Սոյնպէս և այժմ լիցի. զի արձաթա-

1) Dagbasclean, H. Qründung des Bagratiden Reiches durch Aschot Bagratuni. Berlin 1893, եր. 78—79.
2) Մխիթար Գօշի Դատաստանագիրք Հայոց. 1880 թ. եր. 517—518.

գին անգատտան և այգեոտան և բուրաստան մի լիցին ընդ հարկաւ (հնդեկի), նմանապէս և ջրադայ և աուն և խանութ: Այլ թէ բնակիչքն ընդ արուեստի և կամ ընդ վաճառի հարկիցն, զի ոչ է հարկ դիտոյ քրիստոնէից, բայց այլազգեաց՝ յորժամ բռնի ընդ հարկաւ արասցին: Բայց անգատտանք ջրաբեք լիցին ընդ հնդեկաւ, այլ ոստինք տասանորդեացին. զի հող միայն է թագաւորի և իշխանի, և ոչ ջուր. սոյնպէս ոստինք, այգեք և ծառաստանք:

Այսպէս և յաւուրս շաբաթու յեօթնէ մին գործիցի իշխանին և տէրունի. այլ աւելի աշխատելն զձեռամբ անկեալն անիրաւութիւն մեծ է, եզին առանձինն այլ հարկ մի լիցի, զի այն իսկ է զոր աշխատեալ հնդեկի:

Կովու լիտը եղն միայն լիցի:

Արօտի այլ հարկ մի լիցի, զի այն իսկ են արօտականք որ հարկին:

Այլաբք ի գատին տասանորդեացին. թէ հաճոյ իցէ տէրունեացն՝ ընդ ոչխարի լիտանակիցէ ըստ արժանւոյն:

Չիոյ և ջորոյ և իշոյ մի լիցի հարկ, զի նորօք բազում անգամ ծառայէ զտէրունին:

Վ առբեմուտս ըստ կարի ծառայեցէ և յաւուրս տօնից: Մի լիցի: Մի լիցի չէբուչէք բազում. այլ չեք լիցին անիրաւ սովորութիւնքն, զի և սահմանք բազում և յաւելորդ սովորութեանց եղև 1): Այս քաղուածքը որոշ հասկացողութիւն է տալիս գիւղացիները գրութեան մասին: Հոյն, ինչպէս Գատաստանագիրքն է ասում, պատկանում է իշխաններին և թագաւորին և փոխարէնը գիւղացիք պէտք է ոչ թէ միայն թուած հարկերը վճարեն, այլ և մի շարք անձնական ծառայութիւններ կատարեն: Գատաստանագիրքի թուած հարկերը հաստատում են Անիի արձանագրութիւններն, այնպէս որ ճշտութեան մասին կատարած լինել չի կարող: Անիի արձանագրութիւնները յիշում են ի միջի այլոց և հետևեալ հարկերը.— Նպիտիոպոսի հարկ, դռնագիրք, ոչխարի հարկ, ջրազացի հարկ, այգու հարկ, բաժ(?) բամբակի հարկ, տասանորդ, կնիքի հարկ, կենդանիները հարկ, եկեղեցիները հարկ և այլն 2):

Վ այս հարկերից երևում է, որ գիւղացիք բաւական ծանրաբեռնուած էին և բացի այդ, պարտաւոր էին մի շարք անձնական ծառայութիւններ կատարել: Թէ ինչ չափի էր հասնում վերջինս, դժբախտաբար ճշգրիտ տեղեկութիւններ չկան:

1) Մխիթար Գօշ ա. ա. Օ. եր. 514—516.
2) Ալիշան Շիրակ եր. 49.

Այսպէս գիւղացիութեան դրութիւնը Բագրատունեաց շրջանում շատ ծանր էր, և այդ բացատրում է նրանով, որ այդ ժամանակ առաջ էր եկել որոշ կալուածատիրութիւն, այսինքն՝ աղնուահանները սեփական գիւղատնտեսութիւն ունէին և իրենց կալուածները վրայ աշխատեցնում էին գիւղացիներին: Նոյն իսկ թագաւորն էլ ունէր իւր սեփական անտեսութիւնն. այսպէս՝ խաղողի այգիներ, ոչխարի և եղջիւրաւոր անասունները հօտեր և այն 1):

Վ այժմ մի հարց է ծագում. Բագրատունեաց ժամանակ ճորտատիրութիւն մեր մէջ գոյութիւն է ունեցել: Մխիթար Գօշի Գատաստանագիրքը գիւղացիները մասին հետևեալն է ասում. «Ազատ յԱրարչէն եղև մարդկային բնութիւն, այլ ծառայել տէրանց յազազս պիտոյից եղև հոգոյ և ջրոյ: Եւ զայս պատշաճ կարծեմ դատաստան.— զի թողեալ զտէրունին ապատ է ուր և կամեսցի կալ: Ապա թէ այսմ ոչ ներէ որ ի տէրանց եւ բռնադատէ զգնացեալն անդրէն դառնալ, զինի մահուան հօրն ազատ են որդեք ծնեալք այլուր և ոչ անդ 2): Ինչպէս այս, նոյնպէս և մի քանի ուրիշ տեղեկութիւնները վրայ հիմնուած կարելի է ասել, որ եթէ ճորտատիրութիւն, եւրոպական մտքով, մեր մէջ գոյութիւն չի ունեցել, բայց գիւղացիութիւնը մի այնտեսակ գրութեան մէջ է եղել, որ ճորտականից հետու չէ: Այդ երևում է թէ հարկերի շատութիւններից և թէ գիւղացիները կատարած մի շարք ծառայութիւններից: Գիւղացիների գրութիւնն այնքան վատացել, ծանր էր, որ նոյնիսկ ապստամբութեան ժամանակն արեւելքն Անի պատմագիրները Յովհաննէս կաթողիկոսը յիշատակում է այդ տեսակ մի դէպք, թէ ինչպէս գիւղացիները նեղուելով իրենց ծանր վիճակից և օգտուելով երկրի խառնակ գրութիւնից (916 թ.), ապստամբուեցին իրենց տէրերի դէմ: Յովհաննէս կաթողիկոսն այդ հետևեալ կերպով է նկարագրում. «Նուազունքն քան զմեծամեծսն ձեռներէց լինել ջանային, և ծառայք ըստ Սողոմոնի հնարէին, զի տեարս արեխաւորեալ ի դեանի գնացեն և ինքեանք ելցեն յերկաբս ահիպարանոցս և առաթուր հարողս՝ խրոխտացեալք և սոնքացեալք մեծաւ ապստամբութեամբ 3):

Այս ամենից յետոյ, հետաքրքր է պարզել մի կարևոր

1) Dagbaschean, H. a. a. O. եր. 102.
2) Մխիթար Գօշի Գատաստանագիրք եր. 520.
3) Յովհաննէս կաթողիկոս. Պատմութիւն Հայոց. Մոսկուա 1855 թ. եր. 141.

խնդիր ևս.—Հայաստանում հողատիրական ինչ տեսակ կարգեր էին տարածուած: Պ. Յ Սաղաթելեանը իր մի ուսումնասիրութեան մէջ¹ ենթադրում է, որ Հայաստանում գոյութիւն ունէր համայնական հողատիրութիւն: Այս ենթադրութեան հիմք նա ընդունում է այն հանգամանքը, որ Մխիթար Գօշի Գատաստանագիրքը հողային օրէնքներ չի պարունակում իր մէջ և այդ նրանից է, որ իբր թէ հողատիրութիւնը համայնական էր և հողից օգտուելը, հողաբաժանումներն և այլն կարգադրութիւնները թաղնուած էր համայնքներին: Այս ենթադրութիւնը բաւական վիճելի է: Մեր պատմագիրները և նոյն այդ Մխիթար Գօշի Գատաստանագիրքից յայտնի է, որ Հայաստանում գոյութիւն ունէր հողի մասնաւոր սեփականութիւն:

Վստայէս Խորենացիի գիրք II. ԾՁ գլխում յայտնում է, որ Արտաշէս թագաւորը հրամայել էր զիւղերի և ագարակներէ սահմանները որոշել. «Յետ ամենայն աւաքինութեանց և գործոց ուղղութեանց Արտաշիսի, հրամայէ դասմանս գիւղից և ագարակաց որոշել. քանզի բազմամարդացոյց զաշխարհ հայոց՝ եկամուտ բազում ածելով յաղզս, և բնակեցոցանելով ի լեռինս և ի հովիտս և ի դաշտս և նշան սահմանաց հաստատեաց այսպէս հրաման տալով քարնս կոփել չորեքկուսիս, և պնակաձև փոսել զմէջսն, ծածկելով յերկրի. և չորեքկուսիս ի վերայ յարոցանել անբարտախ, և սակաւ ինչ բարձրագոյն յերկրէ»:

Եղիշէն իւր պատմութեան մէջ յիշատակում է, որ գիւղացիները հողաբաժինները կոչուում էին կեանք, արար, կալուած: «Եւ եթէ ոք ի հեռի աշխարհ ուրեք գնացեալ իցեն, ունիմ իշխանութիւն յարքունուտ, եթէ յազատաց իցեն, եթէ շինականաց իցեն, եթէ յեկեղեցոյ, զինչ կեանս և թողեալ իցէ, եկեսցին և կալցին զիւրաքանչիւր զարարս:.. «Որ եւ բազումք իսկ եկին և ժողովեցան և կալան զիւրաքանչիւր կալուածս»²:

Մխիթար Գօշի Գատաստանագիրքից³ էլ տեղեկանում ենք, որ Հայոց մէջ գոյութիւն ունէր հողի մասնաւոր սեփականութիւն: Ահա ի՞նչ է ասում այդ մասին. «Թագաւորը իշխանի տուեալ գաւառ, եթէ շինէ ըստ հրամանի նորա բերդ կամ

աւան և կամ աւերակս ի սահմանս ի քառանգութիւնս համարեսցի նմա. մի լիցի փոխել առանց մեծի և իրաւացի յանցանաց. եւ զինի մահու նոցա՝ որդւոց նոցա լիցի հրամանաւ թագաւորի: Սոյնպէս ընդ ձեռամբ իշխանաց ազատք լիցին և ընդ ազատաց ձեռամբ շինականք. յսրժամ աւերս շինեսցեն և հողս հատանիցին ի մայրեաց, ստացուած լիցի անփոփոխ և որդւոց նոցա յետ մահու. այլ փոփոխումն ի վերայ մեծի յանցանաց և իրաւացի լիցի, և մի ի պատճառս զբարտաւթեան փոփոխիցին»:

Այս յիշատակութիւններից երևում է, որ Հայաստանում գոյութիւն ունէր մասնաւոր սեփականութիւն: Բայց դրա հետ միասին գոյութիւն ունէր և համայնական հողատիրութիւն, միայն ոչ պարբերական բաժանումներով, այլ նման գերմանական «Վարկագենոսենշաֆտին»¹: Թէ ինչ ընտրել էին կրում այդ երկու հողատիրական կարգերը և թէ զբանցից որն էր աւելի տարածուած, խնդրի վրայ որոշ չափով լոյս է սփռում հայ նահապետական ընտանիքի կազմակերպութիւնը, որի հետ կաւոր է ծանօթանալ:

Հայ նահապետական ընտանիքը հանդիսանում է նախ որպէս կրօնական-արինակցական մի միութիւն, համայնակցութիւն: Ահա այստեղ հետաքրքրում է նրա վերջին կողմը: Նահապետական ընտանիքը կամ գերդաստանը հայոց մէջ շատ երկար կեանք է ունեցել: Անցեալ դարի սկզբներին այդ տեսակ ընտանիքները սովորական էին. ներկայումս էլ դեռ ճանկատանում կարելի է պատահել դրանց: Հայ նահապետական ընտանիքը արեւնակիցները-աղգակիցները մի միութիւն է հիմնուած նահապետական սկզբունքները վրայ: Այս համայնակցութեան գլուխ է կանգնած ընտանիքի հայրը, որ կոչուում է նահապետ, պապ: Նահապետի իրաւունքները բաւական լայն էին: Ընդունելով, որ ընտանիքի բարեկեցութիւնը նահապետի միակ գլխաւոր հոգին է, նրան արուած էր անսահման ազատութիւն, ընտանիքի բոլոր անդամները պէտք է նրան անպայման ենթարկուեն, հնազանդուեն: «Նահապետի իշխանութիւնը գրեթէ ծայրայեղ է և տարածուած է եղբարները, որդիները, թոռները, սրանց կանանց և այն բոլոր նոյնիսկ ոչ արեւնակիցները (անափեսան, ծառան—ճնոքար) անձերի վրայ, որոնք ապրում են նրա դերդաստանական յարկի տակ: Այդ իշխա-

1) Համայնական հողատիրութիւնը երեւանի նահանգում. Յ. Սաղաթելեան. Մուրճ 1890 թ. № 5-ից սկսած:
 2) Եղիշէ. Պատմ. Վարդ. Թէոդոսիա. 1864 է. Յեղան. եր. 206-5)
 3) Մխիթար Գօշի Գատաստանագիրք a. a. O. եր. 517. Տես եւ խ. Սամուէլեան—Մխիթար Գօշի Գատաստանագիրքը եւ հայոց հին քաղաքացիական իրաւունքը. «Հանդէս Ամսօրեայ» 1910 թ. Մարտ.

1) Այս մասին խօսք կըլինի աշխատութեանս «Համայնական հողատիրութիւնը Անդրկովկասում» գլխում:

նու թիւնը տարածուում է, ոչ միայն անձի, այլ ստացուածքի վրայ: Նա է սրոշում իւրաքանչիւրի աշխատանքը. տնօրինում բազմից ու կեանքը, ամուսնացնում որդիներին և թոռներին, պատժում և նոյնիսկ հեռացնում տանից այն անդամին, որը համարձակուում է ընդդէմ գնալ իւր իշխանութեանը: Որդիները ու թոռները չեն համարձակուում նրա ներկայութեամբ ոչ միայն լսուել և իրենց կարծիքները յայտնել, այլ և նստել, մինչև որ չհրամայէ: Նահապետը պատասխանատու է և գերդաստանի ամեն մի անհատի արարքները համար, նա պարտաւոր է իւր միջոցների համեմատ հողալ իւրաքանչիւր անդամի կարիքները, հետեւել նրա վարք ու բարքին: Նա միայն, իբրև գերդաստանի ճանաչուած ներկայացուցիչ, իրաւունք ունի մասնակցելու գիւղական և հասարակական բոլոր գործերում իւր գերդաստանի կողմից. նմանապէս հարսանիքներում, թաղումներում և այլ ընտանեկան հանգէտներում և տօնախմբութիւններում նա հանդէս է գալիս իւր գերդաստանի իբրև միակ ներկայացուցիչը: Գերդաստանի ներքին անայն կառավարութիւնը գտնուում է նահապետի կնոջ՝ տատի, մօր ձեռքում: Նա է հսկում հարսները ու աղջիկների վրայ, առանց որի թոյլաւութեան վերջինները ոչինչ իրաւունք չունին անելու, մի բան վերցնելու, գործ կատարելու. մանաւանդ որ տան բոլոր բանալիները նրա մօտ են պահուում: Տաքը շատ անգամ միջնորդ է հանգիստնում հարսների և սրանց ամուսիններին, որդիներին և սրանց հայրերին կամ նահապետի միջև՝ 1) Թէպէտ նահապետը բացարձակ իրաւունքներ ունէր. բայց նա սովորապէս ընտանեկան գործերը միայնակ չէր վարում, այլ խորհրդի էր հրաւիրում, մանաւանդ կարևոր գէպքերում, ընտանիքի հասակաւոր անդամներին և համաձայն ընտանեկան խորհրդի էր վճիռներ տալիս, կալգադրութիւններ անում 2):

Նահապետական գերդաստանի մէջ տիրում էր համայնական սեփականութիւն: Ընտանիքի շարժական և անշարժ բոլոր իրերը համայնական էին, ամենքին էին պատկանում: Միայն զարգարանքի իրերը, հագստեղէնը և կանանց բաժինքը բացառութիւն էին կազմում: Ընտանիքի ամեն մի անդամը նրա համար էր աշխատում և բոլոր գործողութիւններով կապուած էր նրա հետ: Առանց ընտանիքին իմաց տալու, նրանից թոյլտուութիւն ստանալու, ոչ ոք իրաւունք չունէր մի բան գնելու,

1) Խ. Սամուէլեան, Հայ նահապետական գերդաստանը. «Արարատ» 4908 թ. Փետտար. եր. 476—477.
2) Սամուէլեան a. a. O. Մարտ եր. 266—267.

ձեռք բերելու կամ վաճառելու, ուրիշին տալու: Նոյնիսկ ընտանիքում բացակայ անդամները պարտաւոր էին, եթէ որ և է գործով զբաղուում էին, իրենց աշխատածը նահապետին տալ. այսպէս նրանք ամբողջովին թէ անձնապէս և թէ իրենց գործողութեամբ կապուած էին ընտանիքի հետ:

Նահապետական ընտանիքի մէջ տիրում էր աշխատանքի բաժանում: Ընտանիքի անհրաժեշտ իրերը, կարիքները հողացուում էին, ըստ կարելւոյն, ընտանիքի մէջ, առանց դրսի օգնութեան դիմելու: Ընտանեկան այս կազմը շատ մեծ առաւելութիւններ ունէր այն ժամանակուայ գիւղականտեսութեան համար: Հայտնուում հողը պահանջում է շատ լսորը վարել, որը համար էլ պահանջուում էր յաճախ 10—12 գոյգ լճիան և բաւականաչափ աշխատող ձեռքեր. այնպէս որ առանց այդ տեսակ ընտանեկան կազմի հողը մշակութիւնը գծուար, անկարելի էր:

Հողը կազմում էր ամբողջ գերդաստանի սեփականութիւն և ոչ անհատների: Մտաւորապէս նոյն կարգերն էին տիրում հողի սեփականութեան վերաբերեալ, ինչ որ տիկին Պ. Եֆիմենկին հիւսիսային Ռուսաստանում գտել և նկարագրել է՝: Նահապետական ընտանիքի քայքայման, բաժանման դէպքում, սկզբում միայն շարժական իրերն էին բաժանում, իսկ հողը մնում էր անբաժան, որպէս ընդհանրութեան սեփականութիւն: Համայնական հողը կամ միացած ուժերով էին մշակում, կամ սրոշ համաձայնութեան դալով, իրենց մէջ բաժանում էին և առանձին մշակում: Բայց այդ բաժանումը մշտական չէր և հողը զարձակ կազմում էր ընդհանուրի սեփականութիւնը: Նոր ժամանակներում հին սովորութիւնը վերացել է. վարելահողերի բաժանումը դսն է դարձել է վերջնական, մինչդեռ խոտատեղիները, մարգագետինները, արօտները մնացել են որպէս ընդհանուրի սեփականութիւն:

Ընտանեկան այս տեսակ բաժանումներից է ծագել հաւանորէն Անդրկովկասի շատ կողմերում տարածուած համայնական հողատիրութիւնը: Այս մասին լետոյ լսօք կրլինի:

1) J. Keussler, Zur Geschichte und Kritik des bäuerlichen Gembindebesitzes in Russland. Հատոր Գ. եր. 44.

II

Վրաստանի հողային պայմանները

Անգրկովկասում պատմական անցեալով և կուլտուրայով աչքի են ընկնում և վրացիք: Վրացիք սեմիտական—յաբեթական ծագում ունեն ¹⁾ և Անգրկովկասի ամենահին բնակիչներէց են: Վրաստանը իր պատմական անցեալով բաւական նման է Հայաստանին, հէնց սկզբի շրջանում այդ երկու երկրները սոցիալական բաւական նման կարգեր են ունեցել:

Վրաստանի հին անցեալի մասին պատմական տեղեկութիւններ հաղորդում են Քսենեֆոննա և Սարաբոն: Վրաստանում, շնորհիւ երկրի ղերքի, շատ զարգացած էր ցեղային ուրոյն կեանքը երկիրը բաժանուած էր բազմաթիւ մասնիկ տոհմերի, իշխանութիւնների մէջ: Տոհմի գլխաւորը կոչւում էր մամասալիս, որ նշանակում էր ամեն հայր կամ տոհմապետ: Մամասալիսներ բաւական կային, բայց ժամանակի ընթացքում նրանցից Սցխէթի մամասալիսը աւելի է աչքի ընկնում և միւսներին վերաբերմամբ առաւելութիւններ ձեռք բերում: Թէևնա զարձեալ մամասալիս էր կոչւում, բայց իւր իրաւունքներով նմանում էր թագաւորին: Վրաստանի հին սոցիալական կազմի մասին Սարաբոնը հետեւեալն է պատմում: Վրաց աէրութեան գլխաւորն էր թագաւորը. սա ընտրւում էր մեռած թագաւորի ազգականներից աւագութեան կարգով: Կար և թագաւորի երկրորդը, որն ձեռքում էին դանւում զատավարութիւնը և զօրքի հրամանատարութիւնը: Տէրութեան մէջ մեծ զիւրք ունէին քրմերը. նրանք է միջն այլոց վարում էին և միջազգային գործերը: Ժողովուրդը բաժանւում էր գինւորականների և երկրագործների: Կային և սարուկներ, որոնք թագաւորին էին պահանում և նրան ծառայում: Տիրում էր ցեղային, տոհմային սաացուածքի համայնականութիւն. կալուածքները կառավարում էր տոհմի աւագը: Սարաբոնի հաղորդած այս տեղեկութիւնները վերաբերւում են իբերիացիներին. միւսների մասին ոչինչ յայտնի չէ²⁾:

Սարաբոնի հաղորդածից և ուրիշ ազգային աղբիւններից էլ ինչպէս երևում է, Վրաստանում շատ հին ժամանակից սկսած աւելում էր տոհմապետութիւն. ժողովուրդը բաժանուած էր տոհմերի (նաթէսալի): Իւրաքանչիւր տոհմ անկախ էր և ունէր

1) Проф. Н. Марр. История Грузии 1906. стр. 17.
2) И. Джаваховъ Государственный строй древней Грузии и древней Армении 1905 стр. 8.

իր կառավարութիւնը: Տոհմերը՝ ըստ իրենց մեծութեան, ուժի պետութեան մէջ տարբեր ղերք, համարում ունէին: Մեծ, զօրեղ տոհմին պատկանողները կոչւում էին «Իրիզգվարեաններ», աւելի փոքր տոհմին պատկանողները՝ «աղնաւուրներ» կամ «գվարեաններ», իսկ անտոհմ մարդիկ կոչւում էին «ուզվարոններ» կամ «ուաղնոններ»¹⁾ Ժողովուրդը, սկզբում ազատ էր, շատ իրաւունքներ ունէր. դեռ սոցիալական ստորադասումը մեծ չէր: Ժողովուրդը պարապում էր երկրագործութեամբ և պատերազմներով: Սարուկները օտար ծագման էին պատկանում. նրանք թագաւորների ճորտերն էին և ապրում էին նրա հողերի վրայ: Թագաւորութիւնը, կարելի է ասել, որ մինչև երրորդ դարի կէսը (250 թ. Ք. ա.) գոյութիւն չունէր: Վրաց առաջին թագաւորը համարւում է Փարնաւազը (250 թ. Ք. ա.): Սա ազդով պարսիկ էր և աշխատում էր երկրի մէջ մտցնել պարսկական կարգեր: Սրա ժամանակ տոհմապետութիւնը փոխոււմ է իշխանութեան: Երկիրը բաժանւում է 9-ը սատրապութիւններին, որոնց կառավարիչները կոչւում էին էրիստաւներ, այսինքն ժողովրդի գլխաւորներ: Երիստաւութիւններն էլ բաժանւում էին մովրավութիւններին, որոնք տրւում էին մանր իշխաններին: Երիստաւութիւնը սկզբում նշանակովի էր, բայց ժամանակի ընթացքում դառնում է ժառանգական: Երիստաւները ունէին լայն իրաւունքներ. իրանց երկրում համարեա թէ թագաւոր էին: Նրանց իշխանութեան տակ դանւում էին զօրապետներ և հազարապետներ: Երիստաւները ունէին իրանց գլխաւորը. որը կոչւում էր էրիստաւներին—էրիստաւ կամ սպարապետ (զօրքի հրամանատար ²⁾): Երիստաւները ընդհանուր առմամբ անկախ էին, շարունակ ձգտում էին թագաւորին չենթարկուել և դրան նպաստում էին Վրաստանի արաքին թշնամիները: Թագաւորութիւնը մեծ մասամբ թոյլ էր, երկրի մէջ աւելում էր լայն ապակենտրոնացում ³⁾): Երիստաւների անջատական ձգտումները մի կողմից, հզոր հարեանների միջամտութիւնը երկրի գործերի մէջ միւս կողմից շարունակ արգելք էին հանդիսանում թագաւորութեան զօրեղանալուն: Վրաց թագաւորութիւնը քիչ թէ շատ աչքի ընկնող դեր է խաղում միայն Փարնաւազ և վախթանգ Գուրգասաւան թագաւորի ժամանակ, իսկ ընդհանրա-

1) И. Джаваховъ. а. о. о.
2) М. Глушаковъ. Очерки изъ истории Грузии. 1901 և և В. Романовскій. Очерки изъ истории Грузии. 1902:
3) Թագաւորների իշխանութիւնը տարածւում էր, Թէև ոչ միշտ. Ստորին-Քարթալիայի մասամբ էլ Վերի և Կախէթիայի վրայ:

պէս թոյլ էր: Հետագայում այնքան ընկած էր թագաւորութեան նշանակութիւնը, որ Բագրատունիները (սկսած V. դ. Բ. յ.) չէին ուզում թագաւոր տիտղոսը կրել: Վրաց թագաւորութիւնը սկսում է ուժեղանալ X դարի վերջերքին: Դաւիթ Կիւրապալաւին (վերին Գարթալինեան կամ Մցխէթեան Բագրատիդ) յաջողում է առաջ բերել պետական որոշ կենտրոնացում: Աբխազ—Գարթալինեան տէրութիւնը (985—1442) բաւական ուժեղանում և աչքի ընկնող դեր է խաղում մանաւանդ XI և XII դարերում: Այդ ժամանակներում տէրութիւնը բաժանւում էր 15 էրիստաւութիւնների, որոնցից 7-ը Գարթալինայում էին, իսկ 8-ը Աբխազիայում: 1) Այս էրիստաւութիւններն էլ էլի շուտով գլուխ են բարձրացնում և խանդարում պետութեան կենտրոնացմանը: XV դարում թագաւորութիւնը միանգամայն թուլանում է. տէրութիւնը բաժանւում է երեք թագաւորութեան (Կախէթիայի, Խմեքէթիայի և Գարթալինայի և չորս անկախ իշխանութիւնների (Մենդրեչիայի, Աբխազիայի, Սվանէթիայի և Գուրեայի): Այստեղից արդէն սկսում է Վրաստանի քաղաքական անկումը:

Վրաստանում դեռ վաղ ժամանակներից սկսած (III. դ. Բ. ա.) աիրում էր Ֆէոդալական կարգը: Տոհմապետութիւնը իշխանութեան փոխուելով և էրիստաւութիւնն առաջնորդով, Ֆէոդալիզմը հաստատ հող է գտնում: Թագաւորութիւնը շարունակ թոյլ անզօր լինելով, էրիստաւները մեծ արտօնութիւններ են ձեռք բերում և երկրում առաջանում է կառաքեալ ապակենդրոնացում: Երիստաւները բաւական նման են Եւրոպական Սենեորներին և համարեա թէ նոյն իրաւունքներն ունեն: Վրաստանի սօցիալական կեանքի մասին մինչև XIV դարը կանոնաւոր տեղեկութիւններ չունենք: Կարելի է այսքանն ասել, որ այնտեղ Փարնաւազ թագաւորի ժամանակից սկսած գոյութիւն ունէին հետեւեալ դասակարգերը. 1. մտաւարներ կամ թաւազներ (իշխաններ), 2. Ազնաւուրներ (ազնուականներ), 3. Մոկալալներ (քաղաքացիք), 4. Գլեխներ (գիւղացիք): Թաւազները հին տոհմապետների սերնդից էին: Սրանցից էին նշանակում էրիստաւներ: Թաւազները մեծ կալուածքների տէր էին և իրանց կալուածքները կառավարում էին անկախ, ինքն-իշխան: Սրանց ենթարկւում էին իրանց կալուածքների վրայ ապրող թէ գիւղացիները և թէ մանր ազնուականները, որոնք սրանց վաստակներն էին:

1) Д. Бакарадзе и Н. Березновъ. Тифлисъ въ историческомъ и этнографическомъ отношеніяхъ. 1870 гр. 33 և նշանակները:

Ազնաւուրները զինւորականներ էին, նման Եւրոպական ասպետներին: Սրանք ունէին հողեր, իրանց գիւղացիները, որ ստացել էին թագաւորից կամ թաւազից: Հողը, կալուածքը ումից ստացել էին, նրան էլ ենթարկւում էին և պարտաւոր էին զօրքով օգնել: Մոկալալների կամ քաղաքացիների սօցիալական դրութեան մասին հաստատ տեղեկութիւններ չկան: Քաղաքները Վրաստանում ընդհանրապէս շատ սակաւ էին, այնպէս որ քաղաքացիք այնքան էլ առանձին դեր չէին խաղում:

Գլեխները կամ գիւղացիք ազատ չէին և ենթարկւում էին թագաւորին, թաւազին կամ ազնուաւորին: Հողը պատկանում էր տէրութեան և ազնուականութեան: Գիւղացիք պարտաւոր էին իրանց հողատէրերին որոշ տուրքեր, հարկեր վճարել և անձնական ծառայութիւններ կատարել:

Հետագայում Վրաստանում առաջ է գալիս և մի նոր դասակարգ, որ է հողէտրականութիւնը (ըրիստոնեայ): Սահեղհեաէ մեծ դեր է ձեռք բերում, խոշոր կալուածքների տիրանում և նոյն իրաւունքները բանեցնում, ինչ որ ազնուականները:

XIV դարից սկսած Վրաստանի սօցիալական կեանքի մասին տեղեկութիւններն աւելի առատ են: Այդ մեղ հողորդում են իրաւարանական երկու յիշատակարաններ, ինչպէս են Գրիգոր—Պայծառափայլի «Դեղելիս—Դեբայ» Օրէնսդիրքը և Սամցխի-ի (այժմեան Ախլցխայի, Ախալքալախի, Արգասանի տեղը) Բէկի և Ազբուզի իշխանների տուած օրէնքները (XIV—XIV):

Ըստ «Դեղելիս—Դեբայի» Վրաց ժողովուրդը բաժանւում է հետեւեալ դասակարգերի. էրիստաւներ, մտաւարներ (կառավարիչներ), Խեխտաւներ (հովտի կառավարիչներ), Յիխտաւներ (բերդի կառավարիչներ), Եկեղեցու սպասաւորներ, ասրովաններ ընտիր մարդիկ, Եկեղեցական գիւղացիների և մտքը ինչների (հասարակ ժողովուրդ): Աւելի շատ տեղեկութիւններ տալիս են Բէկի և Ազբուզի իշխանների կաղած օրէնքները: Ըստ դրանց ժողովուրդը բաժանւում է երկու դասակարգի. արտօնեալների և ստորագրեալների: Արտօնեալներն մէջ էլ ըստ ծագման, կալուածքների մեծութեան և պետական ծառայութեան որոշ ատրբերութիւններ է դրում: Արտօնեալները բաժանւում են երկու կարգի. Դեղբուրներ (իշխանների) և ազնաւուրների (ազնուականների): Դեղբուրին խոշոր կալուածատէրն է. ունի իր բերդը, վանքը, վաստակները և գիւղա-

1) А. Хахановъ. Политическое и культурное состояніе Грузіи съ XII до XVIII в. (Журн. „На Кавказѣ“. 1909 № 3).

ցինները: Նա իսկական և քրոնական սիննետօր է: Աղնուականները բաժանուում են երեք կարգի. 1. Թագաւորական տան (ցլերի-լի), որոնք Թագաւորից կախումն ունեն, 2. Աթաբէկական, որոնք երկրի կառավարչից—աթաբէկից կախումն ունեն և 3. Ղեկեքոււլիական, որոնք իշխանից (ղեկեքոււլուց) կախումն ունեն:

Հասարակ ժողովուրդը բաժանուում է երկու դասակարգի. ապա սեփականատէրերի և ստորազրեանները: Առաջինները կարող են իրանց հողի հետ վարուել այնպէս, ինչպէս կամենում են. կային նրանց մէջ և այնպիսիները, որոնք անձնապէս ազատ էին, բայց հողով կապուած (սեփական հող չունէին): Ստորազրեանները սեփական հող չունէին, ազատ էլ չէին և ամբողջովին ենթարկուում էին աղնուականներին:

Վրաստանը XV դարից սկսած մինչ XVIII դարի վերջերը հանդիսանում է մի ապակենդրոնացած, ուժասպառ տէրութիւն: Ինչպէս յիշուեց, վրաց աէրութիւնը XV դարում բաժանուել էր երեք Թագաւորութեան (Կախէթիայի, Իմերէթիայի և Քարթլիայի) և չորս անկախ իշխանութիւնները (Մինգրէլիայի, Գուրիայի, Աբխազիայի և Սվանթիայի): Այս բաժանումը շատ չնչին փոփոխութեամբ (Կախէթիա և Քարթլիան XVIII դարում միացել էին և մի աէրութիւն էին կազմում, իսկ Քարթլիանայից Սասաբեգո կոչուած մասը բաժանուել էր և անկախութիւն ձևք բերել) շարունակուում է մինչև ոստական տիրապետութիւնը: Վրացական այս բոլոր աէրութիւններն էլ շատ խղճուկ վիճակի մէջ էին: Մի կողմից շարունակ իրար հետ էին կռուում. ներքին խռովութիւնները, դաւադրութիւնները իշխանները և աղնուականները կողմից առհասարակ անպակաս էին, իսկ միւս կողմից էլ տաճիկները, պարսիկները և լեզգիներն են սկսում նեղել: Տաճիկները և պարսիկները այնքան առաջ են գնում, որ Վրաստանում սկսում են կարգազրութիւններ անել. արևմտեան Վրաստանը ընկնում է տաճիկների, իսկ արևելեանը պարսիկների իշխանութեան տակ: Շնորհիւ երկրի բաժան բաժան լինելուն, զօրեղ ապակենտրոնացման, անվերջ արշաւանքներին ժողովրդի զրութիւնը հետզհետէ անտանելի է դառնում: Ժողովուրդին անվերջ կեղեքում, հարստահարում էին թէ Թագաւորը, իշխանները և թէ օտարները: Ժողովուրդը դարձել էր սխալի հօտ, կորցրել էր ամեն մի իրաւունք և սարկութեան աստիճանի հասել: Շնորհիւ զրան Վրաստանում առաջանում է ճորտութեան ամենավատ տեսակը, որը դուցէ նոյն իսկ եղակի է: Մարդը դարձել էր անշունչ իր, ապրանք և հետը կարելի էր ուղածին պէս վարուել: Սարկավաճառութիւ-

նը Իմերէթիայում, Գուրիայում, Մինգրէլիայում սովորական ընայթ էր ստացել, տեղային աղնուականութեան համար եկամուտի ամենաշահաւէտ աղբիւրն էր: Այսպէս Քարթլիանայի Թագաւորներից մէկը դանդաժուում է (1639 թ.), որ Մինգրէլիայի աղնուականութիւնը տարեկան 10—15 հազար երեխաներ է վաճառում, չհաշուած սուլթանին, փաշաներին և ուրիշ անձանց արած մարդկային նուէրները: Նոյնը անում էին մնացած տեղերի աղնուականները, նոյն իսկ Եպիսկոպոսները 1:

Ոմանք այն կարծիքին են, որ ճորտութիւնը Վրաստանում այս տեսակ լսիտ դոյն է ստացել միայն XVIII դարում, իսկ առաջ շատ մեղմ է եղել: Կասկած չկայ, որ վերջին ժամանակներում ճորտութիւնը, իրաւ, ծայրայեղ չարիքի էր հասել, բայց պատմական յիշատակարանները հաստատում են, որ այդ հաստատութիւնը վաղուց գոյութիւն ունի և աւելի լսիտ, քան ուրիշ երկրներում: Թէ երբ է այդ առաջացել, դժուար է որոշել, բայց տիրող կարծիքն է, որ ճորտութիւնը Վրաստանում շատ հին է 2: Արա պատճառները պէտք է որոնել երկրի դերքի և պատմական անցեալի մէջ: ճորտութիւնն, ինչպէս ամեն տեղ, նոյնպէս և այստեղ որոշ դարդացում է կրել և նոյն իսկ ընդհանուր գծերով այդ աւլ բաւական դժուար է: ճորտութեան մասին աւելի մանրամասն տեղեկութիւններ ունենք XVIII դարից սկսած. մենք էլ այստեղ աւալիս ենք այդ:

XVIII դարում Վրաստանում տիրում էր կատարեալ անար-լիտ: Օրէնքը, իրաւունքը միանգամայն կորցրել էին իրանց նշանակութիւնը, տեղի տալով բռնութեան, կամայականութեան: Կառավարութիւնը բռնակալական—օլիգարխիական էր, կամ աւելի ճիշտ, բռնակալական—քաօսային, ինչպէս այդ անուանում է մի պատմագէտ 3: Թագաւորը ուժեղ էր, եթէ նա աղնուականութեան հետ հաշտ էր, եթէ խրախուսում էր նրանց շահատակութիւնները, կեղեքումները: Աղնուականութիւնն այդ շրջանում բաժանուում էր երեք կարգի. էրիտաւաները (ղեկեքոււլները), Թաւաղները և աղնաւուրները: Երիտաւաներն ամենազօրեղ, աչքի ընկնող ֆեոդալներն էին: Երկրորդ տեղը բռնում էին Թաւաղները, որոնք նոյնպէս մեծ կալուածքները տէր էին: Իսկ աղնաւուրները հասարակ աղնուականներ էին և վաստակական կախումն ունէին Թագաւորից կամ իշխաններից: Յկեղեցու պետերն էլ (կաթուղիկոս և Եպիսկոպոս-

1) Д. Бакарадзе и Н. Березновъ. а. а. О. եր. 53—54.
 2) Романовскій. Очерки изъ исторіи Грузіи. եր. 426.
 3) Романовскій а. а. О. եր. 416.

ներ) համարուում էին առաջին կարգի իշխաններ և նոյն իրա-
ւունքներն ունէին:

ժողովուրդը բաժանուում էր քաղաքացիների և գիւղացի-
ների: Գիւղացիները բաժանուում էին չորս կարգի. աղատ գիւ-
ղացիներ (Թարխան), պետական գիւղացիներ (մասխուրի),
եկեղեցական գիւղացիներ և ազնուական գիւղացիներ: Աղատ
գիւղացիները ամբողջովին կամ մեծ մասամբ հարկերից և անձ-
նական ծառայութիւններից ազատ էին. աղատ գիւղացիներ
ունէին թագաւորը, իշխանները և թէ եկեղեցին: Իսկ մնացած
գիւղացիները գտնուում էին ճորտական դրութեան մէջ:

Պետական գիւղացիները պետութեան ճորտերն էին: Կա-
խէթիայի և Գարթալինայի կառավարութիւնը, ինչպէս յայտնի
է, իբր թէ կենտրոնացած էր. կառավարութիւնը գտնուում էր
Թագաւորի ձեռքում, իսկ նրան ստորագրուում էին միջվան-
դէկը և միջվանները, որոնք երկրի կառավարիչներն էին: Քա-
ղաքացիական մասի կառավարութիւնը գտնուում էր սալթուխ-
ցեսի կամ պետական գանձապահի ձեռքում: Սրա հետ միջ-
վանդէկը և միջվանները խորհրդակցում էին երկրի գործերի
վերաբերեալ, գլխաւորապէս անտեսական: Նահանգների կա-
ւարութիւնը յանձնուած էր մովրովներին: Սրանցից սմանք
միմիայն ազմինիտարացիական իրաւունքներ ունէին, իսկ սմանք
էլ թէ այդ և թէ դատական: Սրանց նշանակում էր թագաւոր-
ը, բայց հետզհետէ մովրովութիւնը ժառանգական բնոյթ է
ստանում: Մովրովները ռոճիկ չէին ստանում, այլ իրանց իշ-
խանութեան տակ գանձող ժողովուրդից հարկ և ատրքեր էին
առնում, որոնց մի մասը թագաւորին էին յանձնում, իսկ մի մ-
ասը իրանք վերցնում: Մովրովների իշխանութիւնը արած-
ւում էր մշայն պետական հողերի վրայ: Մովրովն իր իշխա-
նութեան տակ ունէր գանազան պաշտօնեաներ, որոնց կամ
թագաւորն էր նշանակում կամ ընտրով էին (նացավալ, քեթ-
խուզա, մամսախլիս և այլն) ²:

Պետական գիւղացիներից տէրութիւնն առնում էր հետեւ-
եալ հարկերը.

1. Սուրսա (ծխահարկ) ամէն մի ծխից կամ ընտանիքից
առնում էին երեք կոս (կոսը երկու փութ է) հացահատիկ-
երկու կոսը ցորեն, իսկ մէկը գարի:

1) Մովրովների ստացած հարկերի եւ ատրքերի մասին տես Սյր-
целадзе-ի Գրուինսկիա Կրեստյանսկիա ցրամոտի. Թիֆլիս 1882 թ.
79—80:

2) В. Романовскій а. а. о. եր. 414:

2. Գալլա (հնձի հարկ), առնում էին հնձի 1/3, 1/6, 1/7,
նոյն իսկ 1/10:

3. Կալուխի (գինու հարկ), առնում էին խաղողի հնձի 1/10
կամ 1/7:

4. Կոդիս պուրի (?). Վճարում էին ունեւոր գիւղերը:

Հարկերի ցանկը լրիւ չէ. կային էլ ուրիշ երկրորդական,
անորոշ, ժամանակաւոր և այլն տեսակ հարկեր ³:

Բացի հարկերից, պետական գիւղացիները պարտաւոր էին
թագաւորի, պետական պաշտօնեաների համար գանազան անձ-
նական ծառայութիւններ կատարել:

Թագաւորը ինքը, լինելով մի մեծ Ֆէոդալ, գիւղացիների
վրայ նայում էր որպէս ճորտերի և նրանց վրայ նոյն իրաւունք-
ներն էր բանեցնում, ինչ որ Ֆէոդալները: Թագաւորը գիւղա-
ցիներին բացի իր համար աշխատացնելուց, կարող էր սրան-
նրան նուիրել, վաճառել, որը և տեղի էր ունենում, սովորա-
կան էր ²:

Եկեղեցին, հողերականութիւնը ևս Վրաստանում մեծա-
մեծ կալուածքների տէր էր և եկեղեցական յերարխիան բոլորո-
վին նման էր քաղաքական—աշխարհականին: Կաթողիկոսը և
եպիսկոպոսները իրենց կալուածքների վրայ նոյն իշխանութիւնն
ունէին, ինչպէս աշխարհակալ Ֆէոդալները: Կաթողիկոսը և
թէ բարձր հողերականութիւնը հէնց ծագմամբ էլ պատկա-
նում էին թագաւորական տան և ազնուական ընտանիքներին:
Կաթողիկոսն առանձնապէս իւր իշխանութեան տակ ունէր մե-
շարք նահանգներ: Եկեղեցական թղթերից ⁵ երեւում է, որ XVI
դարում կաթողիկոսն ունէր մօտ 237 գիւղ: Կաթողիկոսն ու-
նէր իր սեփական ազմինիտարացիան, կառավարութիւնը, հար-
կահանները, զօրքը, զենեւալները և այլն: Պատերազմի ժամա-
նակ զօրքին կամ ինքն էր առաջնորդում, կամ զենեւալներից
մէկը: Գատավորութիւնը նոյնպէս գտնուում էր նրա ձեռքում ⁴:
Եպիսկոպոսները նոյնպէս իշխանական իրաւունքներ ունէին.
ունէին իրանց սեփական ազմինիտարացիան, գատավարութիւ-
նը, զօրքը և այլն:

1. Сводъ матеріаловъ по изученію экономическаго быта
Государствъ крестьянъ Закавказскаго края. Томъ I. часть III.
եր. 5—18:

2. Տես Սյրцеладзе. Գրուինսկ. Կրեստյանսկ. ցրամոտի.

3. Սյրцеладзе. Գրուինսկիա ցրամոտի (ցրամոտի).
Թիֆլիս 1881.

4. Д. Бакарадзе и Н. Березновъ а. а. О. եր. 8:

Եկեղեցական գիւղացիները նոյնպէս համարուում էին ճորտեր: Պետական հարկերից նրանք մեծ մասամբ ազատ էին և հարկեր էին վճարում եկեղեցուն: Բացի այդ, պարտաւոր էին և մի շարք անձնական ծառայութիւններ կատարել: Սկզբում եկեղեցական գիւղացիները զբաղւած էին քարե շէնքերով, շատ թեթեւ է եղել, գիւղացիները ձգտել են աւելի շուտ եկեղեցու ճորտերը լինել, քան ուրիշները, բայց հետագայում նրանց գրութիւնն էլ հետզհետէ վատթարացել է: Եպիսկոպոսները վերջերս ոչնչով չէին տարբերում աշխարհական իշխաններէ: Նրանք էլ անխնայ կերպով ճնշում, հարստահարում էին ժողովուրդին: Այսպէս օրինակ Քարթլինի թագաւոր Թէյմուրազը ռուսաց Միխայիլ Ֆէոդորովիչ թագաւորին գրած մի նամակում գանդաւում է (1639 թ.), թէ ինչպէս Միխայիլայում եպիսկոպոսներից մէկը տարեկան 10—12 հազար երեւանները գերել է վաճառում, 80 երեւանները առձեռններն նուիրում, մարդկանց գլխատում, կախաղան բարձրացնում և այլն³: Եկեղեցական թղթերը նոյնպէս վկայում են, թէ սրբան ներդրում էին գիւղացիները եկեղեցու պաշտօնեաներից, որքան խտացել էր ճորտութիւնը⁴:

Ազնուականների գիւղացիները բաժանուում էին երեք կարգի. 1. մոգժալաքների (արևմտեան Վրաստանում). 2. ազատների 3. մեքեգերների: Մոգժալաքներն ամենաճշուած, իրաւազուրկ գիւղացիներն էին: Նրանք գտնուում էին մի տեսակ ստրկական դրութեան մէջ: Առաջ էին եկել պատերազմական գերիներից, պարսիկ ծնունդներից և կալուածատիրոջ անդիւրեկան, ապստամբ գիւղացիներից: Սրանք չունէին սեփականութեան իրաւունք. ապրում էին կալուածատիրոջ մօտ և կատարում էին ամենատարբեր աշխատանքները: Կալուածատէրը կարող էր նրանց վաճառել, նուիրել, աղջկանք օժիտ տալ ևլն:

Ազատ գիւղացիները զբաղւած էին համեմատորէն թեթեւ էր. նրանք որոշ ծառայութիւններից, հարկերից ազատ էին: Արևելեան Վրաստանում նրանց զբաղւածն աւելի լաւ էր, քան արևմտեանում: Սրանք կալուածատէրերի և ճորտերի միջին տեղն էին բռնում: Երբորդ կարդին պատկանողները (մեքեգերներ կամ կլիթի կոչուածները) գիւղացիութեան ամենամեծ տոկոսն էին կազմում: Բոլոր հարկերը, տուրքերը, ծառայութիւնները և այլն մեծ մասամբ սրանց վրայ էին ծանրանում: Կալուածատէրը իրաւունք ունէր սրանց հողը թլել, վաճառել, կարող էր

3. Н. Вакарадзэ и Н. Березновъ а. а. о. стр. 54.

2) Пурцеладзэ, Грузинс. церков. гуджари (грамоты) 1861.

պատժել, միայն մահուան պատիժը վերապահուած էր թագաւորին: ճորտերը պարտաւորութիւնները, ծառայութիւնները, ըստ երևոյթին օրէնքով չէին որոշուած, այլ ամեն ինչ հիմնուած էր սովորոյթի վրայ և մասամբ էլ կալուածատիրոջ կամայականութիւնից էր կախուած: ճորտերը ծառայութիւնների և պարտաւորութիւնների մասին կան տարբեր տեղեկութիւններ և կարծիքներ: Այստեղ գնում ենք Թելուի ազնուականութեան Վրաստանի ճարձր կառավարութեան ներկայացրած մի յիշատակագիր (1826), որտեղ միառմի թուած է ճորտերի ընդ որ պարտաւորութիւններն ու ծառայութիւնները: Ըստ այդ յիշատակագրի, ազնուականների ճորտ գիւղացիները հետեւեալ պարտաւորութիւններն ունէին.

1. Կալուածատիրոջ գիւղատնտեսական բոլոր աշխատանքներին մասնակցել: Այդ մասնակցութեան շաւիղ չէր որոշուած, այլ կախուած էր կալուածատիրոջ անտեսութեան պահանջներից: Պէտք է վարէին, ցանէին, հնձէին, դաշտերը ջրէին, անտառները մաքրէին, բանջարանոցների և այգիների վրայ աշխատէին և այլն:

2. Կալուածատիրոջ կամ նրա ընտանիքի անդամներից մէկի ամուսնութեան դէպքում իւրաքանչիւր ճորտ ընտանիք պարտաւոր էր ըստ իր անտեսական կարողութեան որոշ հարկ վճարել (5—50 ռուբլի): Նոյնպէս պէտք է հողային հարսանիքի մասին: Բացի դրանից ամեն մի գիւղ պարտաւոր էր մի կով տալ:

3. Կալուածատիրոջ մահուան դէպքում հողալ նրա թաղման ծախքը և որոշ գումար վճարել:

4. Ընտանեկան բաժանումների ժամանակ կալուածատէրը ստանում է որոշ բաժին: Եթէ պէտք էր օրինակ՝ երկու եզ բաժանել, մէկը և այն էլ լաւը վերցնում էր կալուածատէրը:

5. Հողալ կալուածատիրոջ դատական ծախքերը:

6. Տղայի կամ աղջկայ ամուսնութեան դէպքում ճորտ ընտանիքը վճարում էր կալուածատիրոջ որոշ գումար:

7. Այրի կնոջ ամուսնութեան դէպքում վճարում էր փեսան:

8. Իրաքանչիւր ճորտ ընտանիք կալուածատիրոջ մատակարարում էր տարեկան 4—5 սայլ փայտ:

9. Կալուածատիրոջ համար կառուցուելիք շէնքերի վրայ գիւղացիք պարտաւոր էին աշխատել:

10. Զրօր հնէրին, Զատիին և ուրիշ տօներին գիւղացիք պարտաւոր էին կալուածատիրոջ տեսակ—տեսակ կերակուրներ, ուտելիքներ տալ:

11. Գիւղացիք պարտաւոր էին հիւրասիրել կալուածատիրոջը. նրա ընտանիքին և նոյն խոհ հիւրերին:

12. Կալուածատէրը կարող էր, ըստ իր կարելիքի, գիւղացիներէն ձուլ, իւղ, պանիր, հաց, գինի, հաւ, փոշ և այլն առնել:

13. Բարեկենդանին գիւղացիք պարտաւոր էին կալուածատիրոջ տալ երկու գրուանքայ իւղ և 9 ձուլ:

14. Հնձից և գիւղատնտեսական միւս եկամուտներից կալուածատէրը ստանում էր որոշ մաս (գալա, կուլուխի, սօբալոսօ և այլն):

15. Գիւղացիք պարտաւոր էին աշխատել կալուածատիրոջ ձկնորսատեղիներում և ձկնորսութեան վերաբերեալ իրերը նոյն խոհ իրանք պէտք է հոգային (ուռկան, թուկ և այլն):

16. Կալուածատէրը գիւղացիներէն վերցնում էր իր համար զանազան ծառայողներ՝ հովիւներ, հացթուխներ, գոմապահներ, ծառաներ, աղաթիւններ, դայեակ, խոհարարներ և այլն: Ազատնուն կալուածատէրը կարող էր ծախել, նուիրել կամ աղջկանը օժիտ տալ:

17. Պատերազմի դէպքում գիւղացիք պարտաւոր էին անորոշ փամանակով (մինչև պատերազմի վերջը) սայլեր, ձիաներ և պատերազմական մթերքներ մատակարարել:

18. Գիւղացի արհեստարարները (հիւան, դերձակ, օրմնագիւր և այլն) պարտաւոր էին կալուածատիրոջ համար ձրի աշխատել:

19. Կալուածատէրը կարող էր, ըստ իր կարելիքի, գիւղացիներէն պահանջել գիւղատնտեսական զանազան գործիքներ:

20. Քաղաքում ապրող կամ արհասարակ բացակայ գիւղացիներն ազատ չէին այս պարտաւորութիւններից:

Այս վերաբերում է արեւելեան Վրաստանին. նոյնն աւելի խտացած գոյներով դոյութիւն ունէր և արեւմտեան Վրաստանում: Բացի թագաւորից, եկեղեցուց և ազնուականներից, ձորտեր ունէին և քաղաքացիք, նոյն խոհ հարուստ գիւղացիք: ձորտութիւնը կապուած չէր անպայման հողի հետ, այլ և անձնական ընդթ էր կրում: Այս արդէն ցոյց է տալիս, թէ որքան խիստ էր ձորտական գրութիւնը: ձորտութիւնը առաջանում էր զանազան պատճառներից: Մեզ հասած տեղեկութիւններից կարելի է եզրակացնել, որ այդ բաւական հեշտ կերպով էր տեղի ունենում: Թողնելով անցեալը, որ անյայտ է, ընդհանուր կերպով կարելի է տալ ձորտութեան առաջանալու գլխաւոր պայմանները նոր փամանակում: Լիմնուած Գ. Պուրցելա-

ձէի¹⁾ հրատարակած մի շարք փաստաթղթերի վրայ, կարելի է մօտաւորապէս ասել, թէ ձորտութիւնը ինչ դէպքերում էր առաջանում: Նոր փամանակներում Վրաստանում ձորտական գրութեան մէջ էին ընկնում գլխաւորապէս երեք դէպքում. 1. դնմամբ, 2. գերութեամբ և 3. պարտքը չըվճարելով: Բացի այս գլխաւոր պատճառներից, ձորտութիւն առաջանում էր և ուրիշ դէպքերում: Կիպչիձէն իր մի յօդուածում²⁾ ձորտական գրութեան մէջ ընկնելու հետեւեալ դէպքերն է թւում:

1. Թագաւորից նուիրած,
2. օտար երկրից գաղթած,
3. պատերազմի դաշտում գերի ընկած,
4. դնած,
5. անտէր երեխաները (լնամողի ձորտն են դառնում),
6. ապօրինի զաւակները,
7. պարտքը չըվճարողը (պարտատիրոջ ձորտն է դառնում),
8. գողը,
9. ձորտ դեղջիւղուհու հետ ամուսնացողը,
10. ձորտ գիւղացու հետ ամուսնացող ազատ աղջիկը,
11. ձորտ աղջիկի հետ ապօրինի յարաբերութիւն ունեցողը,
12. սովի փամանակ մէկի կողմից խնամած ընտանիքը (խնամողի ձորտն է դառնում),
13. գերութիւնից դնուածը (դնողի ձորտն է դառնում),
14. մարգատպանութեան մէջ մեղադրուողը,
15. ինքնանամ կերպով: ձորտատէրերի իրաւունքները ճիշտ կերպով որոշուած չէին. նրանց իրաւունքները, կարելի է ասել, որ անսահման էին: Ըստ Վախթանգ VI թագաւորի օրէնսդրքի՝ գիւղացիք (ձորտ) իրանց ունեցած—չունեցածով պատկանում են կալուածատիրոջ: վերջինս անսահման իրաւունքներ ունի նրանց վրայ, միայն մահուան պատիժ չի կարող տալ³⁾: ձորտը իրաւունքը չունի ոչ մի ստացուածք դնել կամ վաճառել, առանց կալուածատիրոջից թոյլաւութիւն ստանալու: ձորտի մահուան դէպքում, եթէ անժառանգ է, ստացուածքը անցնում է կալուածատիրոջ, այրին ստանում է շատ քիչ բաժին: Ամենից շատ իրաւագորիկ, նեղ դրութեան մէջ գտնուած էին ազնուականների ձորտերը, միջին տեղը բռնում էին պետականները, իսկ համեմատօրէն աւելի թեթեւ դրութեան մէջ էին եկեղեցուն պատկանողները: ձորտութիւնից ազատուած էին հետեւեալ դէպքերում, 1. Իրանց գնելով, 2. պարտքը վճարելով, 3. Տի-

1. Д. П. Пурцеладзе Грузинск. крестьянск. грамоты. Тифлисъ 1882. նոյնի—Грузинск. дворянск. грамоты. Тифлисъ 1881. նոյնի.—Грузинск. церковн. гуджари (грамоты). Тифлисъ 1881.

2. Кипшидзе. Очеркъ крѣпостного права и крестьянской реформы въ Грузіи (Кавказскій Вѣстникъ 1902 г. № 6).

3. Сборникъ законовъ грузинскаго царя Вахтанга VI, Изданіе С. Френкеля, Тифлисъ. 1883. № № 258 և 260.

ընջեց վերաւորուելու դէպքում (եթէ թեթեւ է ընտանիքով, իսկ եթէ ծայր է եղբայրներով և աղագականներով), 4. բռնաբարման դէպքում (եթէ տէրը բռնաբարէր ճորտ աղջկան, ամբողջ ընտանիքն ազատուում էր և դառնում պետական), 5. ինքնակամ կերպով տէրն արձակում էր. 6. Հարստահարութիւնից փախչողները: ձորտութիւնից ազատուածները ստանում էին թարխանութեան թուղթ և ազատ գիւղացիներէ յարքը դառնում:

Ընդհանուր առմամբ գիւղացիներէ դրութիւնը Վրաստանում շատ ծանր էր. ժողովրդի մեծագոյն տոկոսը, կարելի է ասել, մասնուած էր դառն սարկութեան: Կայրուածատէրերն անխիղճ, անպատիժ կերպով իրենց ճիրաններում խեղդում էին թշուառ ժողովրդին: Տիրում էր կամայականութիւնը, քմահաճոյքը: Եւրոպացի ճանապարհորդ Նարզէնը, որ XVII դարում անցել է Վրաստանի վրայով, սոսկալի գոյներով է նկարագրում աղետակականներէ գործած շահատակութիւնները¹: Եթէ աչքի առաջ ունենանք և այն, որ շնորհիւ թագաւորների անիրաւութիւնների և արտաքին պատճառների աղետակականների թիւն օրէցօր աճում էր, այն ժամանակ պատկերն աւելի լրացած կըլինի²: Արտաքին արշաւանքները, պատերազմները հօ սովորական, մեշտ անպակաս էին:

Բացի վերև յիշուած գիւղացիներից Վրաստանում դրութիւն ունէր և գիւղացիութեան մի տեսակը, որը կոչւում է խիզան: Խիզանները կամ խիզանութիւնն ըստ երևոյթին, նոր ժամանակներում է առաջացել: Խիզանը սեփական հող չունի, նա կապալով է վերցնում հողը: Նա կապալով հողը վերցնում է աղետակականներից անորոշ ժամանակով կամ մշտապէս և բացի այդ, նա իրաւունք ունի, ըստ կայացրած համաձայնութեան, օգտուել և կայրուածատիրոջ մարդագետիկներէց, արօտատեղիներէց, անտառներէց, ջրերէց և այլն: Իսկ այդ ամենի փոխարէն նա բաւականաչափ պարտաւորութիւններ

1. Путешествіе Кавалера Шардена по Кавказью въ 1672—1673 гг. Переводъ Д. Носовича.
 2. Հերակլ Թաղաւորի ներկայացրած ցուցակից (Վէորդեակում 1785 թ.) աղետակականների թուի մասին (Կախէթիայում եւ Քարթլիկանայում) հետեւեալն ենք իմանում. Թաւաղներ 62 ընտանիք, Թաղաւորին պատկանող աղետակականներ՝ 118 ընտանիք, կաթուղիկոսին պատկանող՝ 45 ընտանիք եւ իշխաններին պատկանող՝ 486 ընտանիք. Այսքանը դեռ Կախէթիայում եւ Քարթլիկանայում (Տես Բուտով. Матеріалы для новой исторіи Кавказа. 1869 г. Томъ II. стр. 125—127):

ունի: Նա պէտք է, այսպէս օրինակ՝ 20 օր կալուածատիրոջ համար աշխատէ, 24 սայլ փայտ մատակարարէ և այլն: Եթէ խիզանն իր պարտաւորութիւնները չէր կատարում, այն ժամանակ կայրուածատէրը կարող էր նրան արտաքսել և ունեցած չունեցածին (նոյն իսկ տանը) տիրանալ: Բաւականաչափ փաստեր կան, թէ ինչպէս կալուածատէրերը շատ անգամ անիրաւացի կերպով խիզաններին արտաքսում և շահագործում էին, իրանց իրաւունքն ի շարք գործադրելով: Յայտնի է, որ շատ կալուածատէրեր խորամանկութեամբ դէպի իրանց էին գրաւում գիւղացիներին, իրանց անմշակ հողերը նրանց յանձնում և երբ վերջիններս մշակում էին, տուն—աեղ շինում, կալուածատէրերը բոլորովին կամայական կերպով այդ խիզաններին արտաքսում էին և նրանց աշխատանքին և ստացուածքին սերտանում¹:

III.

ԱՆԳՐԿՈՎԿԱՍԻ ԹՈՒՐԳ-ԹԱԹԱՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՐԴՆԵՐԻ ՀՈՂԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Անդրկովկասում երբորդ տեղը բռնում են թուրք-թաթարական ժողովուրդները: Թէև սրանք թուական առաւելութեամբ գերազանցում են միւս ժողովուրդներին, բայց կուլտուրայէս շատ յետամնաց են: Թուրք-թաթարները բնիկներ չեն, այլ գաղթել են Ասիայի խորքերից. սրանք սելջուկներն, թաթարներն, թէմուրլէկն, հորգաներն մնացորդներից են: Բոլոր այս ժողովուրդները դաւանում են իսլամական կրօնը և զբա համաձայն էլ կարգաւորել են իրենց հասարակական-քաղաքական և մասնաւոր կեանքը: Եւ նրանց կեանքի ներկայ պայմանները համարեա թէ նոյն են, ինչ որ դարեր առաջ էին: Քանի որ այս ժողովուրդները իրենց թէ հասարակական և թէ մասնաւոր կեանքում առաջնորդուում են Աօրանի և շարիաթի սկզբունքներով, սրանց մասին կարելի է նոյնն ասել, ինչ որ ընդհանուր է Իսլամը դաւանող բոլոր ժողովուրդներին:

«Այն կրօնը, օրին մենք Իսլամ անունն ենք տալիս, շատ խոր ազդեցութիւն ունի իւր հեռանդներէ վրայ: Թէպէտև Իս-

1. Խիզանների մասին տես Матеріалы для изученія экономическ. положенія государственныхъ Крестьянъ Закавказья. Томъ I. եւ Кн. Тумановъ, Аграрн. вопросы и преступленіе на Кавказѣ Тифлисъ 1901. стр. 57—47:

լամի ժողովուրդները տարբեր ազգերի և ծագման են պատկա-
 նում, սակայն խլամական աշխարհը ներկայացնում է մի միու-
 թիւն, աւելի մեծ չափով, քան քրիստոնէականը. այնպէս որ
 մենք չենք կարող շնորհունել, որ այդ կրօնը իւր հետևողները
 վրայ շատ խոշոր աշխարհութիւն է գործում, եթէ նոյն իսկ
 վիճելի համարուի այն, թէ կլիմայական և ազգաբնակչական պայ-
 մանները այդ ձևակերպման մըշտի աշակցել են: Այս ազդե-
 ցութեան մասին այնքան էլ չի կարելի կասկածել, քանի որ
 յայտնի է, որ արաբական մարդաբէի գիրքն իւր հաւատացեալ-
 ներին օրէնքներ է տալիս ոչ թէ միայն նրանց կրօնական, այլ և
 հասարակական և քաղաքական կեանքին վերաբերեալ: Նրա
 համեմատ է կարգաւորում Իսլամն իւր ընտանեկան կեանքը,
 նրանով է կառավարում սուլթանը իւր ժողովուրդներին: Մա-
 բուհից մինչև Հնդկական արշիպելաղը դորանք մեծ ազդեցու-
 թիւն է գործում մարդկանց կեանքի ձևերի և կարգերի վրայ,
 ինչպէս դարեր առաջ է գործել»¹:

Իսլամական կրօնը իւր հաւատացեալները վերաբերմամբ
 դեմոկրատիական սկզբունքներ է պաշտպանում: Ըստ դորանի
 բոլոր հաւատացեալները եղբայրներ են: Ռէմոկրատիական այս
 գիծը թէև դարերի ընթացքում խոշոր փոփոխութիւնների է
 ենթարկուել, բայց մինչև օրս էլ կարելի է գտնել իսլամական
 ժողովուրդների մէջ: Թուրք-թաթարական ժողովուրդները նոյն-
 պէս սկզբում առաջնորդուել են դեմոկրատիական սկզբունքնե-
 րով: Մեզ այստեղ հետաքրքրում են նրանց հողային պայման-
 ները. տեսնենք ինչ գրութեան մէջ էին:

Թուրք-թաթարների և Իսլամը դաւանող միւս ժողովուրդ-
 ների հողային պայմանների մէջ էական, խոշոր տարբերութիւն-
 ներ չկան. այնպէս որ նպատակայարմար է նախ՝ ծանօթանալ
 մահմեդականների հողային օրէնագրութեան ու հողային քաղա-
 քականութեան հետ. ընդհանրապէս և ապա՝ անցնել պարսիկ-
 ների և տաճիկների ակրապետութեան տակ գտնուած Անդըր-
 կովկասեան երկրների հողային պայմանների նկարագրութեան:

Մահմեդականութիւնն, ինչպէս առաջ, մասամբ և այժմ
 թափառական և կռուայէր ժողովուրդների կրօն է: Ըստ Իսլամի
 վարդապետութեան պէտք է բոլոր ազգերը մահմեդականութիւն
 ընդունեն, ողջ աշխարհը պէտք է Ալլահի համար նուաճել: Ամե-
 նուրեք մահմեդականութիւնը հանդէս է եկել որպէս աշխար-
 հակալ կրօն, նա ձգտել է որքազան կռուի միջոցով երկիր երկիր

1) Johannes Hauri, Der Islam in seinem Einfluss auf das Leben
 seiner Bekenner. Leiden. Կր. 4.

յեանից նուաճել, նորանոր ազգերի հարկատու դարձնել: Բոլոր
 մահմեդական ժողովուրդները համարեա թէ այս նպատակին են
 հետևել և շնորհիւ դրան առաջ են եկել բաւական ինքնօրինակ
 հաստատութիւններ, որոնք պէտք է նպաստեն այդ նպատակի
 իրագործման: Այդ հաստատութիւններից են Իսլամական ֆէո-
 դալիզմը (աւատականութիւնը), իսլամական հողային օրէնսգրու-
 թիւնը, որոնց հետ կարևոր է ընդհանուր կերպով ծանօթանալ:

Դորանի համաձայն բոլոր հաւատացեալները եղբայրներ
 են և իրար հաւասար: Նրա համեմատ էլ այն ամենն, ինչ որ
 նուաճում, ձեռք է բերում պէտք է բաժանել կռուողների
 մէջ: Մահմեդական գիտնականները համար մինչև այժմ էլ վի-
 ճելի է այն խնդիրը, թէ արդեօք բաժանման ենթակայ են բոլոր
 շարժական և անշարժ իրերն անխտիր, թէ միայն շարժականը:
 Ինչպէս յետագայ ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, ըստ
 դորանի իսկապէս ամեն տեսակ թալանած, կռուում ձեռք
 բերուած իրերը, նոյնպէս և հողը պէտք է բաժանեն կռուողների,
 կռուին մասնակցողների մէջ: Սկզբում աշխատել են այս
 սկզբունքն իրագործել, բայց շարունակ գոտարութիւնների,
 արդելքների են հանդիպել և ստիպուած են եղել բաժանման,
 թալանի իրաւունքը որոշ սահմանափակումների ենթարկել:
 Վերջի վերջոյ որոշել են բաժանել միայն շարժական իրերը, իսկ
 անշարժները տէրութեան սեփականութիւն են դարձրել: Իսլամի
 առաջնորդները շատ լաւ զգում, նախատեսում էին, որ եթէ
 կռուողներին, զինւորներին հողեր յատկացնեն, նրանք կարող են
 զինւորական ծառայութիւնը թողնել և գիւղատնտեսութեամբ
 պարագել. իսկ այն ինչ Իսլամական աշխարհակալ քաղաքա-
 կանութիւնը շարունակ պահանջում էր բազմաթիւ կազմ ու
 պատրաստ զինւորներ: Նրա համար էլ հենց աշխատում էին
 թալանի իրաւունքը կրճատել, սահմանափակել միմիայն շար-
 ժական իրերով: Եւ այս նրանց յաջողում է:

Պատմութիւնից յայտնի է, որ Օմարի փամանակից սկսած
 հողերն այլ ևս զինւորները մէջ չեն բաժանում և շարժական
 ու անշարժ իրերի մէջ որոշ տարբերութիւն է գրում: Այսու-
 ու հետև կռուողներն տրուում է միմիայն շարժական աւարը, իսկ
 հողն իր ընտանիքներով հարկատուութեան տակ են աւանդում:
 Բոլոր նուաճուած երկրների հողերը յոյսարարում են վախուժ
 (օրհնած իր). նրանք համարում են պետութեան սեփականու-

1) Johannes Hauri a. a. O. Կր. 163.
 1) A. Curland, Grundzüge der mohamedanischen Agrarverfassung
 und Agrarpolitik. Dorpat Կր. 26—28.

Թիւն, պետութիւնը ձեռք է բերում գլխաւոր սեփականատիրոջ իրաւունքը: Այսպիսով տէրութիւնը միւս կողմից էլ հնարաւորութիւն է ստանում այդ հողերից հարկ առնել, որն առաջ անհնար էր, քանի որ զինւորներին պատկանող հողերը հարկերից ազատ էին:

Հողերի պետականացումը Իսլամի նուաճած երկրների մէջ սկզբում առանց բացառութեան առաջ էր տարւում: Հարկատուութեան և վարչական տեսակէտից հողերը բաժանուած էին որոշ տեսակներէ, որոնցից յայտնի են երկուսը — 1. Դարուլ-իսլամի (մուսուլմանների հողեր) և 2. Դարուլ-հերթ (անհաւատների հողեր): Առաջին տեսակի հողերը չէին ենթարկուել նուաճման, զրանց վրայ հէնց սկզբից մուսուլմաններ էին ապրում: Սրանք վճարում էին տէրութեան իրենց եկամտի մի տասերորդը (ուշար): Երկրորդ տեսակին պատկանող հողերը ձեռք էին բերուել նուաճմամբ: Այս հողերն իրենց կողմից բաժանուում էին երեք կարգի: Առաջին կարգին պատկանում էին այն հողերը, որոնց բնակիչներն ինքնայոթար կամքով ընդունել էին Իսլամը և վճարում էին որոշ հարկ (խարաջ): Երկրորդ կարգին պատկանող հողերը պատերազմով էին ձեռք բերուել, իսկ երրորդ կարգին այն հողերն էին պատկանում, որոնց բնակիչներն ազատակամ հպատակութիւն էին ցոյց տուել: Վերջին երկու կարգի հողերի բնակիչներին տարբեր-տարբեր կերպով են վերաբերում: Եթէ բնակիչներն Իսլամի հակառակորդ էին հանդիսացել և միմիայն բռնի ոյժին էին տեղի տուել, այն ժամանակ նրանց հողերը խլուում էին և ազգային սեփականութիւն դարձնում, իսկ նրանց կոտորում, արտաքսում, կամ ստրկացնում էին: Այն հողերը, որ ընդհակառակը խաղաղ ճանապարհով էին ձեռք բերուում և որոնց բնակիչները իրենց կրօնի մէջ հաստատ էին մնում, համարում էին հարկատու. բնակիչները պարտաւոր էին գլխահարկ վճարել: Կային և այն տեսակ հողեր, որոնք մշակութեան յարմար չէին, կամ դեռ անյայտ այդպիսիները պատկանում էին իմամին 1:

1) Այս մասին տես 1. Tornaw, Das Eigentumsrecht nach moslimischen Rechte, էր. 294—296 (In der Zeitschrift der deutschen morgenländischen Gesellschaft. Bd. 36), 2. Tischendorf, P. Über das System der Lehen in den moslimischen Staaten. Leipzig 1871. էր. 12—17, 3. Н. А. Карауловъ. Основы мусульманскаго права (Сборникъ матеріаловъ для описанія мѣстностей и племенъ Кавказа. Томъ XXXX 1909 г.) էւ 4. Н. Нофаль Куреъ мусульманскаго права. О собственности. 1886 г.

Յոյր այս հողերի գլխաւոր սեփականատէրը պետութիւնն էր համարւում: Պետութիւնն իրաւունք ունէր այդ հողերին ձեռք տալու, միայն սկզբունքորէն այդ իրաւունքը պէտք է յօդուտ ընդհանրութեան գործադրուէր: Բայն այս, այդ իրաւունքը որոշ սահմանափակումներ ունէր: Պետութիւնը տարբեր իրաւունքներ ունէր անմշակ, խոպան հողերի վրայ, տարբեր մուսուլմաններ ձեռքի տակ դանուածների վրայ, տարբեր անհաւատների հողերի վրայ և այլն:

Որովհետև սկզբունքորէն բոլոր տեսակի հողերն անվաճառելի էին և միւս կողմից պետութիւնն էլ հնարաւորութ չունէր իւր պաշտօնեաների միջոցով այդ հողերի վերաբերեալ գործերը վարել, նրան մնում էր երկու միջոց. 1. հողերը կապալով տալ. 2. որպէս աւատ այն անձանց յանձնել, որոնք իրենց ծառայութեամբ աչքի էին ընկնում և արժանի էին վարելու ծառայութեան: Վերջին դէպքում հողը արւում էր միմիայն օգտուելու նպատակով և ոչ որպէս սեփականութիւն 1: Պետութիւնն այս երկու միջոցին էլ դիմել է: Մահմեդական ուսում-թիւնն այս երկու միջոցին էլ դիմել է: Մահմեդական ուսում-թիւնները պետութեան մասնաւոր անձանց հող տալու մի քանի տեսակներ են թւում, որոնք իկտա (աւատ) ընդհանուր անուն են կրում: Յայտի են իկտայի երեք գլխաւոր տեսակը. 1. հողը արւում էր որպէս սեփականութիւն, 2. միմիայն օգտուելու համար և 3. շահագործելու համար 2: Որպէս սեփականութիւն այն հողերն էին տրւում, որոնք անմշակ և անբնակ են և նրան են պատկանում, ոյ առաջին անգամ սկսել է մշակել, խնամել: Որպէս սեփականութիւն կարող են տրուել իմամի կողմից և թշնամու հողերը՝ պատերազմից յետոյ: Օգտուելու համար արւում էին կամ հողերը և կամ նրանց եկամուտները: Այդ հողերն իմամը տալիս էր նրանց, որոնք որոշ ծառայութիւններ էին մատուցել: Օգտուելու համար տրւում էր որոշ ժամանակամիջոցով: Եթէ ժամանակից առաջ ստացող միանում էր, այն ժամանակ հողը նորից պետութեան էր անցնում. ժառանգները քիչ բան էին ստանում: Շահագործելու համար տրւում էին հանքեր պարունակող հողերը, ճանապարհները, ջրաղացները, շուկաներն և այլն:

Իկտայի այս երեք տեսակից իւրաքանչիւրը մի որոշ նպատակի էր հետեւում: Առաջին տեսակի նպատակն էր նպաստել երկրի կուլտուրական յառաջադիմութեան, հողերի մշակման և

1) Tischendorf. a. a. O. էր. 16—17.
2) Tornaw. a. a. O. էր. 320—324 էւ Tischendorf a. a. O. էր. 5—18.

միւս կողմից՝ պետութեան եկամուտները շատացման: Երկրորդ տեսակի նպատակն էր զինւորականներին իրենց ծառայութեան փոխարէն վարձատրել, միւս կողմից նուաճած երկրները վրայ ունեցած տիրապետութիւնը հաստատ հիմքերի վրայ դնել: Երկրները հարկերի և եկամուտների մի մասը զինւորականներին տալով, պետութիւնը յոյս ունէր, որ դրանով կարող էր նուաճած երկրները իւր ձեռքում պահել: Այս ձևով հողեր էին արւում և հողւորականներին, դատաւորներին, դրացիներին և ուրիշ պաշտօնեաներին՝ իրենց ռոճիկ փոխարէն: Այսպէս իսլամական հողաբաշխումը մի տեսակ վարձատրութեան ընդթ էր կրում, ռոճիկ փոխարէն էր: Քանի որ պետութիւնը հնարաւորութիւն չունէր իր պաշտօնեաներին և զինւորներին ռոճիկ տալ, դրա փոխարէն նրանց յանձնում էր սրոշ հողերի եկամուտների և հարկերի մի մասը: Պաշտօնեաները և զինւորականները պէտք է միայն նշանակած եկամուտներն ու հարկերն առնէին, զի զացնելի վրայ նրանք ուրիշ իրաւունքներ չունէին (ճորտատիրական): Այնպէս որ ճորտութիւն, կալուածատիրութիւն գոյութիւն չունէին:

Ինչ վերաբերում է հարկերին և տուրքերին, դրանք ըստ դորանի բաժանում են չորս տեսակի 1. 1. զիկա, 2. ուշար, 3. հերոդի և 4. զիեցիէն:

Զիկատը մի տեսակ հարկ է, որ առնում են կարողութիւնից կամ եկամտից: Այս հարկը վճարում են միայն մուսուլմանները: Զիկատը գործադրում են գլխաւորապէս պետութեան կարիքները վրայ, բայց մի որոշ մասն էլ աղքատներին է տրւում:

Ուշարը եկամտային հարկ է. առնում են այն հողերից, որոնք տասանորդի հողեր են յայտարարուած: Այս հարկը վճարում են մուսուլմանները:

Հերոդին մի տեսակ հողային հարկ է, որը վճարում են նորագործ մուսուլմանները և հարկատու անհաւատները:

Գիեցիէն-ը գլխահարկ է, որը վճարում են ոչ մուսուլմանները, այսինքն՝ հայտակ անհաւատները:

Իսլամական հողային այս հարկերն ու տուրքերն առհասարակ իւրացրել են Իսլամը դաւանող բոլոր ազգերը: Պարսիկների և տաճիկների հողային տուրքերն էլ նոյն հիմունքներն ունին: Մինչև ռուսական տիրապետութիւնը Անդրկովկասի մեծ մասը գտնւում էր տաճիկների և պարսիկների իշխանութեան տակ և այդ պատճառով էլ Անդրկովկասի հողային կարգերը բաւական ազդուած են Իսլամականից, որի հետքերը մինչև օրս էլ նշմարելի են:

1) Tornaw. a. a. O. 318.

Անդրկովկասի մեծ մասը ռուսական տիրապետութիւնից առաջ բաժանուած էր պարսից և տաճիկ տէրութիւնների մէջ. պարսից պատկանում էր հարաւ-արևելքը (Նրևանի, Նախ-Չևանի, Ղարաբաղի, Գանձակի, Շեքի, Շիրվանի, Շամախու և այլ խանութիւնները), իսկ տաճիկայ՝ հարաւ-արևմուտքը (Ախալցխայի, Ախալքալաքի, Ղարսի փաշայութիւնները, Բաթում, Արզուի և Վրաստանի արևմտեան մասերը): Պարսիկական տիրապետութիւնն աւելի հին է և Անդրկովկասում աւելի ամուր հետքեր է թողել, քան տաճիկականը: Դրա համար էլ նախ պէտք է նկարագրել պարսից տիրապետութեան տակ գտնուած Անդրկովկասեան երկրների հողային պայմանները:

Պարսիկական հողային օրէնսդրութիւնը և աւատական կարգը հիմնուած է համարեա թէ նոյն սկզբունքները վրայ, ինչ որ ընդհանուր Իսլամականը, որ քիչ վերև նկարագրուեց: Նոյնիսկ սմանք ենթադրում են, որ Իսլամը իւր հողային օրէնսդրութիւնը և աւատական կարգը ընդօրինակել է պարսիկներին: Եւ իսկպէս, Պարսիկաստանում, Իսլամի տիրապետութիւնից առաջ, Խորով Նուշիրվան թագաւորի ժամանակ գոյութիւն ունէին այնպիսի կարգեր, որ վերև նկարագրած մուսուլմանական տէրութիւնները «իկա»-ն են յիշեցնում 1):

Շարդէն ճանապարհորդը, որ ետևը ժամանակ ապրել է Պարսիկաստանում (17 դարի երկրորդ կեսին), իւր ճանապարհորդական աշխատութեան մէջ 2 յայտնում է, որ Պարսիկաստանում հողերը բաժանուած են գլխաւորապէս երկու կարգի-պետական և թագաւորական. բացի այդ կան և մասնաւոր ու մեչիկապատական հողեր: Առաջին երկու տեսակի հողերը կազմում են երկրի հողերի մեծագոյն տոկոսը: Դրանց եկամուտները է հոգացում պալատի ծախքերը, մինիստրների, պաշտօնեաների և զօրքի ռոճիկները: Մեչիկապատական հողերն անվաճառելի են և գտնւում են հողւորականների ձեռքում: Մասնաւոր հողերը մասնաւոր սեփականութիւն չեն կազմում, այլ 99 տարով կապալով տրուած են. այդ ժամանակամիջոցն անցնելուց յետոյ, հողի մի տարուայ եկամուտները պէտք է ստանայ տէրութիւնը, և ապա կապալը կարող են վերանորոգել:

Շարդէնի տուած հողերի այս կլասիֆիկացիան մինչև օրս էլ գոյութիւն ունի Պարսիկաստանում: Ըստ Տորնաուի 3) Պարսիկաստանում հողը բաժանուած է երեք տեսակի. պետական,

1) Tischendorf a. a. O. կր. 26.
 2) Путешествіе Кавалера Шардена.
 3) Tornauw, a. a. O. կր. 325.

Թագաւորական և մասնաւոր: Պետական հողերը կոչուում են մուկեֆեա կամ մեմալը. սրանց եկամուտներով պահուում են զօրքը և նահանգների կառավարութիւնը: Այս հողերը մեծ մասամբ կապալով տրուած են նահանգների փոխարքաներին, որոնք և իրենց կողմից ուրիշներին են տալիս: Թագաւորական հողերը շահի սեփականութիւնն են կազմում: Սրանց եկամուտներից հողացում են պալատի ծախքերը և պաշտօնեաների ու ծառաների ուժիկները: Մասնաւոր հողերը կազմում են մասնաւոր անձանց սեփականութիւն. սրանք ձեռք են բերուել սեփական աշխատանքով, որոշ դաշնագրերով կամ ժառանգութեամբ:

Պարսկաստանում հողերի մեծագոյն մասը պետական և թագաւորական են. մասնաւոր հողեր շատ քիչ կան: Անդրկովկասում տիրապետած երկրները նոյնպէս կազմում էին պետութեան կամ շահի սեփականութիւն: Այդ երկրներից նախճուանի խանութիւնը միացրած էր Պարսկաստանին, իսկ որոշ կախման մէջ էր և Երևանի խանութիւնը, իսկ մնացած խանութիւնները (Գանձակի, Ղարաբաղի, Շէքի, Շիրվանի, Թալիշի, Բագուի, Գերբենդի, Ղուբայի և այլն) մեծ մասամբ միմիայն ձանաչում էին շահի գերիշխանութիւնը և որոշ հարկ էին վճարում: Պարսից տիրապետութեան տակ գտնուող երկիրները բաժանուած էին նահանգների, որոնց կառավարում էին շահից նշանակուած փոխարքաները: Այս փոխարքաները (խան, սարդար և այլն) շատ բացարձակ իրաւունքներ ունէին, միայն շահի վերաբերմամբ նրանք պարտաւոր էին տարեկան որոշ հարկ վճարել և զօրք տալ պատերազմի ժամանակ: Շահին վճարելիք հարկի քանակը միշտ որոշ չէր. իւրաքանչիւր անգամ նոր փոխարքայ նշանակելիս որոշուում էր և նրա վճարելիք հարկը: Թէ ինչպէս է փոխարքան երկիրը կառավարում, ինչքան հարկեր էր առնում հպատակներից և այլն, այդ մասին կենդրոնական իշխանութիւնը չէր մտածում: Եւ որովհետեւ փոխարքաններն անորոշ ժամանակով էին իրենց պաշտօնի մէջ, դրա համար աշխատում էին հանգամանքներից օգտուել, շատ հարստութիւններ ժողովել:

Փոխարքայութիւնը բաժանուում էր խանութիւնների և մհալների: Խանութեան գլխաւորը կոչուում էր խան. նա նշանակուում էր շահի կամ սարդարի կողմից: Մհալների կառավարիչները կոչուում էին նայիբ, բէկ, աղա, սուլթան, իւզբաշի, մելիք և այլն: Նայիբները, բէկերը, աղաները մուսուլմանական մհալների վրայ էին, մելիքները՝ հայկականի, իսկ սուլթանները՝

Թախաւականների: Բէկերը և մելիքները, ինչպէս և միւս պաշտօնեաները, նշանակուում էին շահից, սարդարի կամ խանի կողմից: Սրանք բաժանուում էին երեք կարգի,—1. ժառանգական (նրանք՝ որոնք այդ պաշտօնն ստացել էին շահից առանձին Ֆերմանով), 2. խանի կողմից նշանակուած և 3. ժամանակաւոր կամ ժառանգական (սրանք առանց Ֆերմանի էին): Ընդհանրապէս պաշտօնը արւում էր անորոշ ժամանակով, իսկ եթէ մէկը հաւատարիմ էր ծառայում՝ որոշ գէպքերում էլ նոյն իսկ ժառանգաբար էր անցնում: Այս բոլոր պաշտօնեաները կախումն ունէին սարդարից կամ խանից. շարունակ սրանց էին ենթարկուում և կատարում էին սրանց կամայականութիւնները: Բէկերը, մելիքներն ունէին ազմինիտարացիական-վարչական իրաւունքներ, որոնց կրճատելը կամ ընդարձակելը կախուած էր խանից կամ սարդարից: Գառավարութիւնը մուսուլմանական բաժնում գտնուում էր հողւորականների ձեռքում, իսկ հայկական մասում՝ դարձեալ յանձնուած էր մելիքներին: Հարկերը հաւաքելու համար կար առանձին պաշտօնեայ, որ կոչուում էր սարբիար:

Բոլոր պետական պաշտօնեաները ուժիկներ չէին ստանում, այլ փոխարէնը նրանց յատկացուում էր որոշ հողեր (գիւղերի) եկամուտների մի մասը, որը կոչուում էր մուլը, իսկ ստացողը միւլբադար: Այս իրաւունքը ոմանց ժառանգաբար էր արւում, իսկ ոմանց էլ ցկեանս կամ մինչև այնքան, որքան պաշտօնի մէջ է: Այսպէս բէկերը, աղաները, մելիքները և այլն տոհմական ազնուականներ չեն, այլ պետական պաշտօնեաներ: Սրանք գիւղացիներին, նրանց հողերի վրայ երբէք տիրապետական իրաւունքներ չունէին. եթէ գիւղացիներին նեղէին, վերջիններս իրաւունք ունէին խանին կամ սարդարին դանդաղուելու:

Պարսից տիրապետութեան տակ գտնուած հողերն Անդրըկովկասում բաժանուում էին երեք կարգի.—1. հարկատու հողեր (arz chärädje), որ պատկանում էին տէրութեան, 2. իմամի հողեր (arz imami), որ պատկանում էին խանին և 3. մասնաւոր կամ միւլբադարական հողեր, որոնց եկամուտները ստանում էին պետական պաշտօնեաները: Մասնաւոր սեփականութիւն էին կազմում միայն անասեղերը, ջրաղացները և փոքրիկ հողաբաժինները: Անտառներից ամեն ոք կարող էր ձրի և աղա

1) Բէկերի. աղալարների եւ այլ պաշտօնեաների իրաւունքների եւ պարտականութիւնների մասին տես. АКТЫ Кавказск. археографическ. Коммисси. томъ VIII стр. 469.

1) Hathausen, August. Transkaukasia Bd. 2. стр. 78.

օգտուել, անտառները պատկանում էին շահին¹: Անմշակ, անսպեք հողերը կոչւում էին խալիս. այդ հողերը, եթէ խաները, բէկերը գերիներ և թափառականներ դրանց վրայ բնակեցնելով՝ մշակելի էին դարձնում, նրանց էին պատկանում:

Գիւղացիք անտեսական տարբեր պայմաններում էին գրանւում և բաժանւում էին մի քանի տեսակներէ, ինչպէս են՝ աւհաթ, միւլքադար, տիֆիլական, եարիքեար, աւաղար և այլն: Ռահաթները հարկեր ու տուրքեր վճարում էին պետութեան: Միւլքեադար կոչւում էին այն գիւղացիք, որոնց գիւղի եկամտի մի մասը հասնում էր պետութեան պաշտօնեաներին (բէկին, հոգևորականին և այլն): Տիֆիլական կոչւում էին այն գիւղացիք, որոնք պետական հարկերն ու տուրքերը վճարում էին մի որևէ անձնաւորութեան. որն այդ իրաւունքը ստացել էր շահից իւր լաւ ծառայութեան համար որպէս վարձատրութիւն: Եարիքեար² կոչւում էին այն գիւղացիք, որոնց խանը բնակեցրել էր անմշակ կամ իւր սեփական հողերի վրայ. որոնք խանից ստանում էին երկրագործական բոլոր պիտոյքները (սերմ, լճիւն, գործիքներ և այլն), միայն այն պայմանով, որ հնձից յետոյ խանի ծախքերը պէտք է վճարէին և մնացածն էլ խանի հետ կիսէին: Ռաւաղար կոչւում էին այն գիւղացիք, որոնք միւլքեագարները սեփական հողերը մշակում էին զանազան պայմաններով: Գիւղացիք ամենքն էլ անձնապէս ազատ էին, նրանք հողի հետ չէին կապուած և ազատ կարող էին շարժուել: միայն հարկերի և տուրքերի կողմից նրանց մէջ որոշ տարբերութիւն էր գրւում:

Ինչ վերաբերում է հարկերին և տուրքերին, իւրաքանչիւր խանութեան մէջ նրանց տեսակը և չափը բաւական տարբեր էին: Ընդհանուր կարելի է հետևել այն ասել: Մշտական, տեղական հարկի տակ էին գիւղատնտեսութեան բոլոր ճիւղերը. — երկրագործութիւն, անասնապահութիւն, այգեգործութիւն, շերամապահութիւն և այլն: Մշտական հարկի բնոյթ էին կրում և բայրամիք (նովբուզի և բամազանի ժամանակ) կոչուած նուէրները և մի շարք ուրիշ նուէրներ (մետաքսի, փողի, հաւերի, գառների և այլն): Ծառայողները, պաշտօնեաները նոյնպէս իրենց ռոճիկ փոխարէն փողովոյցից ստանում էին հարկի

ձեւով որոշ բերքեր (միայն նրեանի սարդարութեան մէջ պաշտօնեաներին ռոճիկ էր նշանակուած):

Հարկերի տեսակները.

1. Ծխահարկ. վճարում է ընտանիքը և ոչ առանձին անհատները:

2. Գլխահարկ. այս դոյութիւն ունէր Գանձակի և Նախ-Ջուանի խանութիւնների մէջ (15 տարեկանից սկսած՝ տղամարդիկ հարկատու են): Այս ծառայում է որպէս լրացուցիչ հարկ:

3. Բահրա կամ մալճար (բերքերի հարկ). վճարում էին ընտանիքի բոլոր անդամները, գարու, կորեկի և վաղի հնձի $\frac{3}{50}$, $\frac{13}{50}$, $\frac{20}{50}$, մետաքսի և բամբակի $\frac{6}{50}$ -ը:

4. Բաղիւղի. առնում էին փողով. վճարում էին փողային եկամտի $\frac{1}{14}$ -ը կամ բաւ ծառերի թուի, հողի տարածութեան և այլն:

Բացի սրանցից, գիւղացիք կատարում էին մի շարք ծառայութիւններ, որ կոչւում էին օլտա և բեդեար: Որոնք ընդհանուր պետական էին, կամ խանի համար: Պետական ծառայութիւններն էին՝ ճանապարհներ շինել, բերքեր կառուցանել, սայլեր տալ պատերազմի կամ այլ ժամանակ և այլն: Խանի համար պարտաւոր էին փայտ, ածուխ մատակարարել, նրա պաշտօնեաներին ձիաներ տալ, նրանց կերակրել, խանի հողերը մշակել և այլն¹:

Խանի գիւղացիները վճարում էին միայն հնձի $\frac{2}{5}$ — $\frac{4}{5}$ -ը, միւս հարկերից ազատ էին: Միւլքեադար գիւղացիները վճարում էին, բացի այլ հարկերից, հնձի $\frac{7}{50}$ -ը: Այս հարկը բաժանւում էր երկու մասի. դրա $\frac{4}{50}$ -ը կազմում էր հողային հարկը և կոչւում էր միւլք, իսկ $\frac{3}{50}$ -ը պետական հարկը և կոչւում էր տիվլ: Միւլքը ստանում էր պետութեան պաշտօնեաներից մէկը կամ մի քանիսը, իսկ տիվլը՝ այն անձնաւորութիւնը, որը պետութեան լաւ ծառայութիւն էր մատուցել: Պատահում էր, որ նոյն գիւղում միւլքը մէկին էր պատկանում, տիվլը՝ մի ուրիշին, կամ երկուսը միասին՝ մի անձնաւորութեան²: Տիվլը և միւլքը գրւում էին որոշ ժամանակով, (վերջինը սովորապէս ցմահ), բայց կարող էին և ժառանգաբար անցնել, միայն թոյլատրութեամբ:

Այս ընդհանուր տեղեկութիւններից յետոյ, հետաքրքիր է ծանօթանալ և առանձին խանութիւնների հարկային սիստեմ

1) Сводъ матеріаловъ для изучен. эконом. быта государст. крестьянъ Закавказск. края. Томъ I. ч. II стр. 2.

2) И. Шопень. Историческій памятникъ состоянія Армянской области въ эпоху ея присоединенія къ Россійской имперіи. стр. 926.

1) С. А. Егіазаровъ. Исслѣдованія по исторіи учреждений въ Закавказьи. Томъ I стр. 299.

2) Сводъ матеріаловъ. а. а. О. томъ I ч. II стр. 4.

ների հետ: Նաև խանութիւններն վերաբերմամբ անդեկուծիւն-
ներ, գժբախտաբար, պահատում են. ամենից շատ յայտնի են
Նրևանի սարգարութեան ժամանակ եղած հարկերն ու ասու-
քերը: Այստեղ էլ աւելի կանգ եմ առնում Նրևանի սարգա-
րութեան վրայ:

Նրևանի սարգարութեան մէջ հարկերն առնում էին փողով
և բերքերով: Փողով ստացուող հարկերը բաժանուում էին երկու
տեսակի. — ուղղակի և անուղղակի հարկի: Ուղղակի էին հետևեալ
հարկերը. 1. Համայնքներից ստացուող հարկը. այս հարկն առ-
նում էին քաղաքացիներից, գիւղացիներից, թափառականներից
և էջմիածնի վանքից: 2. Զանազան նուէրներ, որ հարկի
ընդթ էին կրում (նովորուզ բայրամին և բամազանին): 3. Պե-
տութեան պաշտօնեաների ուսձիկները (դուլուղ փուլի և այլն):
Աննուղղակի հարկերը ստացուում էին հանքերից, մաքսերից
և այլն: Փողային հարկերը ժողովում էին երկու անգամ — աշնանը
հնձից յետոյ և Վետարուարին:

Բնական բերքերով վճարում էին հողային և այլ հարկերը:
Ամեն բերքից համարեա թէ հարկ էին առնում. (երկրի բերքե-
րից, անասուններից, բուրդ, իւղ, փայտ, ածուխ, հաւ, ձու
և այլն): Հողերը բաժանուում էին չորս կարգի, բահրաբար,
եարիքեար, բաշպար և կապալով տուած: Բահրաբար կոչուած-
ներն ամենալաւ հողերն էին. առնում էին բերքի 1/5 մասը:
Եարիքեարը կէս կապալուած հողերն էին. սարգարը գաղթա-
կան գիւղացիներին իւր հողերի վրայ ընահեցնում էր, նրանց
անասուններ, գործիքներ էր տալիս երկիրը մշակելու և փոխա-
րէնը ստանում էր բերքի կէսը: Բաշպարական հողերից առնում
էին հնձի 2/5-ը: Բնական հարկ առնում էին և անասուններից,
գործուածքներից և այլ բերքերից. այսպէս՝ 100 ոչխարից կամ
այծից վերցնում էին մէկ փոքր և մէկ մեծ. կովերից վերց-
նում էին իւղ, իւրաքանչիւր տնից ստանում էին փայտ, ածուխ,
ձու, հաւ և այլն:

Բնական բերքերը ժողովում էր սարքեարը: Նա կալսելուց
առաջ գալիս էր գիւղը. երբ կալսում, վերջացնում էին, նա
հացահատիկները ժողովել էր տալիս մի տեղ և կնքում: Պետու-
թեան, լիանին հասանելիք մասը վերցնելուց յետոյ, նոր թոյլ էր
տալիս տուն տանելու:

Նրևանի սարգարութեան ստացած հարկերը փողի վերածած
հետևեալ պատկերն են ներկայացնում 2:

1) Шопень, а. а. О. тл. 967. Шопень, а. а. О. тр. 975.
2) Шу Шопень а. а. О. часть V.

| | | |
|-----------------------------|---------|---|
| Փողային հարկ | | |
| 1. Ուղղակի | 92,307 | } |
| 2. Անուղղակի | 66,530 | |
| Հողային բերք | | |
| 1. Հացահատիկների | 337,741 | |
| 2. Խոտի | 4,000 | |
| 3. Յարգի | 10,000 | |
| 4. Բամբակի | 7,500 | |
| Անասունների | 19,131 | |
| Բրդի և բրդեայ գործուածքների | 4,151 | |
| Իւղ | 11,942 | |
| Փայտ և ածուխ | 2,559 | |
| Հաւ և ձու | 808 | |
| Զիւռուորների համար | 86,400 | |
| Սարքիւորների ուսձիկ | 10,083 | |
| | 653,152 | |

Նախճուանը և Օրդուբաթը միացած էին Պարսկաստանին
և երկուսն էլ կառավարում էր մի խան: Երկիրը տրուում էր
խանին կապալով. այսպէս Նախճուանի նահանգի կապալագինն
էր 90083 ը. 50 կոպ.: Խանն այդ կապալագինն և իւր օգուտը
հանում էր հարկերից: Եթէ չկարողանար կապալագինը վճարել,
այն ժամանակ իւր կալուածքներով և անձնապէս պատասխա-
նատու էր:

Խանն առնում էր հետևեալ հարկերը.

1. Գլխահարկ. վճարում էին տղամարդիկ 15 տարեկանից
վեր. հայերից առնում էին 4 ըուբլի, իսկ թուրքերից 2 ըուբլի
20 կոպէկ:

2. Եխահարկ. առնում էին իւրաքանչիւր ընտանիքից.
հայերից առնում էին 4 ըուբլի 20 կոպէկ, իսկ թուրքերից
4 ըուբլի:

3. Անասունների հարկ. գոմէշին՝ 2 ըուբլի 80 կոպէկ,
կովին՝ 1 ըուբլի, հորթին՝ 32 կոպէկ, շորուն՝ 2 ըուբլի, ոչխա-
րին՝ 25 կոպ. մեղուների փեթակին՝ 32 կոպ.:

4. Բերքերի հարկ. փողով առնում էին այգիների հարկը,
բամբակի, այգեգործութեան, բրնձի, կտաւի, յարգի և այլ
բերքերի հարկ: Մի խալվար հողից, որի վրայ խաղողի թփեր
կային, առնում էին 18 ըուբլի, 1000 պտղատու ծառին՝ 12
ըուբլի, ընկուզենի ծառին՝ 40 կոպ., մի խալվար բամբակին՝
8 ըուբլի 80 կոպ., մի խալվար յարգին՝ 2 ըուբլի, մետաքսի
արգիւնքի 1/3-ը, եոնջայ խոտի հնձի 5/3-ը և այլն:

5. Հողերի բերք. պետական հողերից առնուով էին հնձի 5|10-ը, իսկ միւլքեադարականներէց՝ 2|10-ը միւլքեադարին և 2|10-ը գանձարանին:

Միւս խանութիւնները մասին կարելի է հետեւեալն ասել: Ղարաբաղի խանութեան մէջ շատ բան անորոշ էր և կախուած խանի կամայականութիւններէց: Բէկերը շատ էին նեղուով ժողովրդին, որովհետեւ նրանք կարճ ժամանակով էին նշանակուով և ենթակայ էին խանի կամայականութիւններին:

Շէքիի, Շիրվանի, Գեղբենդի և Ղուբայի խանութիւնները մէջ բէկերը հաստատ դրութեան մէջ էին. այնպէս որ ժողովրդին չէին նեղում: Գանձակի խանութեան մէջ բարձր դասակարգ գոյութիւն չունէր, այնպէս որ գիւղացիների դրութիւնը բաւական լաւ էր:

Շէքիի խանութեան մէջ առնուով էին հետեւեալ հարկերը:

- 1) Թաւջի—փողային հարկ.
- 2) Հողային եկամտային հարկ (մուստամեր):
- 3) Անձնական տուրք.
- 4) Մալջհար—հնձի 1|10-ը.
- 5) Բայրամլիկ—նուէրներ.
- 6) Ղուլլուղիուլի, դարդափուլի և այլն.
- 7) Խանի պաշտօնեաների ռոճիկ (գրնաղփուլի, դարդափուլի և այլն):

Նման հարկեր գոյութիւն ունէին և Գանձակի ու Ղարաբաղի խանութիւնների մէջ¹⁾, Թալիշի խանութեան մէջ գոյութիւն ունէին հետեւեալ հարկերը:

- 1) Օթախ խարճի և չափար փուլի—խանի ձիաւոր ծառաների վարձ:
- 2) Ղուլլուղ և Թաղվիլանի—խանի ծառաների օգտին:
- 3) Միւրդայեանի—յօգուտ խանի քարտուղարին. գիւղից 20—100 եւթլի և 2—10 չեփերտ ցորեն:
- 4) Շերբեօչի փուլի—յօգուտ խանի շերբեօչիների (օջաւակ պատրաստողներ). գիւղից 10—80 բուբլի և 2—10 չեփերտ ցորեն:
- 5) Աղ—գիւղից 8—10 բաթման:
- 6) Աթարփասի—խանի ձիաների համար (գարի):
- 7) Բայրամլիք—100—200 բուբլի խանի ծառայողների գուարձութեան համար:
- 8) Խանի ջորեպանի համար իւրաքանչիւր գիւղ տալիս էր

1) Տես. Сводъ матеріаловъ. а. а. О. т. I և II.

մի մի ձեռք շոր, ջորիների համար մի մի չուլ, համեալի համար կտոր և Թեւ, մի քանի զոյգ պարկ:

9) Քեարխան—խարջի—խանի խոհանոցի համար 1—5 բաթման իւղ, 2—20 ոչխար, մի եղ, 1—5 բաթման բուրդ և այլն¹⁾:

Շատ խանութիւնները մէջ ընդհանրապէս տիրում էր կատարեալ կամայականութիւն, մանաւանդ վերջին ժամանակները: Որոշուած հարկեր, տուրքեր համարեա թէ չկային, ով ինչքան ուզում էր առնում էր: Տիրում էր արեւելեան բացարձակ բռնակալութիւն: Օրէնք, կարգ, կանոն, հաշուապահութիւն գոյութիւն չունէր: Ժողովուրդն անմուռն իբրևով տանում էր խաների և անթիւ բէկերի ու այլ ծառայողների կամայականութիւնները: Քիչ թէ շատ բարեկարգ դրութեան մէջ էին Երևանի սարդարութիւնը, Գանձակի խանութիւնը և Պարսկաստանի միացրած երկրները (Նախջուանի և Օրդուբաթի խանութիւնները): Համեմատօրէն աւելի լաւ դրութեան մէջ էին և Հայ մելիքների հպատակները, մանաւանդ սկզբն շրջանում, երբ դեռ ազատ էին պարսկական տիրապետութիւնից և շրջակայ խաների շահատակութիւններից:

Անգրկովկասի հայկական մասերում պարսկական խանութիւնների կողքին գոյութիւն ունէին և հայկական անկախ իշխանութիւններ, որոնք յայտնի են մելիքութիւն անունով: Մելիքութիւնները հայոց մէջ վաղուց գոյութիւն ունէին. սրանք հին հայկական իշխանութիւնների բեկորներն էին, որ իրենց գոյութիւնը կարողացել էին պարսկական տիրապետութեան տակ մի կերպ պահպանել: Մելիքներն անկախ իշխաններ էին. սկզբում նրանք ձանաչում էին միմիայն շահի գերիշխանութիւնը, բայց յետոյ ստիպուած եղան ենթարկուել շրջակայ խաներին: Մելիքութիւնները գոյութիւն ունէին Ղարաբաղում, Գանձակի խանութեան մէջ, Սիւնիքում և Երևանի սարդարութեան մէջ. ամենից նշանաւորներն էին Ղարաբաղի մելիքութիւնները, որոնք յայտնի են Խամայի մելիքութիւն անունով: Մելիքութիւնն իւր քաղաքական-իրաւական կողմերով բաւական հետաքրքիր է և արժանի որոշ ուշադրութեան: Մելիքներն, ինչպէս յիշուեց, հին հայկական իշխանների շառաւիղներից էին. նրանք իրենց իշխանութիւնը ստացել էին որոգոյ սրբի: Պարսկական տիրութիւնը ձանաչել էր նրանց այդ իրաւունքները և երբէք ձեռք չէ տուել դրանց: Միայն յետագայում կառավար-

Memor

2) Տես Ե. Ալալյանի. Գանձակի դաւառ. (Աղղազրական հանդէս. Ե. զիրք. եր. 251—252).

ըութիւնն իւր կողմից սկսել է նոր մելիքութիւններ հաստատել, ստեղծել: Մելիքն իւր մելիքութեան մէջ միանգամայն ինքնիշխան էր. նա ունէր անսահման իրաւունքներ, նրա կամքը հպատակները համար օրէնք էր. նա անօրինում էր, ոչ թէ միայն մարմնաւոր, այլ շատ անգամ և հոգևոր իշխանութեան վերաբերեալ գործեր: Մելիքները հետևեալ իրաւունքներն ունէին.

- 1) Հարկ վերցնելու.
- 2) Զինւոր առնելու.
- 3) Պատեր տեսնելու.
- 4) Կարգ պահպանելու.

Մելիքութեան ամբողջ կառավարութիւնը գտնուում էր մելիքի ձեռքում: Նա իւր կողմից իւրաքանչիւր գիւղի վրայ նշանակում էր տանուտէր: Տանուտէրի և սրա օգնական գղերի պարտականութիւններն էին. հարկեր հաւաքել, փորրիկ դատեր տեսնել, կարգի վրայ հսկել, զինւոր հաւաքել և այլն: Տանուտէրը ռոճիկ չէր ստանում. բայց ժողովուրդը երկու օր վարում էր նրա հողը, նրա համար փայտ էր բերում և այլ ծառայութիւններ կատարում:

Մելիքները ժողովրդից ստանում էին.

1) Տասանորդ՝ հացահատիկներից և խոտից: (Իգիւրմիսրդի մելիքութեան մէջ առնուում էին հացահատիկների 1/3-ը. այս հարկը կոչւում էր մալջեհաթ):

2) Իւրաքանչիւր տնից մի ոսկի, որ խանին էին ուղարկում:

3) Գիւնփուլի՝ գիւղացիք պարտաւոր էին մելիքի հողերը վարել, ցանել, հնձել և այլն: Մելիքի համար ամբողջ տարուայ ընթացքում պէտք էր աշխատել 20 օր: Կարելի էր և որոշ փող վճարելով ազատուել այդ ծառայութիւնից:

4) Իւրաքանչիւր 25 տուն մի ծառայ և 30 տուն մի աղախին էր տալիս մելիքի տանը ծառայելու: Գիւղացիք մելիքին տալիս էին իրենց ծախքով մի վար անող, մի գղեր, մի ձիապան, մի եղապան և այլ ծառաներ: Կանայք մելիքի համար բուրդ էին գողում, բոխի, բանջար և այլ կանաչեղէններ քաղում:

5) Իւրաքանչիւր տուն պէտք է տարին մի իշաբեռ փայտ տանէր մելիքի համար:

6) Հարսանիքի հրաման ստանալու համար մելիքին պէտք է վճարէին որոշ հարկ (3—6 բուբլի): Բացի այդ մելիքին պետի տային մի կուժ գինի, 2 շիշ օղի, եզան սուկին, երկամուկներ,

1) Ե. Լալայեան. Գանձակի գաւառ (Ս.գղազրական հանդէս գիրք Ե. ք. 250):

2 հաւ և այլն: Եթէ հարսն ուրիշ գիւղ էր տարում, պարտաւոր էին աւելին վճարել:

7) Նաւասարդին ամէն մի տուն մի մեծ խնձորի մէջ մի 20 կոպէկանոց կամ մի պարսկական դրամ ցցած, մի կուլա գինի, մի շիշ օղի էր տանում մելիքին, նրա տարին շորհաւորելու:

8) Յանցաւորներից որոշ աւարներ, տուգանքներ էին առնում:

Այստեղ թուած հարկերից և ծառայութիւններից պարզ երևում է, որ մելիքների հպատակները բաւական ծանրաբեռնուած էին: Մելիքների մասին այն կարծիքն է տիրում, որ նրանք ժողովրդին կառավարում էին հին նահապետական ձևով, որպէս հայր: Այս դուրէ մի ժամանակ ձիւտ եղած լինի. բայց մեզ հասած տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ մելիքներն իրենց պահանջներով, իրաւունքներով այնքան էլ յետ չեն մնում վրայի աղնուակիւններից: Մելիքները քանի ազատ էին օտար ազգեցութիւններից, անբաղաժանութիւնից, էլի որոշ չափով իրենց ժողովրդին մօտ էին զգում. իսկ երբ պարսկական տիրապետութիւնը մի կողմից, շրջակայ խաների նուաճումները, խարդախութիւնները մի այլ կողմից հետադեմ է ուժեղանում են, այն ժամանակ իրաւում է և մելիքներն վերաբերմունքը դէպի ժողովուրդը: Մելիքներն այնուհետև մտածում են միմիայն իրենց անձի, ժառանգների ազատութեան, ապագայի մասին՝ թէ և չպէտք է ուղանալ, որ Խամսայի մելիքութիւնը մի սրոշ ժամանակ ժողովրդական շահերի պաշտպան է հանդիսացել:

Մելիքներն, ինչպէս յիշուեց, ենթարկուում էին պարսից շահին, և կամ շրջակայ խաներին: Պարսից շահին ենթարկուողները պարտաւոր էին շահին հարկ վճարել և զօրք տալ: Խաներին ենթարկուողները հետևեալ պարտականութիւններն ունէին.

1) Իւրաքանչիւր տնից մի մարդու՝ զինել, զօրք կազմել և պատերազմի ժամանակ օգնութեան գնալ.

2) Իւրաքանչիւր տնից մի ոսկի հարկ առնել և ուղարկել խանին.

3) Իրենց որդիներից մէկին ուղարկել խանի դստեր միառն ժամանակ ծառայելու.

4) Նշանաւոր ատներին խանին ընծաներ տանել: Մելիքի մահուանից յետոյ իշխանութիւնը ժառանգում էր մեծ որդին, որը և կոչւում էր մելիք. մեւս որդիները կոչւում էին բէկ:

1) Մելիքների մասին տես՝ Բաթիփի. Խամսայի մելիքութիւնները, Ե. Լալայեան Գանձակի գաւառ, նոյնի Զանգեզուրի գաւառ:

Տաճկաստանի հողային օրէնսդրութիւնը, կարգերը, աւատականութիւնը մեծ մասամբ նոյն հիմքերն ունեն, ինչ որ ընդհանուր իսլամականը: Տաճիկները իսլամի գէպի հողն ունեցած հայեացքները նոյնիսկ աւելի են զարգացրել, և այն՝ ինչ որ խալիֆներին ամբողջովին չի յաջողուել, նրանք կարողացել են գլուխ բերել—նրանք հողերի պետականացման իդէալը իրագործել են: Տաճիկները գրաւած բոլոր երկիրները սկզբից և եթ առանց բացառութեան յայտարարուել են ազգային սեփականութիւն, Աստուծոյ կամ նրա փոխարքայի—սուլթանի ստացուածք (Erazi memleket կամ Erazi mirije)¹: Որպէս մասնաւոր սեփականութիւն ճանաչուել են միմիայն շարժական կայքը և գիւղերում ու քաղաքներում եղած տներն ու այգիները:

Ենթահիւ հողերի պետականացման պետութեան ձեռքում հաւաքուել էր հողային ահադին հարստութիւն: Այս հարստութիւնից պետութիւնն անկարող էր անմիջապէս օգտուել, դրա համար էլ նա ժամանակի լնթացքում մաս-մաս յանձնուում էր այն անձանց, որոնք պետութեան պիտանի էին: Այս ճանապարհով աստիճանաբար առաջ է գալիս տաճկական աւատական սիստեմը, որը բաւական ինքնուրոյն կողմեր ունի:

Տաճկական աւատականութեան գլխաւոր նպատակն էր տաճկական հեծելազօրքը պահպանելը, զինելը: Այս զօրքը երկրի պետի գլխաւոր գունդն էր համարուում, և այս բոլոր նուաճումները ժամանակ, մինչև 15-րդ դարի վերջը, առաջնակարգ գեր է խաղացել: Տաճկական պետութեան կազմակերպութիւնը որովհետև գլխաւորապէս զինւորական էր, դրա համար էլ հողերը կենդանացած էին աւատականները (զինւորականները) ձեռքում: Տէրութեան վարչական բաժանումներն անմիջական կապ ունէին այս կամ այն գնդի զօրամասերի հետ: Տէրութիւնը բաժանուած էր նահանգների: Նահանգի կառավարիչը կոչուում էր Միր-Լիրա. նա ստանում էր մի կալուածք որպէս աւատ, որը 1—1200,000 ասպեր արժէր: Նահանգը բաժանուում էր սանջակների: Սանջակի կառավարիչը կոչուում էր բէկ: Սանջակն էր մէջ պարունակում էր շատ սիւմեաներ և տիմարներ. որոշ տեղերում գոյութիւն ունէին և կազաններ (շրջաններ): Տիմար կոչուում էր այն աւատը, որը մինչև 20,000 ասպեր արժէր, իսկ սիւմեա՞ր՝ 20—10,000 ասպեր: Սիւմեաները և ասպերները պէտք է իւրաքանչիւր 3000 ասպեր տարեկան եկամտից մի մի զինուած ձիաւոր պահէին տէրութեան համար, իսկ մնացած աւատները իւրաքանչիւր 5000 ասպեր տարեկան եկամտից՝ մի

1)Curland a. a. O. եր. 72.

մի զինուած ձիաւոր: Աւատականները հիմնած երկրի վարչական բաժանման լրաց կազմում էին մի հերարխեայ, որը կռուի ժամանակ զինւորական, իսկ խաղաղութեան ժամանակ ադմինիստրական Փունիցիաներ ունէր: Աւատականները պէտք է անձամբ ներկայ գտնուէին պատերազմում. խաղաղութեան ժամանակ նրանք իրենց հասանելիք հարկերն էին ժողովում, դատեր տեսնում և ստիկանական պարտականութիւններ կատարում:

Պալատի սպաները, մինիստրները, նոյնիսկ մի քանի մինիստրութիւններ, ինչպէս են ժովային և լուսաւորութեան, ունէին բաւական աւատներ, հողեր¹:

Բոլոր այս աւատատէրերը (հողեր ստացողները) իրենց յատկացուած հողերից, կալուածքներից միայն որոշ եկամուտ էին ստանում. տիրապետական իրաւունքներ նրանց չէր տրուած, գիւղացիք ձորեր չէին, այլ աղաա: Այդ հողերը մինչև վերջն էլ համարուում էին պետութեան սեփականութիւն: Տաճկական աւատականութիւնն ընդհանուր առմամբ նպատակ ունէր վարձատրել այն անձանց, որոնք պետութեան որոշ ծառայութիւններ էին մատուցանում. այդպէս վարձատրուում էին թէ զինւորականները, թէ հողւորականները և թէ բոլոր պետական պաշտօնեաները²):

Տաճկաց տէրութիւնն Անդրկովկասում էլ նոյն հողային քաղաքականութեան է հետևել, ինչպէս տիրապետած երկրներում: Անդրկովկասում տիրապետած երկրները նոյնպէս պետութեան սեփականութիւն էին համարուում և վերև նկարագրուած եղանակով որպէս աւատ բաժանուած էին պետութեան պաշտօնեաների մէջ: Այդ երկիրները բաժանուած էին նահանգների, սանջակների և այլն: Նահանգի կառավարիչը կոչուում էր վաշայ: Փաշան այնչափով անկախ չէր կենդրոնական իշխանութիւնից, ինչպէս պարսկական խանը, սարգարը. բայց այնուամենայնիւ նա ևս բաւական ազատ իրաւունքներ ունէր: Իրեն յանձնուած նահանգի ամբողջ վարչութիւնը գտնուում էր իւր ձեռքում: Փաշային, որպէս վարձատրութիւն, որոշ մաս էր հանուում նահանգի եկամուտներից: Փաշան նշանակուում էր Սուլթանի կողմից:

Սանջակները կառավարում էին բէկերը և ազալարները,

1) Arslanjan, Eine historisch—nationalökonomische Studie über das System des ländlichen Grundeigentums im osmanischen Reiche. եր. 10—11.

2) Qurland a. a. եր. 82:

որոնք նշանակուած էին փաշայի կողմից: Սորա նոյնպէս պետական պաշտօնեաներ էին. կառարուած էին սոսկիանական պարտականութիւններ և հարկերն էին ժողովուած: Բէկերը նոյնպէս վարձաւարուած էին հողերի եկամտով:

Տաճկաց տիրապետութեան ժամանակ Անգրիայիկասի որոշ մասերում երկու տեսակ հողեր կային—ախշայական և ապուրական: Ախշայ կոչուած է գիւղի եկամուտը վերածած փողի, որի ¹/₃-ը պէտք է տէրութիւնը ստանար: Եկամտի այդ ¹/₃ մասը 1587 թուին մտցրուել էր մի գրքի մէջ, որը կոչուած է ջաբա: Այս ախշաները տրուած էին բէկերին, կամ նրանց առհասարակ, որոնք յանձն էին առնում երկիրը թշնամիներէն պաշտպանել, հասարակական որոշ ծառայութիւններ, պաշտօններ կառարել: Այս իրաւունքը տրուած էր բարաթով, որի մէջ նշանակուած էր լինում ախշաների թիւը: Սուլթանի մահից յետոյ, այդ բարաթը պէտք էր ներկայացնել նոր սուլթանին ստուգելու. ով ժամանակին չէր ներկայացնում, բարաթը իւր այժը կորցնում էր: Ախշաախրոջ մահուամբ կարող էր ախշայի իրաւունքը սնչանալ. բայց սովորապէս ժառանգաբար որդոց որդի էր անցնում, միայն թէ ժառանգը պարտաւոր էր հօր պաշտօնը շարունակել: Ախշան կարելի էր և ծախել, միայն այն պայմանով, որ գնողը նոյն պարտականութիւնները պէտք է յանձն առնէր, ինչ որ նախկին աէրը: Տապու կոչուած է այն դոկումենտը, որով հողատէրը (մէչիգը, տէրութիւնը) իւր հողի մի մասը որոշ պայմանով աալիս էր մէկին մշտապէս օգտուելու: Այդ հողը սասցողը պարտաւոր էր հողատիրոջը վճարել միանուագ մի գումար և բերքերի ¹/₆-ը: Տապուի տէրը իւր կողմից այդ հողը մասերի էր բաժանում և գիւղացիներին յանձնում: Վերջիններս վճարում էին բահրա, իրենց գործադրած սերմացուն վերցնում էին և մնացած արդիւնքը հաւասար կիսում տապուաախրոջ հետ: Եթէ հողը երեք տարի շարունակ անմշակ էր մնում, խլում էր և յանձնում նախկին տիրոջը: Տապուի տէրը կարող էր հողը մի ուրիշին աալ, միայն ախրոջ համաձայնութեամբ. վերջինս այս դէպքում գործելու ստանում էր միանուագ մի գումար: Կար և մի տեսակ հող, որ կոչուած էր չիֆթլիկ: Այս կառարելու մասնաւոր սեփականութիւն էր կազմում (փաշայի, խանի, մէչիգի): Եթէ այս հողն ինքը տէրն էր մշակում, կոչուած էր չիֆթլիկ, իսկ եթէ ուրիշին էր աալիս մշակելու—տապու ¹):

Գիւղացին համարուած էր մշտական կապալաուու: Նա իւր հողի վրայ միայն օգտուելու իրաւունք ունէր ¹). Նրա հողային սեփականութիւնը կազմում էին տունը, բակը, այգիները և այլն: Գիւղացիք թէև իսկական հողատէր չէին, բայց նրանց ձեռքի տակ գտնուած հողերը ժառանգաբար որդոց որդի էին անցնում և ոչ ոք իրաւունք չունէր նրանցից խլելու: Բէկերն, անցնում և ոչ ոք իրաւունք չունէր նրանցից խլելու: Բէկերն, ազաները գիւղացիների վրայ տիրապետական իրաւունքներ չունէին. գիւղացիք ազատ էին անձնական ծառայութիւններից:

Ինչ վերաբերում է հարկերին, գիւղացիք պարտաւոր էին հետևելու հարկերն ու տուրքերը վճարել:

1. Անձնական կամ գլխահարկ, որը վճարում էին ոչ մահմեդականներն, անհաւաանները: Իւրաքանչիւր չափահաս ազամարդը վճարում էր 60 կոպ-ից մինչև 3 բ. 50 կոպ.:

2. Հողային հարկ (աստանորդ): Այս հարկը վճարում էին թէ ուայեաները և թէ մահմեդականները: Մահմեդականները վճարում էին ընդհանուր արդիւնքի (ոչ զուտ) ¹/₁₀-ը, մինչդեռ քրիստոնեաները վճարում էին արդիւնքի ¹/₃-ը, նոյն իսկ ¹/₃-ը:

3. Եկամտային հարկ, որը մի քանի տեսակների էր բաժանուած. ինչպէս են՝ հացահատիկների, արօտատեղիների և այլն: Հարկ էին վերցնում և անասուններից (ծիաներից, խոզերից և այլն), ջրաղացներից և այլն:

4. Մեծ տեղ էին բռնում և մաքսերը, աուգանքները և գանազան այլ տուրքեր:

5. Մի տեսակ տարօրինակ հարկի ընդթ էին կրում և մանկաժողովները: Իւրաքանչիւր 5 տարին մի անգամ տէրութիւնը քրիստոնեայ ծնողներից խլում էր նրանց մաաւորապէս և ֆիզիքապէս առողջ մանուկներին, որոնց Կոստանդինոպոլիս էին տանում և ուր մահմեդական մուլեաանդ ոգով կրթում: Սրանցից էին կազմում ենիչէրի կոչուած զօրքը, որը գործադրում էին նոյն քրիստոնեաների գէմ: Բուրս այս հարկերն, ինչպէս և մանկաժողովներն աճուրդի էին հանուած և ով աւելի էր աալիս, նրան էր տրուած կապալը: Կապալաուուններն, ինչ աոել կուղի, ամեն կերպ աշխատում էին ստանալիք հարկերը կրկնապատակել, եռապատակել՝ յօգուտ իրենց:

Գիւղացիք պարտաւոր էին ընտան քրքերով վճարելիք հարկերն իրենց միջոցով տեղ հասցնել. շատ անգամ այդ տեղը բաւական հեռու էր գտնուած, որ և մեծ նեղութիւններ էր պատճառում նրանց: Պատերազմի ժամանակ էլ գիւղացիք պարտաւոր էին զօրքի համար հացահատիկներ ձեծել, բերգերի

1) Сводъ матеріаловъ а. а. О. томъ V. ч. III. стр. 552:

1) Ատրպետ. Հողատիրութիւնը Կովկասում. եր. 7:

չինութեան վրայ աշխատել, նոյն իսկ հողատիրները (պիտներ-
ները) աշխատանքներն մասնակցել:

Տաճկահայկան աւատականութիւնը և հարկային սիստեմը,
ինչպէս յայտնի է, Սուլթան Աբդուլ Մեջիդի օրով օրոշ բարե-
նորոգութիւնների է ենթարկուում (1830 թ.): 1852 թուական-
ներն փորձում են ուսմանով պաշտօնեաները սիստեմ մտցնել,
որը յաջողում է և 1867—1870 ամբողջ պետութեան մէջ
մտցնում է: Ռոճիկի, վարձատրութեան սկզբունքի գործադրու-
թեամբ՝ աւատական սիստեմին վերջ է դրում: Այնուհետեւ
ըստ 1858-ի օրէնքի բոլոր հողերը բաժանում են հետեւեալ հինգ
կարգի: 1. Միւլք կամ միմլիւք հողեր. սրանք գտնուում են մաս-
նաւոր անհատների ձեռքում և կազմում են նրանց կատարեալ
սեփականութիւն:

2. Մերկէ հողեր. սրանք պետութեան սեփականութիւն
են կազմում:

3. Մեվկուֆ հողեր. սրանք մեչիդապատկան, անվաճա-
ռելի հողեր են:

4. Մեարուկ հողեր, որ ընդհանրութեան օգտին պէտք է
ծառայեն:

6. Մերվոս հողեր. սրանք անմշակ և անապատ հողերն են:

Առաջին կարգի հողերը (Միւլք) բաժանում են չորս
կարգի.—1. քաղաքներում և գիւղերում գտնուող բնակութեան
տեղեր իրենց այգիներով և բակերով: 2. Այնտեղի հողեր,
որոնք պետական հողեր են եղել և որոշ անձանց սրպէս սեփա-
կանութիւն են տրուել (Մեյիքեա): 3. Տասանորդի հողեր, որ
բաժանուած են մուսուլմանական հողերի մէջ (Ուշրէ): 4. Հա-
րադի հողեր. սրանք այն հողերն են, որ նուաճած պետու-
թեան բնակիչներին է թողուել, այն պայմանով, որ հարադի
կոչուած հարկը վճարեն:

Մերկէ հողերն այն հողերն են, որ առաջ աւատականնե-
րին էր տրուած օգտուելու համար, իսկ այժմ պետութեան
կողմից սրպէս տապու զանազան անձանց է արուում որոշ ժա-
մանակով: Որպէս մերկէ հողեր են՝ արօտատեղիները, պետա-
կան անտառները և անմշակ դաշտերը, որոնք մասնաւոր ան-
ձանց ձեռքում չեն գտնուում:

Մեվկուֆ հողերը օրհնուած, նուիրաբերուած անշարժ
կալուածքներն են, որոնք մեչիկին են պատկանում և անվա-
ճառելի են:

Մեարուկ կոչուած հողերի մէջ մտնում են ամեն արօտա-
տեղիները, որոնցից ազատ օգտուել կարող են քաղաքի և գիւ-
ղի բնակիչները: Հազարապետութեան ծառայող ճանապարհները,

փողոցները նոյնպէս այս կարգի մէջ են մտնում:

Երկրագործական հարկաւուութիւնն էլ նոյնպէս բարե-
փոխուեց: Պէտք է առնէին հետեւեալ հարկերը:

1. Նախկին տասանորդը դաշտերի եկամուտից (Խուշուր):
 2. 40/10 հողային հարկ (Էմեւլք):
 3. Գլխահարկի փոխարէն՝ զինւորական ծառայութեան
հարկ, որը պէտք է վճարէին ոչ մահմեդականները (Բեդել,
Նիզամիէ):
 4. Կենդանիների հարկ. (Էւրաքանչիւր ոչխարին 4 պիսա-
տըր, խոզին 3 պիստոր):
 5. Եկամտային հարկ (Տեշարեդ):
 6. Հազարապետութեան միջոցների պահպանութեան հարկ
(Էւրաքանչիւր տունը 5 պիստոր):
- Բացի այս հարկերից, կարելի է անուանել և մի շարք ու-
րիշ ատրքեր, ինչպէս են՝ ամուսնութեան տուրք, ծննդեան
տուրք, սեփականութիւնը վաճառելու տուրք, ժառանգու-
թեան տուրք և այլն:

IV.

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԼԵՌՆԱԿԱՆՆԵՐԻ ՀՈՂԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Անդրկովկասի լեռնականներ ասելով պիտի հասկանալ այն
ժողովուրդները, որոնք մեծ մասամբ երկրի լեռնային մասերում
են ապրում և որոնց անդամների թիւը միայն մի քանի հա-
զարների է հասնում: Այս ժողովուրդները վարում են մի տե-
սակ հէս թափառական կեանք, նահապետական պայմաններում:
Սրանք մեծ մասամբ պարագուում են անասնապահութեամբ և
որսորդութեամբ. երկրագործութեամբ քիչ են զբաղուում: Քիչ
թէ շատ աչքի ընկնող լեռնականները հետեւեալներն են՝ լեզգի-
ներ, քրդեր, աբխազներ, օսեախներ, սվանետացիք, պշաւներ,
թուշեր, խևսուրներ և այլն:

Լեզգիները, քրդերը և աբխազները մահմեդական կրօնն
են դաւանում, իսկ մ'նացածները քրիստոնեայ են համարում:
Այս ժողովուրդների տնտեսական—հասարակական կեանքը ա-
ռանձին հետաքրքրութիւն է ներկայացնում, շնորհիւ այն հան-
գամանքի, որ սրանք երկար ժամանակ յարաբերութիւնից
կտրուած են եղել և մինչև օրս էլ պահել են նախնական
շատ սովորութիւններ և կարգեր: Գժբախտաբար նոր են սկսել
սրանց կեանքն ուսումնասիրել, այնպէս որ դրանց կեանքին
վերաբերեալ շատ խնդիրներ դեռ մութն են, չեն ուսումնա-
սիրուած:

Լեզգիներ. Այս ընդհանուր անունը տալիս են այն մի շարք մանրիկ ցեղերին, որոնք ցրտած ապրում են Դադեստանում: Լեզգիները համարում են ընկի ժողովուրդ. նրանց մասին յիշատակում են նոյն իսկ յոյն հին գրողները (Ստրաբոն, Պլուտարք): Սրանք իրենց մասին պատմում են, որ իրենց նախնայերը գաղթել են Հնդկաստանից, սկզբում բնակութիւն են հաստատել Նիքիանում և այդտեղից հետո՛հեռէ ցրուել են զանազան կողմեր: Ննորհիւ երկրի լեռնային զիրքի՝ լեզգիները երբէք չեն կարողացել միանալ, մի զօրեղ տէրութիւն կազմել, այլ շարունակ ցրուած, առանձնացած են կղել, բաժանուած մանրիկ ցեղերի, տոհմերի և ենթակայ հարևան զօրեղ ազգերի ազդեցութեան (խազարների, պարսիկների, արաբների և այլն): Սրանց վրայ ամենից զօրեղ ազդեցութիւն է թողել արաբական քաղաքակրթութիւնը (մանաւանդ արևելեան Դադեստանում), որի հետքերը մինչև օրս էլ նշմարելի են¹):

Լեզգիները բաժանուած լինելով մանրիկ ցեղերի, տոհմերի, երկար ժամանակ նրանց մէջ տիրում էր ցեղային կազմակերպութիւնը, տոհմական կարգը: Նոյն տոհմին պատկանողներն իրենց միջից ընտրում էին մէկին, որը կառավարում էր տոհմը: Այս պաշտօնը կարող էր և ժառանգական դառնալ, բայց միայն ոչ երկար ժամանակով: Տոհմի կառավարութիւնը ռամկալարական էր. տոհմի գործերին մասնակցում էին ամենքն անխտիր: Նոր ժամանակներում էլ ժողովրդի գլխաւորը դարձեալ ժողովուրդն էր ընտրում, բայց ամեն ոք այդ պաշտօնի համար չէր կարող ընտրուել, այլ միայն մի ընտանիքից՝ դենատիայից էին ընտրում: Ժողովրդի գլխաւորի (ուցմիկ) իրաւունքները մեծ մասամբ սահմանափակ էին. ժողովուրդը կարող էր նրան դատապարտել, սուգանել և այլն²:

XVII դարից սկսած նկատելի է, որ ժողովրդի գլխաւորն այլ ևս չի ընտրուում, այլ այդ պաշտօնը ժառանգական է դարձել: Հետզհետէ, շնորհիւ դրան առաջ են դալիս իշխանութիւններ ու խանութիւններ և այլն: Այդ իշխանութիւնների ժամանակ գոյութիւն ունէին հեռեւեալ դատակարգիւրդ. բէկեր, գիւղացիներ (ուզգեններ), ճորտեր և սարուկներ: Բէկերը նոյն իրաւունքն ունէին, ինչ որ պարսիցը. սրանք նոյնպէս պետական պաշտօնեաներ էին, կառավարում էին գիւղերը և փոխարէնը

1. Сборникъ свѣдѣній о кавказскихъ горцахъ. Томъ V. стр. 24—23.

2. М. Ковалевскій. Законъ и обычай на Кавказѣ. Томъ III. стр. 218—254.

ստանում էին գիւղերի եկամտի մի մասը: Ժամանակի ընթացքում սրանց պաշտօնը դառնում է ժառանգական: Ազատ գիւղացիք (ուզգեններ) ենթարկում էին բէկերին: Սրանք հողի վրայ սեփականութեան իրաւունք չունէին, հողը պատկանում էր խանին, միայն նրանք կարող էին ժառանգաբար, մշտապէս օգտուել հողից: Պարտաւոր էին խանին և բէկին որոշ հարկեր վճարել: Ճորտերը և սարուկները բուն ժողովրդին չէին պատկանում, այլ օտարազգիներ էին, որոնք գերուել էին պատերազմի ժամանակ:

Հողը լեզգիներին մէջ համարում է տէրութեան, տոհմի սեփականութիւնը: Բայց նա բաժանուած է ժողովրդի անդամներին մէջ. իւրաքանչիւրը իւր բաժնի տէրն է, որը և որդոց որդի ժառանգում էր: Այնպէս որ լեզգիներին մէջ համարեա թէ տիրում է հողի մասնաւոր սեփականութիւն: Բայց երբ մէկը հեռանում էր, կամ մեռնում էր անժառանգ, այն ժամանակ նրա հողաբաժինը անցնում էր տէրութեան, տոհմին: Արօտատեղերն ամբողջ գիւղի կամ տոհմի սեփականութիւնն են կազմում և ամեն ոք կարող է անարգել օգտուել դրանցից:

Որ մի ժամանակ լեզգիներին մէջ տիրող է եղել համայնական հողատիրութիւնը, դրան փաստ կարող է ծառայել Ֆլուրցվանդի (Flurzwang) մի տեսակը, որ գոյութիւն ունի նրանց մէջ: Լեզգիական շատ համայնքներում դաշտային աշխատանքները պէտք է մի որոշ ժամանակում սկսուեն և որոշ ժամանակում էլ վերջանան: Այդ մասին ժողովրդին յայտարարում է մինարէից: Ով ժամանակից առաջ է սկսում դաշտային աշխատանքները, նրան սուգանում են¹:

Հողագործութիւնը լեզգիների մէջ այնքան էլ մեծ դեր չի խաղում: Շնորհիւ երկրի լեռնային դիրքի, նրանք հնարաւորութիւն չունեն լայն չափերով երկրագործութեամբ պարապելու: Աւելի նրանք զբաղուում են անասնապահութեամբ և մասամբ էլ անասնադործութեամբ. վերջինս մի ժամանակ խիստ զարգացած էր²:

Արխագներ: Այս ժողովուրդը բնակւում է Սև ծովի արևելեան ափի վրայ և կովկասեան լեռնաշղթայի միջին մասում (Քուրթայիսի նահանգում): Ծագմամբ, լեզուով արևադններն աւելի մօտ են չերքեզներին, թէև դեռ հաստատապէս յայտնի չէ նրանց ծագումը: Արխագները ենթարկուել են յոյների, հռոմայեցիներին, իսկ 985 թուականից սկսած՝ Վրաստանին:

1. М. Ковалевскій, а. а. О. Томъ II. стр. 153—156.

2. Լեզգիների մասին տես՝ М. Ковалевскій, а. а. О. Томъ II.

Աւելի զօրեղ է եղել յետագայում մոնղոլները, թուրքերը ազգեցութիւնը, որը շնորհիւ և ընդունել են մահմեդականութիւն:

Արևազնայում նոյնպէս ժողովուրդը ցրուած է ապրում, և արևազներն երբէք չի յաջողուել մի զօրեղ միացած պետութիւն կազմել: Երկրի զանազան մասերը պատմական տարբեր կեանք, վիճակ են ունեցել: Աեռնային մասերում ժողովուրդը մեծ մասամբ ազատ է եղել. այնտեղ դոյութիւն են ունեցել դաշնակցութիւններ, միութիւններ: Գաշնակցութիւնները եղել են զիւզային կամ ցեղային: Գաշնակցութեան մասնակցել են բոլոր դասակարգերը: Գաշնակցութիւնը կազմուած էր պաշտպանողներից և նրանց ենթարկողներից: Պաշտպանողները կամ արտօնեալներն բաժանուում էին երկու կարգի.— թաւազների և ամիրտասի, որ են պանտականները: Ենթարկողները բաժանուում էին երեք կարգի.— 1. անխաբ կոչուածներ, որոնք երկրի հիմնական ընակիչներն են և ժողովրդի ամենամեծ տակասն են կազմում. 2. ամացիրատու կոչուածները, որոնք անխաների և ցածր դասակարգի միջին տեղն են բռնում. այս ցածրից բարձր անցնող դասակարգն է. 3. ախուցիու կոչուածները, որոնք ցածր դասին են պատկանում: Սրանցից աւելի ցածր են Ախաղալան կոչուածները, որոնք ստրկային վիճակի մէջ են: Աային և ազատ զիւզացիք, որոնք ոչ մի պարտականութիւն չունէին դէպի պաշտպանողները: Մնացած դասակարգերը ենթարկուում էին պաշտպանողներին, դէպի նրանց որոշ պարտականութիւններ ունէին: Բայց բոլոր գիւղացիք ընդհանրապէս անձնապէս ազատ էին և կարող էին մի տեղից միւսը գնալ:

Արևազի այդ մասում վարելահողերը կազմում են մասնաւոր սեփականութիւն, իսկ արօտատեղիներն, անտառները և այլ համայնական են, միայն երբ համայնական կամ անմշակ որևէ հողի վրայ մէկը աշխատանք է թափում, մշակելի է դարձնում, այն ժամանակ այդ հողը կարելի է մասնաւոր սեփականութիւն դարձնել: Աեռնային մասերում ժողովուրդը պարապում է գլխաւորապէս անասնապահութեամբ. իսկ երկրագործութեամբ քիչ է զբաղուում: Այդ պատճառով էլ արօտատեղիները և անտառները սրանց համար աւելի առաջնակարգ նշանակութիւն ունեն. զրանք համայնական սեփականութիւն են համարուում, և ամենքն էլ օգտուել կարող են¹:

Արևազի այն մասը, որ սահմանակից է Վրաստանին,

1. Ssu' Очеркъ устройства общественно—политическаго быта Абхазіи и Самурзаканіи (Сборн. свѣдѣній о кавказскихъ горцахъ. Выпускъ III. 1879 г. Тифлисъ.

շատ խիստ ազդուած էր վրացիները: Այնտեղ հասարակական նոյն կարգերն էին աւրուում, ինչ որ Վրաստանում: Ազնուակա-նութիւնը, գիւղացիութիւնը նոյն դրութեան մէջ էին, ինչ որ Վրաստանում¹:

Օսեթիցներ: Օսեթիները, չնայած որ թուով շատ քիչ են և քաղաքական աննշան դեր են խաղացել անցեալում, այնուամենայնիւ շատ գիտնականների կողմից մեծ ուշադրութեան են արժանացել: «յս հետաքրքրութիւնն առաջացել է շնորհիւ այն հանգամանքի, որ օսեթիներն գիտնականներից ոմանք գտնում են հին գերմանացիներին շատ մօտ և ենթադրում են, որ սրանք հին գերմանացիների մնացորդներից են: Թէև այս բաւական վիճելի է և դժուար ապացուցանելի, բայց և այնպէս բաւական վիճելի է և դժուար ապացուցանելի, այս ժողովուրդը, շնորհիւ իւր առանձնայատկութիւնների, ուսումնասիրութեան առատ նիւթեր ունի իւր մէջ: Օսիտեններն էլ միւս լեռնականների պէս երբէք քաղաքական մի միութիւն, ամբողջութիւն չեն կազմել², այլ բաժանուած են եղել առանձին տոհմերի, հասարակութիւնների: Օսեթիներն մէջ մինչև այժմ էլ աւելի զարգացած է ցեղային, ազգակցական—արևակցական կապը. մինչև օրս էլ նրանք նահապետական կեանք են վարում. ապրում են մեծ ընտանիքներով, որոնց անդամների թիւը հասնում է մինչ 60-ի 5. այս ընտանիքները կոմունիստական ընդթ ունին. տիրում է հաւասարութիւն ամեն ինչի մէջ: Ընտանիքի գլխաւորն է ամենից հասակովը, որը և վարում է ընտանիքի գործերը:

Օսեթիները վաղուց սկսած ապրում են կովկասեան լեռնաշղթայի միջին մասերում: Ընտմը նրանք բաժանուած են եղել մի քանի հասարակութիւնների, որոնցից նշանաւորները հետեւեալ չորսն են. զիւզորի, ալագերի, կարտատինի և թագաւուրի: Օսեթիայի հիւսիսային մասը (զիւզոր և թագաւորի) վաղ ժամանակներից սկսած ենթարկուել է կաբարդինցիների ազդեցութեան, իսկ հարաւայինը՝ վրացիների: Շնորհիւ այդ ազդեցութիւնների, Օսեթիներն մէջ էլ հետզհետէ մուտք են գործել զանազան ֆէոդալական կարգեր: Այսպէս հարաւային Օսեթիայում մուտք են գործել Վրաստանից ֆէոդալական կարգերը,

1. Максимъ Ковалевскій, Законъ и обычай на Кавказѣ. Томъ I. стр. 176—80:

2. Merzbacher, a. a. O. Bd. 2. стр. 26:

3. Максимъ Ковалевскій. Современный обычай и древній законъ.

ճորտատիրութիւնը, իսկ Կարարդէնիայից՝ կարարդէնական դատակարգութիւնը¹:

Օսեախայում ընդհանուր առմամբ դոյութիւն ունէին հետեւեալ դասակարգերը. 1. բարձր կամ ազնուական (ուղղաւորութիւն, ուղղեաններ և արդարեւ), 2. միջին (Փարսալազ), 3. ցածր (կալիգասարդ). 4. անաղատ կամ սարուկ (գրուգիակ): Աւագ դասնադիր իրաւունքները իրենց իրաւունքները ձեռք են բերել ժառանգութեամբ. նրանց է պատկանում հողը: Պարսալազներն անձնապէս ազատ են, բայց արտօնութիւններ չունեն: Սրանք կաղմում են ժողովրդի ամենամեծ տոկոսը: Արմիհեաև հողը պատկանում է բարձր — ազնուական դասին, զրա համար Փարսալազները պարտաւոր են նրանց վճարել հետեւեալը. գարնանն ամեն մի տուն (ընտանիք) տալիս է մէկ գառ, աշնանը՝ մի մեծ ոչխար. տարեկան տալիս են՝ մէկ սայլ խոտ, ոչխարի պանիր, 10 դրուանքայ կովի իւզ: Եթէ Փարսալազը ոչխար է մորթում կամ տաւար, դրանց էրին ստանում է ազնուականը: Նշանդէքի և հարսանիքի ժամանակ պէտք է ազնուականին որոշ ընծաներ մատուցանուեն: Բացի այս նրանք պէտք է և մի շարք անձնական ծառայութիւններ կատարէին. ինչպէս են սեփական ձիով ուղեկցել ազնուականին, իբրև թիկնապահ, հնձի, կալսելու, վարելու և դաշտային այլ աշխատանքների համար իւրաքանչիւր տուն մարդ պէտք է տայ ազնուականի համար աշխատելու և այլն: Պարսալազները մի տեղից մի այլ տեղ փոխադրուելու իրաւունք ունեն, միայն նրանց բնակարանը և ստացուածքն այդ դէպքում պատկանում է ազնուականին: Ազնուականը իրաւունք ունի Փարսալազին դուրս քշել, արտաքսել, եթէ նա իւր պարտաւորութիւնները չի կատարում. միւս կողմից էլ նա պէտք է պաշտպանէ նրան, եթէ դրսից որևէ վտանգ է սպառնում²:

Կալիգասար կոչուածները պատկանում են ազնուականին. պարտաւոր են ամեն ծառայութիւն կատարել, հախառակ դէպքում՝ խիստ պատիժներ են կրում, նոյն իսկ մահուան: Սրանք առաջ են եկել ազնուականի միջին դասին պատկանող (Փարսալազ) կնոջ հետ ունեցած ամուսնութիւնից:

Գրուգեակները ստրուկներ են. սրանք օսեախներ չեն, այլ պատճառով պատկանում են դերիններ (մեծ մասամբ վրացիներ):

Բայց Օսեախայում կան և հասարակութիւններ, որոնք ազատ են մնացել դասակարգութիւնից: Նրանց մէջ տիրում է

1. М. Ковалевский а. а. О. III. стр. 25—26.
2. М. Ковалевский. а. а. О. Т.

հաւատարութեան սկզբունքը. սրանք մեծ մասամբ բողոքական ընտանիքներ են, որոնք՝ հիմնուած արեւնակցական կապի վրայ, միացել են իրար հետ: Այս հասարակութիւնները շատ մեծ չեն, պատահում է, որ մի գիւղ իւր համար մի առանձին հասարակութիւն է կաղմում, ունի իւր անկախութիւնը. բայց սովորապէս մի քանի գիւղեր միասին կաղմում են մի հասարակութիւն: Այս տեսակ հասարակութիւնների մէջ են մեծ մասամբ անաղարտ մնացել բուն օսեախական կարգերն ու սովորութիւնները:

Ըողն Օսեախայում պատկանում է ամբողջ ցեղին կամ հասարակութեան և բաժանուած է գիւղերի մէջ: Հողը սովորապէս բաժանուած է երկու կարգի — ցեղային և գիւղական: Յեղային հողը պատկանում է մի շարք հասարակութիւնների, առւելների և բաղկացած է գլխաւորապէս մարդագետններից, արօտատեղիներից և անտառներից: Հասարակական հողը բաղկացած է ամեն տեսակ հողերից, միայն վարելահողերը վերջնականապէս բաժանուած են ընտանիքներէ մէջ: Բայց շնայած դրան, վարելահողերը նոյնպէս համարուում են գիւղի հասարակութեան սեփականութիւնը: Այսպէս՝ սովորութիւն կայ, որ վարելահողը հնձից յետոյ դառնում է հասարակութեան սեփականութիւնը և որպէս արօտատեղի է գործադրուում, մինչև նորից վարելը: Վարելու ժամանակ դարձեալ նախկին տէրը տիրապետում է: Յետոյ, երբ որ մէկը մեռնում է անժառանգ, նրա հողն անցնում է հասարակութեան:

Օսեախայում դոյութիւն ունի ցեղային և գիւղական Փլուրցվանդ (Flurzwang), որը պէտք է մի ժամանակ ակրող համայնական հողատիրութեան արդիւնք համարել: Ոչ ոք Օսեախայում իրաւունք չունի դաշտային աշխատանքները սկսելու, մինչև ամենքը չհաւաքուեն ատենեկ կոչուած տօնին ի միասին և վճռեն խոտ հարելու ժամանակը, նոյնպէս և վարելու: Այսպէս դարնանը պէտք է վարել 15 օր, ամառուայ ընթացքում երկու անգամ, մէկ անգամ՝ 40 օր, միւս անգամ՝ 13 օր, աշնանը՝ 17 օր և այլն¹:

Մի այլ սովորութիւն նոյնպէս ցոյց է տալիս, որ օսեախներն մէջ մի ժամանակ համայնական սեփականութիւնը և կեանքն առհասարակ բաւական տարածուած, ընդունուած է եղել: Օսեախայում հէնց մինչև օրս էլ բաւական զարգացած է փոխադարձ օգնութիւնը, որը նշան է նրան, թէ սրբուն բարեկամական — ազգակցական է նրանց յարաբերութիւնը միմեանց

1. М. Ковалевский, а. а. О. Bd. I. стр. 114:

հետ: Գրան օրինակ կարող է ծառայել մի տարածուած սերուն սովորութիւն: Մ. Կովալեւսկին այդ մասին հետեւեալն է գրում. «Երբ կուկուն կանչում է և յայտարարում, որ դարունը գալիս է և մարդագետիները շուտով խոտով ծածկուելու են, այն ժամանակ ամեն ոք, ով կարիք ունի, կարող է իւր հարեանի մարդից խոտ վերցնել իւր անասունների համար, այն էլ ձրի, առանց վճարի»¹:

Սվանեացիք: Սվանեացիք ապրում են Ինգուր և Յիւն-նիսցկալի գետերի վերին մասերում: Ինգուրի հովտի արեւելեան մասը կոչւում է ազատ Սվանեախա, իսկ արեւմտեանը իշխանական Սվանեախա: Սվանեացիք նոյնպէս ապրում են ցրուած, բաժանուած տոհմերի, հասարակութիւնների և երբէք փորձ չեն արել միանալու, մի քաղաքական միութիւն կազմելու: Ծագմամբ սրանք շատ մօտ են վրացիներին, կրօնով կէս հեթանոս-քրիստոնեայ են: Լինելով իսկական լեռնական և կտրուած դրսի աշխարհից, նրանք մինչև օրս էլ ապրում են նահապետական պայմաններով: Սվանեացիների թէ հասարակական և թէ տնտեսական կեանքն միանգամայն նախնական կեանքն է յիշեցնում: Պետութեան, քաղաքական օրգանիզացիայի մասին սվանեացիք շատ մոլթ գաղափար ունեն. տնտեսութիւնն էլ մինչև օրս տնային, բնական է, դրանից դէնք դեռ չի անցել²:

Ազատ Սվանեախայում բաւական երկար ժամանակ տիրապետում էր ցեղային, տոհմական կազմակերպութիւնը: Ներկայումս այնտեղ ժողովուրդը բաժանուած է համայնքների, հասարակութիւնների: Այդ համայնքներն առաջ են եկել թէ աւրելնակցական կապով և թէ տարբեր ընտանիքների փոխադարձ համաձայնութեամբ, դաշինքով: Շատ տարածուած է մանաւանդ դաշինքի սովորութիւնը. մի խումբ ընտանիքներ երգման դաշն են կապում, մի համայնք են կազմում, այն նպատակով, որ հարեան նման համայնքներից պաշտպանուեն, թոյլ չտան՝ որ ուրիշներն ապօրինի կերպով իրենց արօտատեղիներից, անտառներից և այլն օգտուեն³: Այս տեսակ ընկերակցութիւնը, համայնքն ունի իւր գլխաւորը, որն ընտրւում է ժողովրդից. սրա պաշտօնը ցմահ է, եթէ մինչև այդ նա իրեն պիտանի է ցոյց աւելիս: Բացի դրանից ժողովուրդը ընտրում է և 12 հոգու:

1. М. Ковалевский, а. а. О. Bd. I. стр. 145:

2. P. Gogitschaischwili, Das Gewerbe in Georgien. Tübingen 1901. стр. 60. Merzbacher, а. а. О. Bd. I. стр. 376:

3. P. Krapotkin, Gegenseitige Hilfe in der Entwicklung. Leipzig 1904, стр. 229—268.

որոնք պէտք է հսկեն, որ ոչ ոք ուրբաթ և կուրակի օրերը չաշխատի և այլն: Համայնքի վերարեբեալ խնդիրները քննելու վճռելու համար ամբողջ ժողովուրդը ժողովի է հրաւիրւում. ժողովին մասնակցում են հասակաւոր բոլոր աղամարդիկ և կանայք: Կլխաւոր վճիռների համար պահանջւում է միաձայնութիւն, որը շատ զեպքերում դժուար է գլուխ գալիս և դրա համար գործ է դրւում որոշ բռնութիւն²:

Երբեմն էլ պատահում է, որ մի քանի համայնքներ ժամանակաւորապէս միանում են, որոշ ընդհանուր գործերի վերաբերեալ խորհրդակցում և ապա էլի ցրւում:

Իշխանական Սվանեախան մասնում էր վրաց տէրութեան մէջ և դանւում էր Գաղեշկեւեանի իշխանների հպատակութեան տակ: Այստեղ տիրում էին վրացական կարգեր. ժողովուրդը համարեա թէ ճորտական զրոյթեան մէջ էր և նոյն պարտականութիւններն էր կատարում, ինչ որ վրացականը:

Սվանեացիների մէջ առհասարակ շատ քիչ զարգացած է համայնական կեանքը: Այն հասարակութիւնները, միութիւնները մանաւանդ, որոնք հիմնուած են ազգակցական, արեւնակցական կապի վրայ, ներկայացնում են մի մեծ ընտանիք, որի անդամներն իրար հաւասար եղբայր են: Առանձին, մասնաւոր ընտանիքներում էլ առաւել տիրում են նահապետական կարգեր. ամեն ինչ ընդհանուր է, ամենքը հոգում, աշխատում են ընդհանուրի համար: Փոխադարձ օգնութիւնը համայնքի անդամների մէջ խիստ օրինակելի է և կարող է քաղաքակրթուած, կուլտուրական երկրի զաւակի նախանձը շարժել: Շատ հետաքրքիր են սվանեացիների կրօնական—համայնական տօները մանաւանդ, որոնց ժամանակ նրանք ցոյց են աւելիս փոխադարձ օգնութեան, սերտ ընկերութեան, համերաշխութեան շատ օրինակելի դժեր:

Սվանեացիք պարապում են գլխաւորապէս անասնապահութեամբ և որսորդութեամբ: Անասնապահութիւնը բաւական զարգացած է: Երկրագործութեամբ քիչ են պարապում, շնորհիւ երկրի լեռնային դիրքի: Հող Սվանեախայում շատ դժուարութեամբ են ձեռք բերում և դրա համար էլ բաւական թանգ է: Արօտատեղիները, մարդագետիները հասարակական են, ընդհանուրի սեփականութիւն են կազմում, իսկ անտառները մասամբ և արօտատեղիները մասնաւոր են: Բայց ընդհանրա-

1. A. Merzbacher, а. а. О. Bd. стр. 369—371., М. Ковалевский, Законъ и обычай на Кавказѣ, Томъ II. стр. 1—20:

պէս մասնաւոր սեփականութեան սկզբունքը որանց մէջ գեռ-
թոյլ է 1:

Պշտուներ, բուսեր եւ խեսուրներ: Այս ժողովուրդները շատ
սակաւաթիւ են և ոչնչով առանձնապէս աչքի չեն ընկնում:
Սրանք վրացական ծագում ունեն: Ապրում են Ալազանի, Ա-
բազուայի, Իորի և Արզոնի վերին մասերում (Թիֆլիզի նահան-
գի Թիոնէա գաւառում):

Պշտուները մինչև այժմ էլ ապրում են նահապետական
պայմաններում. տոհմապետութիւնը, ցեղային կեանքը գեռ-
բազուայի չի վերացել: Պշտուներին օտար են դասակարգերը,
Ֆէոդալականութիւնը, ճորտութիւնը: Նրանք թէև ենթարկու-
մ են Վրաստանին, բայց մեծ մասամբ անկախ էին. միայն վճա-
րում էին սրոջ հարկ և պատերազմի դէպքում էլ ինքնաբերա-
բար օգնում էին:

Պշտուները կազմում են համայնքներ նման սլաւոնականին.
համայնքի անդամները համարեա թէ ազգակցական կապեր
ունեն իրար հետ և այդ պատճառով էլ նրանց յարաբերութիւ-
նը միմեանց հետ բարեկամական է: Հողատիրութիւնը պշտու-
ների մէջ ցեղային և համայնական է: Անտառները բոլոր պշա-
ուները ընդհանուր սեփականութիւնն է: Արօտատեղիները, խո-
տատեղիները բաժանուած են ցեղերի մէջ, իսկ վարելահողերը
ընտանեկանները մէջ: Վարելահողերը կազմում են ընտանեկան սե-
փականութիւն՝ և անցնում են ժառանգաբար:

Պշտուներն ապրում են մեծ ընտանեկաններով, որոնց ան-
դամների թիւը երբեմն 100-ի է հասնում: Պշտուների ընտանեկանը
շատ նման է սլաւոնական դադրուգային. ընտանեկանը որանց մէջ
անտեսական մի միութիւն է համայնական հիմունքների վրայ:
Ընտանեկան գլխաւորը ընտրովի է. ընտրում են ամենից խելօ-
քին, ս շատատէրին, բարոյականին, և դա կարող է լինել թէ
հասակււռը մէկը և թէ մի երիտասարդ:

Իւեսուրները, Թուշերը նոյն պայմաններում են ապրում,
ինչ որ սլաւոնացիք, պշտուները: Սրանց մէջ ևս ընտանեկանը գեռ-
նահապետական է, և տիրում են նահապետական կարգեր:
Սրանք պարապում են միւսների պէս մեծ մասամբ խաշնարա-
ծութեամբ, անասնապահութեամբ և այդ պատճառով սրանց
համար առանձին արժէք, նշանակութիւն ունեն խոտատեղիները,
արօտատեղիները, որոնք կազմում են ընդհանուր սեփակա-
նութիւն, որոնցից ամենքն անխըտիր օգտուում են: Շնորհիւ

1. Сборникъ матеріаловъ для описанія мѣстностей и пле-
менъ Кавказа. Томъ X 1890 г. և Томъ XXII. 1897.

երկրի լեռնային դիրքի, վարելահողեր շատ քիչ կան, և երկրա-
գործութիւնն էլ զարգացած չէ: Վարելահողերը ձեռք են բեր-
ւում մեծ դժուարութեամբ, դրա համար էլ կազմում են մաս-
նաւոր սեփականութիւն 1:

Թափառականներ: Անգրկովկասում ապրում են և մի քա-
նի ժողովուրդներ, որոնք մի տեսակ թափառական կեանք են
վարում: Այս ժողովուրդներն են՝ բրդերը, Թարաբամա կոչուած-
ները, մասամբ Թուրքերը, Թալիշցիները, եղիզիները և ուրիշ-
ները: Իսկապէս թափառականներին պէտք է երկուսի բաժանել.
— իսկական թափառականներ և կիսաթափառականներ: Իսկա-
կան թափառականները պարապում են մեծ մասամբ կամ բա-
ցառապէս խաշնարածութեամբ, անասնապահութեամբ. նրանք
շատ սակաւ է պատահում, որ հաստատուն ընտանեկան ու-
նենան, այլ շարունակ այստեղից այնտեղ են թափառում
իրենց անասուններով և շարժական կայքով: Կիսաթափառա-
կաններ կոչուում են նրանք, որոնք հաստատուն ընտանեկան
ունեն և որոնք անասնապահութեան հետ միասին պարապում
են և երկրագործութեամբ: Սրանք կիսաթափառական են կոչ-
ւում այն պատճառով, որովհետև ամառը շրջերի պատճառով
իրենց ընտանեկան թողնում են և լեռները քաշուում՝ անա-
սունների համար խոտ գտնելու: Համար: Աշնանը նորից վերա-
դառնում են իրենց նախկին ընտանեկանը 2:

Թափառականներն ապրում են Զեփասի, Ղէնքորանի (Բա-
գուի նահանգ), Արեշի, Զեբրայիլի, Շուշու (Գանձախի նահանգ),
Երևանի, Էջմիածնի, Ծարուր — Գարաշաղաղի, Սուրմալուի
(Երևանի նահանգ) գաւառներում և Անգրկովկասի լեռնային
այլ մասերում 3:

Թափառականներին ամենից աչքի են ընկնում բրդերը:
Բրդերը հին կորովիները (Քսենեֆոնակ) կամ կորովացիք են:
Սերա Իերկայումս ցրուած են. ապրում են ճաճկաստանում,
Պարսկաստանում և Անգրկովկասում: Բրդերը բաժանուած են
ցեղերի. խիստ զարգացած է ցեղային կեանքը: Բոււական զօրեղ
է արիւնակցական կապը և ամեն ինչ համարեա թէ դրա վրայ
է հիմնուած: Ներկայումս բրդերը բաժանուած են ցեղերի և

1. Պշտուների, Իեսուրների եւ Թուշերի մասին տես՝ М. Ковалев-
ский, Законъ и Обычай на Кавказѣ. Томъ II., Егіазаровъ, а. а.
О. Томъ I. Եր. 120—136., Ад. Берже. Краткій обзоръ горскихъ
племенъ на Кавказѣ. Тифлисъ 1858 г.
2. Князь Тумановъ а. а. О. Եր. 84.
3. Сводъ матеріаловъ а. а. О. Եր. 127.

մանր համայնքներն: Յեղի կառավարելը կոչուում է էլբէկի—ժո-
ղովրդի գլուխ: Նա իւր կողմից համայնքներն համար նշանա-
կում է առաջնորդներ, որոնք կոչուում են ռուսպի և կախումն
ունեն գլխաւորից: Էլբէկին շատ յարգուած է. ամենքը նրան
հպատակուում են հլու կերպով. բայց նրա իրաւունքները բա-
ցարձակ չեն: Համայնքին, ցեղին վերաբերեալ բոլոր գործերը
նա է վճռում: Իւր ծառայութեան համար նա ստանում է
որոշ վարձատրութիւն. այսպէս հպատակները նրա համար փայտ
են բերում, նրա իրերը թափառելու ժամանակ ձրի կրում են,
ամուսնանալու ղէպքում մի եզ են տալիս և այլն: Աւելի թե-
թև գործերը վճռում է ռուսպին: Նթէ վերջինին վճռից գոհ
չեն, այն ժամանակ համայնքը կարող է ժողով գումարել և այդ
քանդել:

Նման կարգեր տիրում են և եղիզիներն մէջ: Եղիզիների
ցեղի գլխաւորը թէ հոգևորական է և թէ աշխարհական. կոչ-
ւում է շէյխ: Նրա ձեռքումն է ցեղի գլխաւոր գործերի կա-
ռավարութիւնը, ինչպէս են՝ պատերազմ՝ հրատարակել, խա-
ղաղութիւն կնքել և այլն: Երբորդ գլխաւոր անձնաւորութիւ-
նը էմիրն է, որը վարում է աշխարհական գործերը: Երկուսի
պաշտօնն էլ ժառանգական է:

Ներկայումս քրդերի, ինչպէս և միւս համայնքների մէջ
ցեղային կեանքը սկսել է տեղի տալ համայնականին: Ցեղերը
հետզհետէ բաժանուում են մանր համայնքներ: Այդ համայնք-
ները հետևեալ անուններն են կրում՝ օբ (օբա), զոմա, գու-
թան, բինա և այլն: Այս համայնքները անտեսական միութիւն-
ներ են և առաջ են եկել հետևեալ նպատակով.— զրոի յար-
ձակումներից, գաղութներից, աւաղակութիւններից պաշտ-
պանուել, արօտատեղիներ գտնել, ընդհանուր հովիւներ պահել
և այլն: Համայնքներն ունեն իրենց հողը, որը կոչուում է իւրդ:
Իւրդը հնումը պատկանում էր ամբողջ համայնքին. նրանից
օգտուել կարող էին ամենքն անխախտ: Ներկայումս շատ հա-
մայնքների մէջ իւրդը դարձել է մասնաւոր անհատների սեփա-
կանութիւն: Այս տեղի է ունեցել ինքնակամ զբաւումով. զօ-
րեղիները ճնշել են թոյլերին և այդպիսով հողն իրենց ձեռքը ձգել:

Առանձնապէս հետաքրքիր է այդ համայնքներից քրդական
«օբ» կոչուածը: Օբը անտեսական մի միութիւն, ընկերութիւն
է, որն առաջանում է մի հարուստ քրդի նախաձեռնութեամբ:
Օբի նպատակն է անտառների համար սնունդ ձարել և նրանց
խնամել: Օբի գլխաւորն է նրա նախաձեռնողը, որը կոչուում
է ազա, իսկ անգամները՝ գթում: Գլխաւորը մեծ յարգանք է
վայելում. նա է վճռում բոլոր գործերը: Նթէ նա ապօրինի

գործ է կատարում, օբը կարող է քանդուել: Նթէ գլխաւորը
մեռնում է կամ աղքատանում, այդ պաշտօնն անցնում է մի ուրի-
շին: Օբի անգամներն իրար հաւասար են: Օբը ունի իւր իւրդը
— հողը, որը համայնական է: Ունի և իւր համայնական հովի-
ները, որոնց վճարում են ընական բերքերով. այսպէս 100 ոչ-
խարից 4—5-ը նրանն է: Օբը կազմում է գարնանը և աշունն
էլ քայքայում է. իսկ եթէ ձմեռային տեղեր ունի, այն ժա-
մանակ մշտական է: Մշտական օբի իւրդը կազմում է համայ-
նական սեփականութիւն. մասնաւոր են շինութիւնները և
զբանց տակ գոմնուած հողը: Խոտատեղիները նոյնպէս համայ-
նական են. միայն ամեն տարի վիճակով բաժանում են իրենց
մէջ:

Ընդհանրապէս շատ հետաքրքիր է իմանալ, թէ հողերն
ինչպէս են բաժանուած թափառականների մէջ, և ինչպէս է
տեղի ունենում թափառականութիւնից նստակեաց կեանքին
անցնելը: Վժբախտաբար յայդ մասին ճիշտ ղիտողութիւններ
չկան:

Անդրկովկասի թափառականներն մէջ սովորապէս բոլոր
տեսակ հողերը, նոյնպէս և անտառները, ջրերը համարում են
Աստուծոյ պարգև, ամենքի սեփականութիւն: Նստակեաց դառ-
նալիս՝ անտառները, արօտատեղիները, խոտատեղիները թող-
նում են նախնական վիճակում, դարձեալ ընդհանուր սեփա-
կանութիւն են համարում, իսկ վարելահողերը բաժանում են
ընտանիքների մէջ: Ընձից յետոյ վարելահողերը նոյնպէս ընդ-
հանուր սեփականութիւն են դառնում, որոնցից օգտուել
կարող են նոյն իսկ համայնքին չպատկանողները: Բայց ընդհան-
րապէս, շնորհիւ ժողովրդի աճեցման և սակաւահողութեան,
հետզհետէ ամեն ինչ մասնաւոր է դառնում: Շատ համայնք-
ներում մի քանի ընտանիքներ գրաւել են ամբողջ իւրդը և
միւսներին կախման դրութեան մէջ ձգել:

Անդրկովկասի լեռնականների հողային պայմանների ու-
սումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ ընդհանրապէս համայն-
քի, ընդհանուր սեփականութիւն է կազմում այն հողը, որն
առանձին աշխատանք չի պահանջում, որի վրայ մարդկային
աշխատանք քիչ է թափուում, քիչ ծախսեր են արւում: Այդ
տեսակ հողերն են՝ անտառներն, արօտատեղիները, մարգա-
դետիւնները, խոտատեղիները և այլն: Նթէ վարելահողերի վրայ

1. Сводъ матеріаловъ а. а. О. Томъ V. ч. III. և Егиазаровъ
а. а. О. եր. 187—197:

ևս քիչ աշխատանք է թափուում, այն ժամանակ որոնք ևս համայնական են: Բայց սրբովհետև լեռնային մասերում վարելահողերը շատ քիչ կան, դժուար աշխատանքով, մեծ ծախքերի շնորհիվ են ձեռք բերում, այդ պատճառով էլ վարելահողերը ընդհանուր առմամբ համարում են մասնաւոր սեփականութիւն: Մասնաւոր են համարում առհասարակ ըստ այն հողերը, որոնց վրայ աշխատանք է թափուում, որոնց վրայ ծախքեր են արուած:

Այս իրողութիւնը գալիս է հաստատելու Մաուրերի այն տեսութիւնը, որ հողային սեփականութեան ընդլիցը կախումն ունի երկրի մակերևոյթի կազմութիւնից: Ըստ Մաուրերի ցեղային—համայնական հողատիրութիւնը աւելի բարեյաջող պայմաններին մէջ է հարթ տեղերում, քան լեռնային վայրերում, որտեղ տիրում է մասնաւոր, ընտանեկան սեփականութիւնը: Այսպէս է և Անդրկովկասում. լեռնային մասերում մեծ մասամբ տիրում է հողի մասնաւոր սեփականութիւն, իսկ հարթավայրերում՝ համայնական հողատիրութիւն:



Վ ր ի պ ա կ ց ե ր .

| տող երես | սխալ | ուղիղ |
|----------|--------------------------------|-------------------------------------|
| 5 5 | գիւղատնտեսութիւնը | գիւղացիութիւնը |
| 29 16 | 50 | 15 |
| 21 23 | վերջին | այդ |
| 2 25 | ընտանիքում | ընտանիքից |
| 30 43 | միանում | մեանում |
| 26 60 | մուսուլմանական հողերի մէջ | մուսուլմաններին մէջ |
| 23 63 | գլխաւորը | գլխաւորից |
| 16 69 | քիչ | շատ |
| 18 72 | երրորդ | երկրորդ |
| 61 | երեսում 21 տողի մէջ (ներքեկից) | բաց են թողնուած «ապրում են» բառերը: |

« Ազգային գրադարան



NL0203146

